



Բ Ա Ն Ի Ն

Զ. ՏԱԻ 1967 ՑՈՒՆԻՍ  
digitised by A.R.A.R.@

ԹԻԻ 6

پاكين  
 مجلة شهرية ، ادبية وفنية علمية  
 مدير المسؤول  
 السيد اوتين كارنيك فزانجيان

**PAKINE**  
 REVUE MENSUELLE  
 LITTÉRAIRE & ARTISTIQUE  
 Propriétaire  
 Dr. A. KAZANDJIAN

**Բ Ա Գ Ի Ն**  
 ԱՄՍԱԳԻՐ  
 ԳՐԱԿԱՆԱՆՈՒԹՅԱՆ  
 ԵՒ ԱՐԱՌԾՍԵՒ

ԿԱՌԻՋ ԽՄԱԳԻՐ  
 Կ. ՍԱՍՈՒՆԻ  
 ԽՄԱԳԻՐ  
 Դ. ՍՆԱԳԵԱՆ

ԽՄԱԳՐՈՒԹՅԱՆ  
 ԱՆՊԱՄՆԵՐ  
 Յ. ԳԵՂԱՐԳ  
 Յ. ՈՍԿՈՒՆԻ  
 Բ. ՓԱՓԱԶԵԱՆ  
 Կ. ՇԵԱԿԱՆ  
 Ճ. ԱՅԹԱՐԵԱՆ

ՀՈՄԱՅԻՆ ԱՆԳԱՄՆԵՐԸ  
 Դ ԵՒ ՊՅՈՍԵԱՆ

ԽՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՈՒՆ

**G. SASSOUNI**

Rue Solim Boustany, Beyrouth - Liban

Հեռագրային թիվ 296898

ԳՐՈՒԹՅԱՆ ՈՒՆԻՆ

- Լ. ԳԱՐՄԷՆ
- Ա. ԳԱՌՕՆԵ
- Կ. ՄԵՀԵԱՆ
- Վ. ՓԱՓԱԶԵԱՆ
- Կ. ՍԱՍՈՒՆԻ
- Յ. ՄԱՆՈՒԿԵԱՆ
- Բ. ԵՂԻԱԶԵԱՆ
- ՕՂԱՔԱՐ
- Ն. ԶԱՐԵՆՈՒՏԵԱՆ
- Ա. Ա.
- Բ. ՓԱՓԱԶԵԱՆ

.....

ԶՐՈՅՑՆԵՐ

ՄՇԱԿՈՒԹԱՑԻՆ ԼՈՒՐԵՐ

# Բագրու

ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒՐԵԱՆ Ե ԱՐՈՒԵՍՏԻ

Զ. ԵԱՐԻ, ԲԻԻ Զ

ՅՈՒՆԻՍԿՈՒ 1967

ԳԵՐԳՐԻՔ

ԼԵՒՈՆ ԳԱՐՍԵՆ

## Լ Ե Ր Ա Ն Շ Ո Ւ Ք Ը

( Կ Է Պ )



### Մ Ո Ւ Տ Ք

Հինգերորդ գիժումնազիրը գրած էր, եւ հիմա, սենեակին մէջ առանձին, կը սպասէր պատասխանին:

Անգործ էր:

Վասնից սիկարէթ մը: Երկու-երեք շունչ քաշեց: Չգայ ճանկատուք մը օտար-մտքին մէջ: Յիշեց՝ անօթի էր, Մարեց:

- Եթէ այս անգամ ալ չյաջողիմ, - ըսաւ ինքնիրեն:

Երեք ամսուան ընթացքին, հինգ անգամ կրկնած էր նոյն հարցումը:

Մտեցաւ սեղանին... կողք կողքի, իրար վրայ ինկած էին քանի մը հնամաշ եւ նոր գիրքեր:

Ժպտեցաւ:

Փորձեց կարդալ... վերցուց... Սարոյիանն էր: Ակնարկ մը նետեց գիրքին:

- Ապրելու համար անիկա օրական մէկ պատմուածք գրած է, - ըսաւ ինքնիրեն:

- Իսկ ե՞ս...

- Հինգ գիժումնազիր:



Ութերորդ Թաղամասի անշուք պան-գոկի մը սենեակներէն մէկուն մէջ, երկու օրէ ի վեր անգործ սուլայ մը՝ կիտա-

նօթի, կը սպասէր իր հինգերորդ դիմամանգրին պատասխանին:

Ամիսներ առաջ, բարձրագոյն վարժարանի ամսվերջի հանդէսին, կարգացած էր ասարտական ճառը: Ներկայ էին շատ մը Հայեր: Հանդէսէն ետք ջերմօրէն շնորհաւորած էին գինըը:

- Ուրախ ենք, շատ ուրախ...

Ներկայ էր նաեւ իր նահատակ զօր ընկերը՝ կօշկակար Յովհաննէսը, որ կեցած թովը, Հպարտօրէն կը նայէր շորոգին:

- Ա՛խ, Հայրդ ողջ ըլլար եւ տեսնէր այս օրը, - ըսած էր Յովհաննէս, արցունքները կուշ տալով:

Հանդէսէն ետք, վարժարանի տնօրէնը, Տոքթ. Սմիթ, հրաւիրած էր գինը գրասենեակ: Համբուրած էր ճակտէն եւ սեղմած ձեռքը:

- Կը շնորհաւորեմ սիրելիս, Հիմա արդէն յափառու ես: Դատարարակեցինք քեզ, մեր կարելին ըրինք, եւ այժմ վըտատօրէն կրնանք նետել քեզ կեանքի պայքարին: Քու գրահներդ են դատողութիւնդ, կրթութիւնդ, վկայականներդ եւ իմ յանձնարարականներս: Դըպրոցը Հպարտ է քեզմով: Այս պահուն վտահ եմ նսեւ, որ մեզմէ ընդմիշտ Հեռացած Միս Պէյքըրի Հողին եւս կը հըրճուի Հպարտութեամբ:

Յետոյ Տոքթ. Սմիթ բացած էր դըպրոցը եւ յանձնած իրեն չէք մը:

- Ահա Միս Պէյքըրի ի նպատակ քեզի ձգած գումարին վերջին մնացորդը, սիրելիս, Հաշուի մանրամասնութիւնները քարտուղարէն կը ստանաս... Ուրեմն ցտեսութիւն. մի մոռնար, որ դըպրոցին տիպար ուսանողն էիր, կ'ուզեմ որ ըլլատ նաեւ կեանքին տիպար մարդը:

Տոքթ. Սմիթ կրկին համբուրած էր ճակտէն եւ մտքորէն սեղմած Յովհաննէսի ձեռքը. եւ՝

- Կուտ պաշ Մտորը Երևանէս, Կուտ պաշ...

Ճ

Այդ դիմեր, կօշկակար Յովհաննէս վառել տուած էր տան բոլոր լոյսերը: Պատրաստած էր սեղանը: Պիտի խըմէին... է՛, ինք ո՞ր օրուան Յովհաննէսն էր:

- Կի՛ն, կէս ժամէն հիւրերը կույան, շուտ ըրէ:

- Գիտե՛ս ինչ, դուն իմ աղաւս ես, այս քու տունդ է, Հէ՛յ կիտի օրեր... ասլան Հայրդ Հոս ըլլալու էր... Աստուած Հողին լուսաւորէ, ուրի՛շ մարդ էր, ուրի՛շ... շուրպան էնոր Հերոս Հողուն:

Իր հա՞յրը: Որքան առեղծուածային էր այդ անծանօթ մարդը: Սէրէն աւելի յարգանք, պատկառանք կը զգար անոր հանդէսը:

Մէկ տարեկան էր, երբ կորսնցուցած էր զանոնք - Հայրն ու մայրը - : Ամբողջ քաղաք մը տարած էին մորթեւուն: Վերջին պահուն միայն, մայրը, խանձարուրին մէջ փաթթած, տարած էր գինը եւ յանձնած միտիոնարուհի Միս Պէյքըրին:

- Առ, պահէ՛... Եթէ վերադառնանք մեղի, եթէ ո՛չ՝ քեզի...:

Ձէին վերադարձած... Այսպէս կը պատմէր Միս Պէյքըր:

- Անոնք չվերադարձան, բայց դուն անոնց պէտք է որ մնաս, եւ ոչ թէ մեղի... մենք շատ ենք, իսկ անոնք քիչ:

Տարիներ, Միս Պէյքըրի Հեա, որպէս անոր որդեգիրը ճամբորդեց քաղաքէ քաղաք, երկրէ երկիր, մինչեւ որ Հասու Տիգրիսի ափին նստած՝ Միջուղեաքի հինաւուրց այս մայրաքաղաքը:

Օր մըն ալ, Միս Պէյքըր ուրախութեամբ յայտնեց, թէ նոյն քաղաքին մէջ Հաստատուած է նաեւ կօշկակար Յովհաննէսը, իր զօր մտերիմ ընկերն ու գործակիցը:

Յաջորդ օրը, Յովհաննէս եկաւ գինը տեսնելու: Ինք դեռ ամօթիւած պատանի մըն էր: Յովհաննէս արցունքոտ աչքերով համբուրեց գինը:

- Էյ վա՛խ, մեծ Հողեհի մը վերջին կայծը, սիրեմ ես էդ քո Հաստակը:

Յովհաննէս փորձեց համբուրել Միս Պէյբըրի ձեռքը, անիկա ընդդիմացաւ:

- Դուն սո՛ւրբ ես, Միս Պէյբըր, սուրբ, Քրիստոսի գործ է ըրածդ...

Առաջին հանդիպումէն ետք փնտռեց Յովհաննէսի ներկայութիւնը: Շարաթը քանի մը անգամ ան կու դար, մանրամասնութեամբ կը խօսէր դաղթէն, քաղաքէն... իր հա՛յրը:

- Թափառական մը, մոռցած հօրեանկան կալուածներն ու պարտէղները, զէնքը ձեռքին լեռները ապաստանած... կրակէ կրակ նետուող յեղափոխական մը... Սրիկաները կը սոսկային անոր անունէն: Ակոսայ կը կճրտէին, բայց ո՞վ կը համարձակէր դէմ կենալ անոր զընդակին: Բայց զալըմ է աշխարհը... Հուրիէթ... հայրդ վար իջաւ լեռներէն, դարձաւ քաղաքի մարդ... համարուեցաւ անօրէններուն հետ... եղբայր ենք պոռացին, ճառեր խօսեցան... քա՛նի քանի անգամ ըսի՝ այ մարդ, հեռացիր էս երբէն: հայրդ թէ, - չէ Յովհաննէս, դործը հիմա է որ սկսաւ, պէտք է ժողովուրդը պատրաստել, մինչեւ հիմա ըրածնիս ոչինչ էր, լեռները ապաստանած կը կռուէինք բռնակալութեան դէմ, կտրուած էինք մեր սեփական ժողովուրդէն: Հիմա առիթն է, միայն քառորդ դար մը ժամանակ տան, այն ատեն կը տեսնես թէ ինչ հրաշքներ կրնայ գործել մեր ժողովուրդը:

Յափշտակութեամբ կը խօսէր Յովհաննէս, ինք կը սիրէր լսել դայն, կարծես թէ հօրը հեռաւոր ու անձանօթ մէկ արձագանգը ըլլար այդ պարզ, անսեթեթ մարդը:

Հետզհետէ իր մտածումին մէջ Յովհաննէսը բարձրացաւ, բարձրացաւ եւ հասաւ Միս Պէյբըրի պատուանդանին:

Բայց կեանքը ուղեց որ ինք առանձին մնար Յովհաննէսին հետ:

Միս Պէյբըր զգաց՝

Կանչեց Տոբթ. Սմիթը, Ամերիկեան Պատկաւոր Արուեստից վարժարանի տընօրէնը եւ յանձնեց անոր տարիներու իր ամբողջ խնայողութիւնը:

- Այս դուժարով կը պահես, կը դաստիարակես տղաս: կը հսկես անոր վրայ այնքան ատեն, որքան դեռ չէ ամրացած, դօտեպնդուելի ետք, ալ դիւրին է... շմոռնաս, պատասխանատու ես Ասածոյ առջեւ:

Փառաշուք էր Միս Պէյբըրէ յուզարկաւորութիւնը: Օտարներէ աւելի հայեր ներկայ էին:

Տոբթ. Սմիթ, յուզուած խօսեցաւ դամբանական մը, դրուատեց Միս Պէյբըրը, որպէս բարձր ջրիստոնեայ կին. որպէս մեծ բարեգործ, դարձաւ ներկայ հայերուն եւ ըսաւ.

- Հայի՛ր, այս կինը աւելի հայ էր, քան ամերիկացի:

Յետոյ խօսեցաւ գործիչ Վահրիճեանը: Պատմեց թէ ինչպէս դժոխքի օրերուն, Միս Պէյբըր, իր գերագոյնը փորձած էր գաղանի ճիրաններէն զոհեր խլելու, թէ ինչպէս անիկա հայու մը հարապատութեամբ կը խօսէր հայերէնը, ապա Վահրիճեան զլուխը հակելով վերջացուց.

- Մենք, միշտ եւ միշտ պիտի յիշենք մեր մեծ բարեկամուհին:

Յովհաննէս բարձրաձայն լացած էր այդ օրը:



Սեղանին շուրջ բոլորուած էին տասնեակ մը երիտասարդներ: Պատուոյ տեղը նստած էր Վահրիճեանը, աջին՝ ինք, ձախին Յովհաննէսը:

Կը խօսէին, կ'աղմկէին... երգերն ու բաժականձառերը հրթիռներու արագութեամբ իրարու կը յաջորդէին:

- Կի՛ն, գինի բեր, գինի, ո՞ր օրուան կը սպասես:

Պահ մը տիրեց լռութիւն: Բերանները դամուեցան, ժպիտները քարացան: Յովհաննէսն անպամ վար առաւ ձեռքը՝ իր թաւ պեխերէն:

- Ընկերներ, մեր սիրելի Յովհաննէսին պատրաստած այս սեղանը ի պատիւ մեր սասմոքներուն կամ թէ կոկորդներուն համար չէ, այլ այս համեստ

սենեակին մէջ հաւաքուած ենք ոգեկոչելու յիշատակը մեր նաւատակ մեծ ընկերոջ՝ Մարտիկեանին, տխուր ենք եւ ուրախ... տխուր ենք մեզմէ ընդմիջահոսացող նաւատակ Մարտիկեանին համար, ուրախ ենք մեր Հերոս ընկերոջ միակ զաւկին՝ Մարտիկին ներկայութեամբ, որուն շունչին մէջ կ'ապրի շարունակութիւնը նաւատակ Մարտիկեանի շունչին: Վասն եւ, որ երիտասարդ Մարտիկը պիտի քայլէ մեզ հետ... պիտի քայլէ իր Հերոս հօրը դժած ճամբայէն... կը կրկնեմ բանաստեղծին խօսքը եւ կ'ըսեմ — «Դու պլախ է քի հօր գաւազը լինես»:

Բարձրացան բաժակները: Պարպուկեան: Դու բացազանութիւններով, կեցցէններով թնդաց սենեակը:

Վահրէճեան ոտքի էր, կը ժպտէր, ներկաները լռեցին, անիկա դեռ չէր վերջացուցած:

— Ես վերջացուցի, — ըսաւ Վահրէճեան, — միայն առ ի գիտութիւն ըսեմ, որ այսօր արդէն, ուր որ անկ էր գրեցի եւ կը յուսամ դրական պատասխան մը ստանալ, մէկ թէ երկու ամիսէն:

— Ի՞նչ էք գրեք, ընկեր Վահրէճեան, — ձայնեցին ներկաներէն ոմանք:

— Երիտասարդ Մարտիկի մասին, պէտք է որ ան մեկնի Եւրոպա, շարունակելու իր ուսումը: Դարը մասնագէտներու դար է: Մենք պէտք ունինք մասնագէտներու՝ մեր վաղուան պայքարներուն եւ նուաճումներուն համար:

— Կեցցէ՛ Վահրէճեանը, — պոռացին ներկաները:

Յովհաննէսը տատանուելով ոտքի ելաւ:

— Կ', Վահրէճեան, թող որ Համբուրեմ ճակատը, թէ որ էս մէկը ըլլայ, եւ վստահ եմ որ կ'ըլլայ, էն վախտը մենք բոլորս ալ...

Վերջին խօսքը տունն իրեն, հիմա չի մեղք թէ էնչ ըսաւ, միայն կը յիշէ այն բարձրաձայն խնդուքը, երբ ըսաւ թէ էնք նիւթապէս ի վիճակի չէ շարունակելու իր ուսումը: Բարձրացող աղ-

մուկին ընդմէջէն Վահրէճեանն էր, որ ուսին զարնելով ըսաւ.

— Դուն մի մտածեք... կը կարգադրենք, միայն թէ դուն էն հօր գաւազը լինես:

Տ

Մասնահարեցին դուռը:  
— Բացէ՛ք, նամակ ունիք, — պանդուկ սպասեակն էր:

Նննթի պէս ցատկեց: Ուժգին շարժումով բացաւ դուռը: Սկից նամակը: Հինգերորդ դիմումագրին պատասխանն էր:

«Լինել թէ չլինել... ահա միակ հարցը... Այո՛, այո, պէտք է լինել, պէտք է լինել»:

Պատեց նամակը: Կարգաց: Նաւթային բնկերութեան առաջին քարտուղարը կը հրաւիրէր գինջը, տեսակցութեան մը համար յաջորդ օրը ժամը տասին: Յաջողած էր, իր հինգերորդ դիմումագրերը յաջողած էր:

— Յաղթանակի դիշերն է այս ատենական:

Յաջողած էր...  
— Հարս, եղ լեցուր ճրագին...  
Յաջողած էր  
— Եղ լեցուր, եղ լեցուր...  
Յաջողած էր... Հա՛րս, շատ լեցուր, շատ լեցուր:  
— Կեցցէ՛ յաղթանակը եւ բոլոր եղ լեցնող հարսերը:

Տ

— Բարեւ մեզ:  
— Բարեւ, նստեցէ՛ք, վայրկեան մը: Առաջին քարտուղարը վտոնց սիկարէթ մը, հաղաց, կրկին հաղաց:  
— Գիտէ՛ք, սիրելի բարեկամս, ես կարեւիս ըրի, բայց...  
— Բա՛յց... բայց չէ՞ որ դուք ըսիք թէ միայն ես յաջողած եմ քննութեան մէջ:  
— Այո, այդ ճիշդ է, բայց մի մոռնա՛ք, որ քննութիւնը քերականութիւն է:

Ամէն ինչ ընդհանուր կառավարչին բարեացակամութենէն կախում ունի:

- Տնօրէնի՞ն:

- Այո, տնօրէնը նախապատուութիւն տուաւ ձեր հետ քննութեան մասնակցող հրեայ օրինորդին, շատ կը ցաւիս. բարեւնեբա Տոքթ. Սմիթին. իր յանձնարարականը կը պահեմ մօտս, եթէ օր մը դարձեալ պէտք ունենանք պաշտօնեայի մը՝ կը տեղեկացնեմ ձեզի, ուրեմն ցտեսութիւն... եթէ կոնակ մ'ունենայիք տնօրէնին քով՝ կը յաջողէիք, բայց ինչ որ է, յաջորդ անգամ:

Տ

- Կ'յ, ուղարութիւն, դին՝ վ ես ինչ:

Ինքնաշարժ մը պոռայ կոնակէն: Ցատկեց մայթին վրայ: Շունչ մը քաշեց:

Պանկին տակ անկիւն մը՝ ապակիներ փչրուեցան:

Պանկին տակ՝ հովը ուժգին ապտակով դուռ մը գոցեց:

Պանկին տակ ուրիշ անկիւն մը՝ կով մը, իր թրիթի հսկայածաւալ կոյտին տակ թաղեց նուրբ մանիշակ մը:

Ինք դեռ կը քալէր...

Ուղեղին մէջ կը նուազուէր զնայոյտ Տանուպը:

Ճեթ կոնակ մ'ունենայիր՞ը զըրկած էր շնորհիւն ձեւականութիւնէն, եւ վայտի հեզասահ կ'առնէրուն անձնատուր՝ կը դառնային, խենթօրէն կը դառնային:

- Ճամբայ, քո՞ւն ես թէ սրբուն:

Ցատկեց, Թէքս սինէմային առջեւ հասած էր արդէն: Յուցատախտակին վրայ, փոռած սաւանի մեծութեամբ կարծիր ափիւր պոռայ երեսին.

- Մէկ միլիոնոց սրունքներ...

- Այս դիշեր, ժամը 7-էն սկսեալ...

Պանկին փլաք-փոքիւն վրայէն ճեթէ կոնակ մ'ունենայիր՞ը զըրկած իր էզը՝ փախաւ լեղապատտո:

Փչրուեցաւ զկայոյտ Տանուպը:

Փլաք-փոքիւն վրայ ցատկեցին զոյս մը կանացի սրունքներ՝ մերկ եւ սլացիկ եւ սկսան դառնալ, դառնալ... Մէկ միլիոնոց սրունքներ, շոյելու, գոռելու, համբուրելու եւ յետոյ, եւ յետոյ, կը լսէ՞ք, երկուսանի կոտորաւորներ, կը լսէ՞ք...:

Պանկեց դրպանները: Պրպոնց բոլոր մութ անկիւնները: Հաւաքեց: Ամփոփեց եւ դումարեց - մէկ օրապահիկ, ընդհանուր եւ վերջական գումար՝ մէկ օրապահիկ... եւ մէկ միլիոնոց սրունքներ:

Մտաւ սենեակը:

Բացաւ դըրոցը: Քաշեց հինգերորդ դիմումագրին պատճէնը եւ պատուեց:

= Տոքթ. Սմիթը, - ան կ'ըսէ՝ վկայականներդ, վարքդ եւ կարողութիւնդ՝ միակ դրահներդ են: Գտնուելու դուրս ես, կուսէ եւ պիտի յաղթես:

= Յովհաննէ՞սը, - ան կ'ըսէ՝ հոպիս, իմ սեղանը քունն է, եկ միասին ապրինք, տեսնեք ի՞նչ կ'ըլլայ:

= Վահրէճեա՞նը, - ան կ'ըսէ՝ ափսոս սիրելիս, ափսոս, անպիտան այս պատերազմը խանդարեց նրազիբս, հիմա ներսպա էիր, ներսպա, բայց հող չէ, կ'աշխատինք բան մը կարգադրել պատերազմէն ետք:

= Հերոս հա՞յրը... Հերոս հա՞յրը... բայց մինչեւ ե՞րբ քալել հերոս հօր ուղեբով, մինչեւ ե՞րբ ապրել անտր դրամագլուխով, մինչեւ ե՞րբ:

- Հերոս հա՞յրը...

Բայց սայլին վրայ արիւն եւ սուղ րեոցեր են...

- Հերոս հա՞յրը...

Ախ հա՞րս, ճրագդ մարէ՞...

Պարոն կառավարչիւր նախապատուութիւնը տուած է օրինորդին, որովհետեւ օրինորդը ունի ցցուն ստինքներ եւ հարուստ սրունքներ... մէկ միլիոնոց սրունքներ:

ԱՌՈՒՋՈՒՆ ՄԱՍ

1.

Ձայնը կու գար խորունկէն, չոր ու կտրուկ:

Առանց ելուէջներու, միօրինակ եւ անհրապօր:

Փայտի մը պէս չոր էր այդ ձայնը, այնպէս ինչպէս դէմքը մարդուն, որ կը փորձէր բացատրել ինքզինքը, իր ապրումներն ու մարդկային տկարութիւնները, այդ չոր ու կտրուկ ձայնով: Այդ անհրապօր ձայնով:

Վայրկեանները սահեցան: Մահեցան տարիները ու դարը անորոշ քայլերով կը մտնեար իր առաջին յիսնամեակին:

Բորբեց նաեւ իր առաջին երիտասարդութիւնը՝ տէրը այդ կտրուկ ու անհրապօր ձայնին:

Մօտ էր հասունութեան դազաթիւն, ուրկէ պիտի սկսէր անխուսափելի վայրէջքը, անսկիւր: Եւ անվախճան՝ անխորտիր բոլոր մարդերուն համար:

Անցած էր 30-ի սահմանադէն: Կը քայլէր դէպի 35-ի դուռները, անկէ ալ 40-ի, 50-ի:

Կեանքը, ինչպէս կեանքը բազմահազարներու, սահած էր ընկալեալ ու սովորական ճամբաներէ: Ետքի մը խաղն էր եղած անոր կեանքը, երկարող եւ կարճցող շուքի մը, առանց սեփական դրօշմի, առանց սեփական կաղապարի:

Բայց ինչո՞ւ այս տողերը վէպ մը սկսելու համար: Վէպ մը, որ պիտի պատմէր կեանքն ու հոգին խումբ մը մարդոց:

Նախ ինչո՞ւ դրել անոր ձայնին մասին: Չոր ու անհրապօր այդ ձայնին, երբ տէրը անոր երգիչ մը չէ եւ ոչ ալ երաժշտութեան հետ որեւէ աղերս մ'ունի անոր կեանքը:

Երբորդ կարգի ճամբորդներուն հետ, անկիւն մը նստած չոր ու կտրուկ ձայնով կը խօսէր մարդը, իր մարդկային մեղքերուն մասին, մինչ շոգեկառքը դանդաղ դնացքով մը կը մագլցէր լեռան կողմն ի վեր, իր երկաթէ ակունները ամ-

բորէն նետելով զուգահեռական գիծերուն վրայ:

- Դանդաղ է վերելքը, - ձայնեց ալ անկիւնէն մէկը, որ երկար ատենէ ի վեր լուռ կը հետեւէր թեւեր բացած խօսակցութեան:

- Ինչպէս բուր հաստատ ու ապահով վերելքները, - պատասխանեց Ջաւէն կամ տէրը՝ չոր ու կտրուկ ձայնին:

Շոգեկառքը կը բարձրանար ուղտի մը դանդաղութեամբ: Վարը, ձորին մէջ կը պլպլային աղօտ լոյսերը գիւղերուն, իսկ վերը՝ լեռան լանջն ի վեր ելնկարական լույսերու շղթան, մեղմ երանգաւորումներով կը հասնէր մինչեւ լեռան դազաթը:

- Տարբեր բան է գիւղերը, - ըսաւ Ջաւէն, վառելով սիկարէթ մը:

- Մարդիկ երեսունէն վերջ չեն խօսիր գիւղերուան կամ բնութեան մասին, կրկին ձայնեց ալ անկիւնի մարդը:

- Մարդիկ միշտ ալ կը խօսին, երբ զուրկ են մեծ ու ցեցող ապրումներէ, երբ անոնց առօրեան նման է մարմարեայ սալալատակի մը՝ անոնք միշտ ալ կը ցուան, ինչպէս մենք, որովհետեւ ցուրտ ու ցամաք մարմարը միշտ ալ կը փայլի... Ի՞նչ է տարբերութիւնը մեր եւ ցուրտ ու ցամաք մարմարին:

- Հաճոյքի վայրերուն մէջ կը չըրճելու կուշտ անասունի մը պէս, իսկ հոս դարձեր ես փիլիսոփայ, - ըսաւ Սեփուհի՝ Չղուտ երիտասարդ մը, որուն շունչէն կը բարձրէր ալքուի բարկ հոտը:

- Միշտ այսպէս է... օր մը քաղցեանի, յաջորդ օրը յեղափոխական՝ արտառոց դաղափարներով: Օր մը որսորդ՝ բողբոջներու մէջ եւ օր մըն ալ յանկաթծ, երբ տուն ու տեղ ձգած կ'երթանք Ժանր աշխատանքի՝ կը դառնայ փիլիսոփայ, դժգոհ կեանքէն, ինքզինքէն եւ մեր ապրած առօրեայէն:

- Դո՛ւն, եթէ լուռ կը դառնա աւելի տպաւորիչ... չեմ կրնար հանդուրժիլ հեռուորական այդ ձայնիդ:

- Իմ ձա՞յնս, խենթ, լուր չունիս, որ օճահամալի տիտղոսին արժանացած է ան, ոչ թէ քեզի պէս անտաշներու կող-



մէն, այլ բիւրեղացած, աղնուական մար-  
զոց կողմէ:

- Նորէն դասակարգային հարց:  
Մօ, եթէ քննելու ըլլամ բոլորիդ պա-  
պերն ու պապերուն պապերը, կա՛մ իսա-  
նարած են կամ խանութպան եւ կամ  
շատ-շատ ասուխտավանտ, ո՛ւր է ձեր  
աղնուականութիւնը, ո՛ւր...:

- Ենդրեմ, իմ մեծ հայրս մեծ կալ-  
ւածատէր եղած է, դեռ յիսուն տարի  
առաջ միտնի:

- Դուն լու՛ն նախ, դուն մեզմէ չես  
Անթուն: Դուն տեղացի ես, յետոյ եթէ  
կ'ուզես խօսիլ, ըսէ ո՛ւր հայեցան մեծ  
Հօրդ կայրուածները, որոնք կ'ըսես թէ  
անսահման էին:

- Նախ ըսէ ո՛ւր մնաց քու մեծ Հօրդ  
կայրուածները:

- Իմ մեծ Հօրս... անկա հովի-  
էր կ'ըսեն, ինձի Համար մեր անձանօթ  
լեռներուն վրայ... անկա իմ տարիքիս  
Հայր էր չորս դասակներու, կը հասկը-  
նա՞ս Անթուն Պէկ, դուն խօսէ քու աղ-  
նուական մեծ Հօրդ անսահման կայրուած-  
ներուն մասին, ո՛ւր հայեցան անոնք:

- Մեծ մօրդ պորտին վրայ, - ըսաւ  
Անթուն պայրպած:

- Անթուն, Հոգիս, ձգէ մեծ մօրս  
Հօղ դարձած պորտը: Քու եւ մեր աղ-  
նուականութիւնը Հալած է այնպէս, ինչ-  
պէս, Աստուած Հոգին լուսաւորէ, քու  
պապուդ կայրուածները... Դուք բոլորդ  
ալ մուկեր էք, ես ալ մէջը անշուշտ,  
բայց կեցցէ գիշերը, ան իր լուսիկեամբ  
աւելի իմաստուն է, քան ձեր բոլոր լեզ-  
ւի խօսքերն ու շատախօսութիւնները:

- Աւագանի անունդ պահէ քեզի, մի  
փորձեր փոխանցել ուրիշներուն...

Այս խօսակցութիւնը տեղի կ'ունե-  
նար գարնան դիշեր մը, երբորդ կարգի  
կառաչարներէն մէկուն մէջ: Վայրա-  
շարժը դեռ կը քերէր լեռան կողերը ու  
կը մագլցէր վեր:

Անոնք, երէք Հոգի էին՝ երկու հա-  
լեր եւ արար մը: Կ'երթային Միջագետ-  
քի Հիւսիսային շրջանի լեռներուն մէջ  
կառուցուող Տոջանի մեծ Զրաթումբի  
աշխատանքներուն:

Պատերազմէն ետք, երկիրը ցանցը-  
ւած էր մեծ շինարարութիւններով: Նա-  
թային նոր գոտարաններ, բաղմաթիւ կա-  
մուրջներ, ճամբաներ, մասնաւորաբար  
Տոջանի Զրաթումբը, ուր հազարի կը  
հասնէր հոն աշխատողներուն թիւը՝ ար-  
հեստագործներ, երկրաշիններ, բանուոր-  
ներ, հաշուապահներ, գրադիրներ... շա-  
տեր ձգած էին մայրաքաղաքն ու անոր  
սահմանափակ վճարումները եւ կը փո-  
թային Տոջանի ճոխ ամրավճարումնե-  
րուն:

- Որքա՞ն մութ է դուրսը, - ըսաւ  
Յակոբ, աջ անկիւնի մարդը:

Ձաւէն լուռ էր: Քիթը փակցուած  
էր կառաչարի պակիթին ու նայուածքը  
դամած հեռուներուն:

- Կը զգա՞ս Ձաւէն, օդին, մթնո-  
լորտին փոփոխութիւնը: Հարաւէն հիւ-  
սիս... կարծես տարբեր աշխարհ մըն է:

- Վաղը առաւօտեան հաղիւ թէ  
հասնինք Տոջան: Գիտե՞ս Յակոբ, թէ  
Ձալրոս լեռան միւս լանջին ի՞նչ փըռ-  
ւած է:

Անթուն արդէն կը մրափէր: Խօսակ-  
ցութիւնը վերածուած էր հայերէնի:

- Ընչդ է Ձաւէն, որ Տոջանէն ու-  
ղիդ դիժով, լեռներու ճամբով, լաւ եւ  
վարժ քալող մը՝ հետիոտն կրնայ երեք  
կամ չորս օրէն հասնիլ Տայոց աշխարհի  
սահմանները:

- Ձե՞ս կարծեր Ձաւէն, որ մթնո-  
լորտի եւ օդի այս թեթևութիւնը՝ մեզի  
անձանօթ այդ աշխարհէն կու գայ:

- Գոնեակի շէջը քո՞վդ է: Բաւա-  
կան ցուրտ է: - Ձաւէն հեռացուց ակնաբ-  
կը պատահանէն եւ դարձաւ Յակոբին  
կողմը:

Ձաւէն բացաւ խցանը ու շէջը քա-  
լեց գլխուն, յետոյ թեղանիքով արեց  
բերանը:

- Խմէ՛ դուն ալ, ցուրտ է:

- Մօ արջ, ասանկ խմե՛լ կ'ըլլայ,  
չի՛ր պիտի վերջացնես:

Ձաւէն չպատասխանեց: Մնաց լուռ:  
Յակոբ քանի մը անգամ եւս փոր-  
մեց խօսեցնել դայն, բայց անոր ակնաբ-

կը միշտ ալ մնաց գամուած ապակիէն զուրս:

- Միշտ այսպէս ծայրայեղ ես... կամ մրցանիչներ կարող՝ շատախօսութեան վարպետ եւ կամ քարի պէս լուռ ու անհաղորդ:

- Ի՞նչ խօսիմ...

- Խօսիր Տոբանի մասին: Ծի՛ղզ կ որ ան այդքան մօտ է Վասպուրականին:

- Վա՛րիճեանին հարցուր, ան գիտէ Հայոց այլաբանին, մանաւանդ Վասպուրականին ուր ըլլալը:

- Երբէ՞ն սկսար...

- Լա՛ւ, կը լռեմ:

- Զէ, խօսէ, բայց մարդու պէս:

- Ինչո՞ւ մենք մարդ ենք:

- Երբէ՞ն սկսար, լաւ մի խօսիր, - ու Յակոբ ումպ մը քոնեակ խմելէ ետք, վեր բարձրացուց վերարկուն օձիքը ու կծկուեցաւ իր անկիւնը:

Կը յատանար գիշերը: Կը յատանար եւ շոգեկառքը: Իսպառ էր անոր հեքուտ մազլցումը: Հիմա ան լեռան կողին հետ զուգահեռական կը սուրբար՝ ոչոր առ ոչոր բարձրանալով՝ լեռան զագաթին: Վարը ձորին մէջ փռուած գիւղերու լոյսերը տակաւ առ տակաւ կը մարէին:

Հեռուն լեռներէն անդին կը քալէր առաւօտը՝ դանդաղ քայլերով:

Պորունկ լրութեան ընդմէջէն վայրաշարժին սուլոցը, իւրաքանչիւր ոլորտայտոյտ դարձուած քի անկիւնը՝ կ'երթար հեռուն, կ'անցնէր կիրճերէն ու կը նօսրանար հեռուցեալ վարը՝ բացաստաններուն վրայ:

- Մարտիկին գրեցի՞ր մեր մասին:

Յակոբ կը քնանար, Զաւէնի ցած ձայնով հարցումը զարնուեցաւ կառաչարի գոց պատուհաններուն ու վերադարձաւ ետ՝ իրեն:

Զաւէն վերցուց քոնեակի շիւք ու խոշոր ումպ մը առնելէ ետք նայեցաւ անոր: Շիւք պարպուած էր կէսէն աւելի:

Ինք եւս վեր դարձուց վերարկուն օձիքը եւ կծկուեցաւ իր անկիւնը՝ սիկարեթ մը վառելէ ետք:

2.

Արձակուած էր վերջին զնդակը.- Օգի՞, ցամաքի՞, թէ ծովերու վրայ - այդ զժուար է ճշդել:

Բանակներ կանչ առած էին հոն, ուր որ էին: Ի՞նչ էին վար շատ մը սքրօլակներ, անոնց տեղ բարձրանալով նորերը՝ տարբեր գոյներով, տարբեր հողիներով:

Պաղարկութեան աղաւնին վերադարձած էր Նոյեան Տապանը, այն տարբերութեամբ միայն, որ 20-րդ դարու աղաւնին, հակառակ իր երկար թափառումներուն, շէր կրցած գտնել ձիթնիթի ճիւղ մը, որպէս խորհրդանիշ քաշուող շուրերուն:

Բայց աղաւնին վերադարձած էր եւ կարեւորը բոլորին համար անոր վերադարձն էր:

Արձակուած էր վերջին զնդակը...

Փախստական արքաներ, նախաբորներ, սեւ ու ճերմակ... Ժամանակին ձանձրոյթը ծամելէ, յորանջելէ ետք, Ուստ Մինստըր Ապէի շուրջ բուրմնաւէտ սիկարեթներ ծխելէ եւ սքովտիական ուիւքի խմելէ ետք, մէկ առ մէկ յաղթողի ժպիտով սկսած էին վերադառնալ իրենց կորսնցուցած գահերուն կամ աթոռներուն:

Կը վերադառնային նաեւ անոնց ազգականներն ու զարմիկները՝ ամերիկեան առգմիկի բարձրորակ զգեստաւորումով, իրենց արքաներուն կամ նախարարներուն հետ, որպէս ազատարար բանակ:

Արձակուած էր վերջին զնդակը:

Յաղթական Բաղրամեան Պերլինի մէջ, այսինչ թիւ կամ այսինչ թիւ փողոցը ըրած սահմանազուլիս, սեղմած էր մեռքը ձոնի մը, Զաւիի մը կամ Ժորժի մը:

Ալեգարդ բռնառատեղծ մը, արգի Հայ գրականութեան Նահապետի ծիրանին ձգած ուսերուն, մոռցած ՇորենՀաուլըն ու Նիցչէն, Արտիմանի պողոտայէն Հայրենադարձի կոչեր կ'արձակէր՝ Ալադ-

ևադի մանկներուն զողջութեամբ եւ յուզումով :

Կարժիր պոէտներ՝ մեծ ու պոետիկ, երկեսո, մոտցած շրջաբերականներն ու պարտիան, կոլխոզն ու թրակտորը կամ կոմիտեերն, կը հնչեցնէին իրենց հայ մարդու տաք սրտերուն՝ տաք եւ ապրող երգերը :

Այս թուղթերն մէջ - ուղի, ցամաքի կամ ծովերու վրայ վերջին արձակած գնդակին հետ, կեանքը Միջին Արեւելի մէջ, ուղտի դանդաղութեամբ կը քալէր, եւ դրժիկ կեցած էր հոն, ուր որ էր առաջին զննակը արձակուած պահուն :

Միակ նորութիւնը, կառուցուող ջրաթումբերը, կամուրջներն ու նոր ճամբաներն էին, եւ դրամի առատութիւնը այս ճամբաներուն վրայ :

Մարտիկ եղած էր առաջիններէն, որ ձգած էր մայրաքաղաքը եւ դացած Տոքանի ջրաթումբի շինութեան աշխատանքներուն : Դարձած էր արդէն հոն՝ գետեղուած մարդ մը, այդ խոռոչարանին մէջ, ուր միջազգային համաժողովէ մը աւելի այլազան դունաւորումներով իրար թով եկած էին դանազան ցեղեր - եւրոպացիներ, արաբներ, չիւրտներ, հնդկներ, ասորիներ, պարսիկներ եւ անշուշտ հայեր :

Կար մարդու պահանջը. Կու գային ալէն, ձախէն, մասնազէտներ, թարգմաններ, բանուորներ, մեքենազէտներ, արհեստաւորներ, ինչ որ կը պահանջէր ջրաթումբի մը շինութիւնը :

Մարտիկ այս երկրորդ տարին էր, որ կտրած էր ինքզինքը մայրաքաղաքէն՝ վճռական եւ ամուր որոշումով մը :

Պիտի մեայ հոն մինչեւ ջրաթումբին աւարտումը : Անոր միակ բաղձանքն էր, որ ջրաթումբի շինութիւնը երկարէ՛ր, երկարէ՛ր... դառնար տնկերջանայի... դառնար յաւիտենական : Տոքանի հովիտը, Տոքանի բարբարոս կիրճը, ուր կ'աշխատէին հարիւրաւոր բանուորներ դետին ընթացքը փոխելու : Գիրճին միջոցաւ զսպելու անոր դարձանային յորդումները, փրկելու համար մերձա-

կայ դիւղերն ու աւանները՝ ողողածէ - վերածուած էին արդէն առանձին աշխարհի մը, անկախ պատերազմի օրերուն ծնած մեծ յոյսերէ, անկախ պատերազմի օրերուն ծնած մեծ յուսախաբութիւններէ... Տոքանը, հովիտն ու կերակը, դեռ զարձած էին առանձին աշխարհի մը, կտրուած 20-րդ դարուն հանրապետիկ եւ այդ աշխարհին մէջ, Մարտիկ, կտրուած էր հայ-մարդուն միտքն ու հողին խաբողոցող հազար ու մէկ մը տաւաղութիւններէն :

Շարք մը առաջ էր միայն, որ մայրաքաղաքէն հասած էին իր ընկերներէն Զաւէնը, Յակոբն ու Անթուրը : Անոնց ժամանումը թի՛ ուրախացուցած եւ թէ տիրեցուցած էր Մարտիկը : Անոնք իր մտերիմներն էին, կու դային մայրաքաղաքէն, կու դային Յովհաննէ-սի թովէն... բերած էին իրենց հետ կոշկակար Յովհաննէսի տաք համբոյրները, բերած էին իրենց հետ վաւերական տխուր ժպիտը... անոնց հետ կառուարէն վար իջած էր նաեւ մայրաքաղաքը, իր ամբողջութեամբ, իր աղօս եւ պարծառ լսյներով, իր մթութիւններով, իր պզտիկ ու մեծ մասնագութիւններով : Անոնց ժամանումը թէ աւրախութիւն մը եւ թէ տիրութիւն մըն էր Մարտիկին համար : Տխուր էր, որովհետեւ ան այդ լեռներուն վրայ, մոռցած էր ամէն ինչ... կ'ապրէր ինքնամփոփ, ճիշդ է նաեւ միօրինակ կեանք մը, սակայն հանդարտ էր միտքը... անոնց ժամանումը մասամբ խախտած էր, իր ծոռաւոր, ինքնամփոփուելու խարիտները :

Երբ թով, երբ վայրի անասուններուն նման վար ցատկած էին շողեկառքէն, համբուրած Մարտիկը եւ զնդապրային արագութեամբ սկսած էին խօսիլ, պատմել մայրաքաղաքէն, յանկարծ Անթուրը, թէ՛

- Գայէս օր մը առաջ հանդիպեցայ Իսամինին, լաւ բարեւէ Մարտիկին :

- Միայն բարե՛ւ, - հողել բերանը բացած էր Յակոբ, - երբ Զաւէն կտրեց անոր խօսքը :

- Լուէ՛ յիմար, - բացազանջութեամբ :

Անցաւ շփոթը... սակայն Անթուհի բերած պզտիկ բարեւը դեռ կը մնար առկախ օդին մէջ:

Եսամին...

Կու գար ան ջիղհերու ու արեան ճամբաներէն:

Մարտիկ իր առաջին երիտասարդութեան փթթումին հանդիպած էր անոր, Մարտիկ, պատերազմի սկզբնական օրերուն էր, որ տեսած էր Եսամինը: Ան մայրաքաղաքի ծանօթ երգչուհիներէն էր՝ խանդավառող մասնաւորաբար զինով ամբոխը: Այդ հանդիպումին դիտարկածի կամուրջը եղած էր Տիասը, Մարտիկի տեղացի ընկերներէն մին: Տիասը կեանքի մէջ յաջողած տղայ մըն էր, Մարտիկի դասընկերներէն... առնական եւ բացօթի, իր ցեղը յատկանշող վայրուղ, բայց ազնիւ դիմերով, իսկ Եսամին արեւելքի ըմբռնումով արուեստապետուհի մը - քիչ մը երգչուհի, քիչ մը պարուհի եւ քիչ մը ամէն ինչ: Առաջին օրերու պարզ հանդիպումները աստիճանաբար սկսան խորանալ եւ ճզմել Մարտիկի հոգին, միտքը: Եսամին հակառակ իր սպորտ կնոջ մը բոլոր առակութիւններուն, սկսած էր փնտռել Մարտիկի ներկայութիւնը, մասնաւորաբար երբ կը պատկէր ուրիշներու հետ... ուզած էր Մարտիկը ըլլայ միշտ ներկայ, ըլլայ իր հետ, մասներով խօսէր իր մարմինն հետ կամ նոյն սենեակին մէջ նստէր իր քովը, առանց հպումի, առանց մեղքի շողը աչքերուն, պարզ որպէս բարեկամ, նստէր ու խօսէր աջէն ու ձախէն:

Եսամին այս մասին արտայայտուած էր իր մտերիմներէն՝ Տիասին:

Տիասը հեղնող ու կծող, չէր հանդուրժած Եսամինին:

— Զո՛ւ՛՛ այդ տղուն: Մի փորձեր անոր հետ մուկի ու կատուի խաղերը:

Ատեն մը ամէն ինչ կարծուած էր կատակ: Ժամանակաւոր եւ վաղանցուկ մէկ քմայքը աղկան, ինքզինքը այնքան կապուած ցոյց տալու, դրեթէ անձանօթ հայ տղու մը, որ զժողովրդի համար կ'ապրէր...

— Մարտիկի ամբողջ առած ամսականը չի բաւեր Եսամինին ձեռք մը ճերմակիչն զնելու, — հեղեմ էր Յակոբ:

— Քմայք մըն է պարզապէս աղջկան կողմէ, պարզապէս գրգռելու իր հարուստ դարպասողները, պատդամած էր Տիասը:

Միակ մտահոգուողը Զաւէնն էր: Առաջարկած էր Մարտիկը ձեռով մը հեռացնել Եսամինէն:

— Ինչո՞ւ հեռացնել, — առարկած էր Անթուհի... Թող տղան ապրի... ինչ նշանակութիւն ունի աղջկան մտնեցումը քմայք է թէ լուրջ... կարեւորը ծարաւ Մարտիկն է, որ հիմա բոլորէս աւելի յափրացած կը խմէ ջուրը, եթէ ոչ սոկի, զէթ արծաթ թասերով:

— Յիմար-յիմար դուրս մի տար... այս կատակին վերջը լաւ չեմ տեսներ:

Ատեն մը վերջ կատակը դադարած էր կատակ ըլլալէ:

Եսամին հետզհետէ սկսած էր փոխել իր կեանքը: Գիշերները կ'երթար թատրոն, կ'երգէր կամ կը պարէր... Կը մերժէր ամէն հրահչր... Թատրոնէն ուղղակի կ'երթար իր տունը, երբեմն Մարտիկ հոն կը սպասէր իրեն... երբեմն ալ առանձին կը մտնէր անկողին եւ անմեղ աղջկայ մը հանդարտութեամբ կը յանձնուէր քունին:

— Խենթացի է այս աղջիկը, իր կոտորուած աղջիկութիւնն է, որ կը փորձէ հիմա վերաշինել... բանաձեւած էր իր կարծիքը Տիասը եւ Հրուպարակաւ Հայրոյցած թէ՛ Եսամինին եւ թէ՛ Մարտիկին:

Եսամին...

Կու գար ան ջիղհերուն եւ արեան ճամբաներէն... Կու գար ան հիմա Տոբանի կիրճերուն մէջ հողի ճամբաներէն՝ մենակեաց Մարտիկին անդորրութիւնը խոսկելու... Կու գար ան դարձեալ վառելու Մարտիկի սրտին մէջ 300 մղոն հեռուն նստած մայրաքաղաքին մեղաւոր լոյսերը:

Լ. Գ.

(Շար. 1)

## ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

1.

Կեղծ պանունամբ  
 Մի՛ տուր երգիդ, բարեկամ,  
 Թէ՛ ուզում ես՝  
 Մարդիկ խօսքդ հասկանան՝  
 Ասա դու ա՛յն,  
 Ինչ՛ քո սրտից է գալիս,  
 Որ նայն բախույ  
 Ուղեւորուի մի այլ սիրտ:  
 Գիտցի՛ր, երգը  
 Սրտի յայդ է հրալից,  
 Կեղծ գարգերը  
 Երգին կրակ չեն սաղիս:

2.

Մի՛ սնունամիր անկեղծ երգը  
 Ո՛չ գոհար, եւ ո՛չ ոսկի,  
 Գանգի ոսկով լեցուն ձեռքը  
 Բարեկամ չէ՛ ոչ ոքի:

Երգը, սրտի բարբ սափորում  
 Երբ ետում է, կարկաչում,  
 Թեւեր առած, հեռանկրում,  
 Մտերմութիւն է տեցում:

3.

Այս ծաղիկը որքա՛ն  
 Քննուչ է ու սիրուն,  
 Ի՞նչ գունեղ, նուրբ թերթեր  
 Եւ ի՞նչ բուրմունք ունի.  
 Այս ծաղիկը, չ՛հնազ,  
 Կապուած է սիշտ հողին,  
 Նայում է իր շուրջը  
 Խայտազ թիթեռներին,  
 Նայում է նա հինա,  
 Փնտռում՝ պարտիզպանին,  
 Որ հարցնի թե՛ ինչն՝  
 Ինքն էլ թեւեր չունի...

## 4.

Մի աղջիկ իջաւ ամպի սանդուխտով,  
 Իջաւ,  
 Մեկնուե՛ց սարերի լանդին.  
 Փէշերն իր բեհեզ բրգուել եմ թամբին,  
 Մրսել է, ասես,  
 Սարսուում է թեթեւ... .

Նայում է վերից՝ ժպտում է արիին.  
 - Կուզե՞ս տախացնիմ.  
 - Հապա՞...  
 - Գիրկդ բա՛ց... -  
 Ու բարձրանում է, ռա՛քը ծունկ արած,  
 Ազդիկը չ՛հնազ,  
 Ճերմակ բազուկը մեկնում արեւին՝  
 - Արի՞,  
 Տախացրո՛ւ, դողում եմ, մըսում... -  
 Կանչում է մեզմիկ, անուշ նազանձով:

Օ՛, երջանկարեւր գրկախառնութի՛ւն...  
 Սէ՛ր, համբա՛յր, ժպի՛տ, գոյն ու ծիածան.  
 Հայուե՛ց արեւը կոյսի մով գրկում,  
 Աշխարհը երնուեց...  
 Ու կեանքը եռաց մի նոր արբամբում:

ԱՐԱՄ ԳԱՌՕՆԷ



4. ՄԵՆԵԱՆ

ԵՐԻ ԱՅՆՔԱՆ ՄՕՏ ԷՐ ԻՐ ԵՐԱԶԻՆ . . .

- Ձե՛մ հասկնա՛ր, թէ՛ ինչո՛ւ Որբեր-  
կանի՛ բանաստեղծութիւնը ընդհանուր  
դնա՛հատանքէ՛ է արժանացած, - ըստւ Սե-  
նահիտ՝ բարձրագոյն կարգի Վեղրա-  
դեանը անութիւն՝ ժամենալով Ձարու-  
հիին:

= Գեանքի նաւա՛կը:

- Այո՛:

= Այդ բանաստեղծութիւնը կը իօսի  
նաեւ իմ սրտիս:

- Սրտի՛ այո՛. բայց մտքի՛ ո՛չ:

= Ինչո՞ւ:

- Գեանքի նուազը մե՛թէ հետք չի  
թողուր իր ետին, եւ մտացուած կ'տանձե՛  
ամէն բան: Համաձա՞յն ես թէ՛ հին ե-  
րազները ամպերու պէս կ'անհետին եւ  
յիշատակն ալ կ'անցնի երգի մը նման...

= Դուն միշտ կը սիրես խորանալ:

Անահիտ, մինչդեռ բանաստեղծութիւնը  
պէտք է տանել իր ձեւովն ու դոյներովը:  
Ընդունէ՛ որ՝ աղաւթ է, զգայնութեան  
չեւ մը ձայնիդ մէջ, արտասանելի զայն:

- Իսկ ես կը նախընտրեմ քրքրել նա-  
խադասութիւնները եւ բղկտել բառերը:

= Բայց կը կարծե՞ս, թէ մարդիկ  
տակի երջանիկ պիտի ըլլային, եթէ  
կեանքը հետքեր թողուր իր ետին: Ձէ՛  
սք կորսուած լուսին եւ արքած ցաւին  
հեաքերը միշտ դառն են, եթէ մտա-  
ցումը շտանէ՛ շտանք ամէն բան...

- Դուն սկզբունքը կը դնես. իսկ ես՝  
իրականութիւնը, - յարեց Անահիտ:

Նա պահ մը լռելէ ետք՝

- Ի՞նչ կը հասկնաս «երջանիկ» բա-  
ռով, երբ կ'արտասանես զայն, - վերակը-

սաւ, - ունի՞ս անոր յատակ ու որոշ ըմ-  
բռնումը:

= Ձայն կ'արտասանեմ այնպէս՝  
ինչպէս ամէն ոք:

- Իսկ զո՞ւ կարծիքդ: Յարդ կեանք  
մը արքած ես, չէ՞:

= Անշո՛ւտ:

- Այդ կեանքը իմաստաւորա՞ծ ես  
որեւէ բանով:

= Բայց մեր այս տարիքին՝ մենք  
դեռ միայն երազներ կը հիւսնեք:

- Կամ՝ կ'որոշուինք անանցմով, -  
ընդմիջեց Անահիտ՝ ժպտա մը շրթուն-  
քին:

= Թերե՛ւս:

- Գեանքիդ անցեալ մասը հետք մը  
թողա՞ծ է:

= Այո՛:

- Նւ մոռցա՞ծ ես ամէն բան:

= Ո՛չ:

- Պիտի ուզէի՞ր մոռցած ըլլալ ա-  
մէն բան, եւ յիշատակներդ անցած ըլ-  
լային երգի մը նման...

= Ամէ՛ն բան... ո՛չ:

- Լաւ, - աւելի մտեցաւ Անահիտ, -  
այժմ կ'ուզե՞ս Որբերկանի հետ կրկնել  
ա՛յն՝ ինչ որ քիչ առաջ կը ցանկայիր  
զգայնութեամբ արտասանել:

= Բայց ես գէ՛մ եմ կեանքը իր մեր-  
կութեամբը դեռեւաւ աչք մեկի, - ա-  
ռարկեց Ձարուհի՝ ձայնը բարձրացնե-  
լով, - մարդկային հոգին պէտք սանի  
յոյգերու, օրորումի, պատարաններու:  
Նա բանաստեղծին արժէքը կը կայանայ

այդ յոյզերն ու պատրանքները կարծես  
նալ ստեղծելուն մէջը:

- Դուք կրկին կը փրփրոսփայէ՞ք, յառեցաւ ձայնը ուսուցչուհի Սիմանիսանին, որ, ձեռքերը մէջքին, յամբաքայլ, աչքերը կկոցած փէմս-նէխն նստելու հետք նայուածքը սեւեռած անոնց, մօտեցաւ երկու աշակերտուհիներուն:

Եւ, կանգ առնելով անոնց առջև,  
- Հը՞, շարունակեց, զարմնա՞լ կը վիճիք: Երկու անբաժաններ ու սքրտակիցներ, որոնք իրենց մտածումներով երբեք հաշտ չեն իրարու հետ:

Եւ որովհետեւ պատասխան չստացաւ, գլուխը շարժեց ու հեռացաւ:

Պոռոյ նիկողոսեան աղջկանց վարժարանի բակը ողորում էր արեւով: Միջնորդի դրասանքն էր: Հեռուէն ձիւները կու դային աղջիկներուն, որոնք ծառերուն միջև զիրար կը հալածէին: Իսկ արձարագոյն կարգի աշակերտուհիները, բացի Անահիտէն ու Զարուհիէն, հաւաքուեր էին անկիւնը՝ պատին ստուերին ապաստանած:

- Անբաժաններ կ'որակէ՞ յարեց Զարուհի, եւ կը կարծէ թէ արտակիցներ ենք:

Անահիտ հասկցաւ, թէ ակնարկութիւն մը կ'ընէ: Բայց անտարբեր ձեւացաւ: Զարուհի ամիս մը առաջ եւս նա՛յն մտօք նախադասութիւն մը որդեգրած էր:

Անահիտ զաղանդէ մը պահելու ցանկութեամբ չէր, որ անպատասխանի կը թողուր անոր ակնարկութիւնները: Զարուհի ենթադրածը յատակ չէր նսեւ իրեն համար: Կը մտածէ՞ր այդ մասին: Յաճախ, իր կամքէն անկախ, կ'անդրադառնար: Բայց կը վարանէր նոյնիսկ ինք իրեն ըսելու: Ի՞նչ ունէր ըսելիք: Սրտի տրոփումը զանազան առիթներով, Հասակին, դէմքին, ձայնին յաճախանքը անոր, որ անմատչելի կը թուէր իրեն: Եւ, այդ անկարելիութենէն ընկճուած, կը ցանկար որ մոռացումը առնէ՞ ամէն բան...: Եւ սակայն կեանքը խմստ պիտի ունենա՞ր առանց այդ յանդուգն ու անիրականանալի պատրանքին, որուն

պատճառած խռովքներէն կը տալնուպէր թէեւ, բայց որուն կառչած կը մնար սիրաբ...: Իսկ գիշերները, զանգակէն ետք, երբ ընկերուհիները կը ննջէին, իր փակ թարթիչներուն ներքեւ յանկարծ կը պատկերանար ան՝ զաստրան մտած պահուն կամ ամպրոնին վրայ:

Անահիտ չէր կրցած բացատրել թէ՞ ի՞նչպէս էր եղած, որ, օր մը, սրտազոզ մըն էր ունեցած: Տարեմուտի առաջին դասն էր Հայոց Պատմութեան, Ուսուցիչը ներս էր մտած արագ, լրթներուն մեղմ ժպիտ մը: Եւ, նստելով սեղանին առջև, խօսած էր հայ ժողովուրդի ծագման մասին: Աղջիկները գիտէին, թէ իրենց նոր ուսուցիչը դրող մըն է: Իսկ ոմանք կարգացած էին անոր վէպը, որ համեստ ու անմշակ, բայց խոր դասընթեամբ աղջկայ մը սիրոյ պատմութիւնն էր:

Անահիտ ունկնդրած էր ուշադիր եւ անշարժ: Եւ, տիրող խոր յուսթեան մէջ, աշակերտուհի մը ձեռքէն ինկած քանակին աղմուկը միայն իրեն պզպցնել էր տուած, թէ զաստրանը կը գտնուի...

Այդ վերացումը յաջողակա՞ն պատկերուն հետզհետէ անող խռովքի մը վերածուեր էր: Եւ իր ասքրած ու անորոշ ձեւին մէջ իսկ, որ կեանքին բոլոր վեղեցկութիւններուն համադրեալ զարկն էր իր կոյս արտի գոնակին, կ'ազգէր որ մնար զաղանդէ մը: Կը վախճա՞ր անոր յայտնութենէն: Թէեւ, միանգամայն, պահանջը կը զգար խօսելու դոնէ Զարուհիին: Սիրաբ, երբ կը սկսի անսովոր կերպով արտփել, կը կարօտի ունկնդրողի մը: Ֆիզիքականը՝ զարծածուածի, դպացականը՝ սփոփանքի համար...

Նոյնիսկ ինք իրեն ըսելու անհամարժակութիւնը կը շեշտուէր, երբ ինքզինք կը բացառուէր անոր հետ: Ինք պարզ ու սովորական աղջիկ մըն էր: Գաւառէն եկած աղջիկ մը: Ան՝ օժտուած՝ մտքի եւ արտաքին շնորհներով: Իսկ աշակերտուհիի զբասեղանին եւ ուսուցչի ամպրոնին միջև եղած տարբերութիւնը պատուար մը կը թուէր իրեն: Ընդհանուանդ որ՝ իր արտայայտութիւններուն,



իր շարժումներուն եւ իր վճիտ ձայնին մէջ Մեհրապետն տիրական բան մը ունէր: Լաջն ճակտին վրայ քիչ մը ըմբոստ պարտը սեւ մազերուն, ինչպէս նաեւ աչքերէն ծորող մեղմադձառ քողցրութիւնը կը քաշէին եւ նո՛յն ուժգնութեամբ կը փախցնէին իրեն յառող նայածները: Անոր դրազէտի հանդամանքը ու արժանիքը նուազ դեր չունէին, անչուշա, այն հեռաւորութեան մէջ, զոր կը տեսնէր Անահիտ՝ Մեհրապետնի եւ իր միջեւ: Կը նկատէր թէ՛ իր դասընկերուհիները եւս տաք բան մը ունէին Մեհրապետնի նկատմամբ: Բան մը, որ դէպի ուսուցիչը տածուած յարգանքէն տարբեր կը թուէր իրեն եւ զոր հաճութիւնը ու նաեւ արտութեամբ կը նմանցընէր այն անբացատրելի արամազրութեան, որով համակուած էր ինք:

Շարաթներու թաւալումին հետ՝ իր մէջ աճիլը զգաց այդ արամազրութեան: Երկուշարթի եւ Ուրբաթ՝ օրերուն կը սպասէր տեսնել իր արտութեան նաեւ՝ տաղնապոփ: Կ'ուզէր, որ զար ու չզար ան՝ մէկուն նման, որ շուրերուն հեշտունքը կը զգայ ու կը ցանկայ, բայց կը վտխայ մօտեցող ախքներէն: Կը ջանար սմէն ատենէ աւելի հանդարտ ըլլալ: այդ օրերը, որոնք հողեկան բաւարարութեան, բայց նաեւ տաղնապի օրեր էին: Դեռ առաջին բողբոջն անծանօթ ու անբացատրելի յոյզ մը կը բարձրանար կուրծքէն դէպի կոկորդը եւ կը լեցնէր զինք: Գիշերներուն լուս ու գրեթէ անբուն մտապատկերումներէն ետք, դեռ առտունընէ տարօրէն վախ մը կը համակէր սիրտը: «Ձգար ու լա՛յն շիշի», կ'ըսէր ինք իրեն: Թէեւ նո՛յնքան զօրաւոր պահանջը ունէր լսելու ունեւանայները անոր: Ամբողջ զաստապահ մը վայելելու անոր ներկայութիւնը: Ունկընդդրելու ձայնին՝ առանց կարենայ նստելու կամ երբեմն խուսափուն անկարկով մը ըմբռնելու, չորս պատերուն միջեւ, անոր հետ ըլլալու հեշտանքը: Այդքանը միակ կարելութիւնը կը նկատէր, եւ աւելիին անկարելութիւնը իր մէջ կը շեղտէր դոնէ այդքանէն չզրկուելու ցան-

կութիւնը, ինչպէս նաեւ միակն այդքանին ազգաց դասնութենէն ինքզինք ձերբազատելու մտածումը: Այդ երկմտութիւնը յանկարծ կը չքանար, սակայն, երբ իր ու Մեհրապետնի նայուածքները կը հանդիպէին իրարու: Բոպէ՛ մը միայն, երբ իր հայեացքը հակած կ'ըլլար արդէն եւ ջերմութիւն մը կը պատէր ամբողջ մարմինը:

Մեհրապետն եւս կը զգար թէ եղնիկի ճկունութեամբ ու նրբահաստի այս ազլիկը, որուն սեւ աչքերուն մէջ ուշիմութիւնն ու զգայնութիւնը կը ցլուանային, իրեն համար սկսած էր բանով մը տարբերիլ միւս աշակերտուհիներէն: Անոր արտաքինէն եկող հրապո՛յրն էր պատճառը, թէ մտքին պայծառութիւնը՝ չէր մտածէր այդ մասին: Բայց կ'անդրադառնար, թէ իր սկնարկը անբոզալարար կ'ուղղուէր անոր:

Իր ուշադրութենէն չզրկուցաւ, երբ օր մը Անահիտը տեսաւ տեղափոխուած: Թողեր էր առաջին գրասեղանը եւ տնցեր ամէնէն ետեւ: Հետուն նստելով՝ գերծ կը մնար ընկերուհիներուն սուղարութենէն: Իր ինքնամփոփ ու արտոմ միճակը խոստոված չէր անոնց նկատառութենէն: Բայց Ձարուհիէն զատ ոչ ոք մղուած էր ենթադրութիւններու:



Դեկտեմբերի մոայլ օր մըն էր: Մեհրապետն մտաւ դասարան, զբաւեցաւ աթոռը, բացաւ նիշերուն տոմարը եւ, հայեացքը ուղղելով Անահիտին.

— Եկո՛ւր՝ խօսի՛ մեզի Փառանձեմ թագուհիի շրջանի անցուղարձերու մասին. — թելադրեց:

Անահիտ յանկարծ տօգուենցաւ, ինչ որ չզրկուցաւ Մեհրապետնի ուշադրութենէն: Դասարանին առաջին ուղակիքուհի անպատրաստ չէր կրնար ըլլալ: Անահիտ օտքի ելաւ: Մօտեցաւ ամպիտին: Եւ թէեւ փորձեց խօսիլ, բայց ձայնը խեղդուեցաւ: Արտայայտելու անկարող՝ անկարկը ուղղեց ու-

տուցչին: Այլալից էր: Առ շատագու-  
նած: Եւ Մեհրապեան անոր այդ նախ-  
ածքին մէջ նոր միտքն նշարեց այն՝  
ինչ որ բառերը անկարող պիտի ըլլային  
բանու... Ճիշդ ըրաւ շարեւորելու ինչ  
որ դպաց նաեւ ինք: Անահիտ, միշտ  
լուռ, կանգնած կը մնար:

- Տկար է, պարոն,- ասինց յան-  
կարծ Զարուհի՝ ոտքի կանգնելով:

Դասարանը լուռ էր: Ամէնքին նախ-  
ածքները ուղղուած էին Անահիտին:

= Լա՛ւ, Հանգատացի՛ր,- յարկց  
Մեհրապեան՝ խօսքն ուղղելով Անահի-  
տին:

Առ միջոցն Անահիտ կը վերադառ-  
նար իր գրասեղանը, Մեհրապեան, խոր  
լուռութեան մէջ, ակնարկովը գրկեց անոր  
գեղեցիկ Հասակը, որ նուրբ սրունքնե-  
րուն վրայ կը սուհէր, մազերուն աստա-  
հիւսքը ծոծրակն ի վար:

Յաջորդ դասէն օր մը ասալ Անա-  
հիտ հիանդութիւն պատրուակած էր:  
Անոր բացակայութիւնը իբրեւ թէ ան-  
նրկաւ թողուց Մեհրապեան: Բայց դա-  
սարանէն բան մը պակաս զպաց, եւ  
պարսպ մտացած գրասեղանին վրայ  
մտապատկերեց զայն...:



Գրական ասուխտ մըն էր: Անահիտ,  
որ Շաքաթ կէս օրէ ետք Մօտա՝ մօ-  
րաքրոջն էր դացած, ուղեց առիթէն օյ-  
տուհի եւ ներկայ ըլլալ ասուխտին: Երբ  
ներս մտաւ, սրահը գրեթէ լիցուած էր:  
Գրակց եօթներորդ կարգի ծայրի ա-  
թոռը՝ միջանցքին ձախ կողմը: Իր քով  
կը մնար պարսպ աթոռ մը: Առաջին  
կարգերուն վրայ տեղ գրուած էին Հան-  
րային ու գրական գէմքեր: Սրահ մտու-  
կամիտաս վարդապետ՝ սեւ աշտարակի  
մը նման սահելով անցքէն: Որոշուած  
ժամը կը մօտենար: Անահիտ ակնարկով  
կը փնտռէր մէկը, բայց չէր տեսներ:  
Մտահոգուեցաւ՝ բացակայութիւնը վե-  
րագրելով Հիւանդութեան: Եւ ճիշդ  
այդ պահուն իր քով նկատեց Հասակ մը:

Դարձաւ: Մեհրապեանն էր: Կը նայէր  
չուրջը՝ պարսպ աթոռ մը փնտռելով:  
Անահիտ նախ շփոթեցաւ: Բնազդաբար  
ոտքի ելաւ, անցաւ քովի աթոռը եւ,  
ժպտուն, Մեհրապեանին ցոյց տուաւ իր  
աթոռը: Դող մը Համակեր կը մար-  
մինը: Ձանաց ինքնամփոփուելի: Երբեք  
այդքան մօտ չէր եղած անոր: Հողին  
լիցուեցաւ ջերմութեամբ: Նայուածքը  
բնմին՝ մտովի կ'ըմբռնէր անոր այդ-  
քան մերձ ներկայութիւնը: Եւ կը ցան-  
կար, որ ասուխտը երկարէ՛ր, որովհոյ՞  
երկարէր նաեւ երազայինին ու իրակա-  
նին այդ վերացնող Համադրոյթը:

- Դպրոցէ՛ն եկաք,- Հարցուց Մեհ-  
րապեան՝ դառնալով Անահիտի:

= Մօրաքրո՛ջն էի,- ճիշդ ըրաւ Ա-  
նահիտ անզգայի գարմնել իր խոռվքը,-  
օգտուեցայ առիթէն:

Կը խօսէին ասանց նայելու իրարու:  
Եւ երկուքն ալ կը զգային, թէ գիրենք  
իրարու մօտեցնող բան մը իրարմէ կը  
հեռացնէ միանգամայն...:

- Արեւն մօրաքրոյր ունիս Պոլիս,-  
յարեց Մեհրապեան,- եւ ոչ թէ ծնողք:

= Ես Մալկարացի եմ,- պատաս-  
խանց Անահիտ:

- Արտաշէս Յարութիւնեանի քաղա-  
քակի՞ց,- անկեղծ հետաքրքրուեցաւ  
Մեհրապեան,- մալկարացիներդ Հպարտ  
պէտք է ըլլաք իրմով:

= Իսկ ընդհանրապէս Հայերո՞՛  
նա՛եւ ձեզմով:

- Աշակերտուելին ուսուցչին վերա-  
գրուած եւ թերեւս անդոյ արժանիք մը:

= Միտն ա՛յդքան,- ընդմիջեց Ա-  
նահիտ՝ նայուածքը ուղղելով անոր:

Եւ իրենց նայուածքներուն այս  
երկրորդ հանդիպումը կասկած չթողուց  
Մեհրապեանի մէջ Անահիտի տրամա-  
դրութեանը մասին:

Ասուխտի վերջնադրութեան դուրս  
ելան միտսին: Անցան Բերան եւ Հարտ-  
նակեցին քալել Քաքիմի աջ մայթէն:

- Շուտով տարեշրջանը կը լրա-  
նայ,- ըսաւ Մեհրապեան,- դպրոցը  
կ'աւարտես եւ կը վերադառնաս Մար-  
կարս:

= Այո՛ւ :  
- Յետո՞յ :

Անահիտ չկրցու բացատրել այդ «յետո՞յ»-ն : Կը Հետաքրքրէ՞ր զինք , թէ սովորական Հարցում մըն էր :

= Այդ մասին դեռ որոշում մը չու- նիմ , - պատասխանեց , - ծնողքս կը փա- փաքին , որ իրենց քով մնամ , իսկ ես...

- Նախասիրութիւններ ունիս ե- րեւի...

= Յանկութիւններ՝ որոնք... Ի՞նչ դիտեամ... Մարդ , երբեմն , իր կամքէն անկախ...

- Լսած եմ Մալկարայի մասին , - փորձեց փոխել նիւթը Մեհրապեան , - կ'ըսեն թէ դեղեցիկ վայր է :

= Աէի՞ք ուզեք տեսնել :  
- Մալկարա՞ն :

= Այո՛ւ : Եւ Մալկարային հետ նաեւ Մալկարացի կարօն : Արձակուրդներուն կը վերադառնայ հոն : Ձեր այցելու- թիւնը իրեն եւս Հանելի պիտի բլլայ անշուշտ :

Մեհրապեան կուսեց թէ՛ եղածը հրաւեր մըն էր :

- Անկարելի բան մը չէ , անշուշտ , - ըսաւ , - թէեւ մէկ երկու բարեկամներ կը խորհէինք մեկնիլ Պարսիզակ : Վա- րուժանն ու Գեղամ Բարսեղեանը երէկ կրկին կը խօսէին այդ մասին :

= Այդ պարագային բնակոնաբար աւելի նախընտրելի կ'ըլլայ Պարսի- զակը :

- Բաղդատութեան խնդիրը նոր կը դրուի , - յարեց Մեհրապեան՝ կանգ առ- նելով ու նայելով Անահիտի :

= Ուրեմն... Մեր տունը աւանդա- բար հիւրասէր է : Ո՞րքան պիտի ուրա- խանայ նաեւ Հայրս , որ դրօշակներու Հանդէպ շնչուած տկարութիւն մը ունի : Արտաշէս Յարութիւնեանի մէկ ոտքը մեր տունը եղած է միշտ , ինչպէս կ'ըսէր ինք :

- Նաեւ Հա՞յրդ... Ինչո՞ւ այդ ընտելը :

= Հա՞րկ է բացատրել , - պատաս- խանեց Անահիտ՝ քիչ մը դառնացած : Մեհրապեան , անզգայաբար , յան-

կարծ բռնեց Անահիտի ձեռքը եւ նոյն- քան արագ թողուց :

•••

Ծրագներով , յոյսերով եւ հոգին հրճուանքով լեցուած՝ Անահիտ Մալ- կարա վերադարձաւ վկայականը պա- յուսակին եւ , ձեռքի անակնկալ սեղ- մումով մը , փոխադարձ համակրանքի մը ապահովութիւնը որտիւն մէջ :

Տանը մէկ հատիկ զաւակն էր : Հօրը չաչքին լոյսը :

Առաջին օրերուն վարանեցաւ ծնող- քին ըսելէ թէ՛ Օդոտտոսին իրենց պիտի այցելէ Մեհրապեան : Կորհեցաւ նախ հազարդէլ Հմայեակ Սեղրոսեանին , որ , ծնած Խարբերդ , տարիներ առաջ ու- սուցչական տաշտոնով զացած էր Մալ- կարա : Թշկատիցիի աշակերտ , ինչպէս նաեւ , Մալկարայի մէջ , սերտ կերպով կապուած Արտաշէս Յարութիւնեանի հետ՝ մինչեւ անոր Պոլիս փոխադրուե- լը , Սեղրոսեան մասնաւոր դուրգութանք մը կը տածէր դէպի մայրենի լեզուն ու զաւառը : Ամուսնացած էր Մալկարա եւ տեւական բնակութիւն հաստատած այն- տեղ : Ձեռնարկած էր գաւառական բա- ցատրութիւններու Հաւաքածոյի մը պատրաստութեան՝ խղճմիտ , բծա- խընդիլ ու ջերմ նուիրումով մը :

Ի՞նչ պատճառ կար , սակայն , մտա- ծեց Անահիտ , ծնողքէն ծանկելու : Իր ուսուցիչն էր եւ հրահրած էր :

Քանի մը օր ետք յայտնեց մօրը՝ իր ըսելու ձեւին մէջ փորձելով զննել սովոր- ական հրաւերի մը շնչուր : Մայրական բնազդը , սակայն , անտարբեր չթողուց զայն : Գաւառի եւ Հարուստի կին՝ ու- սուցչի մը կամ գրողի մը Հանդէպ իր ազնկան Հաւանական տկարութիւնը մը- տահողեց զինք :

- Հայրդ դիտէ՞ , - Հարցուց՝ քիչ մը սառն :

= Ո՛չ :

- Լաւ չէ՞ր ըլլար , որ նախ առած ըլլայիր հօրդ Հաւանութիւնը :

Հայրը, սակայն, նույն շրջանայ-  
եաց քան կինը, և գրազէտ մը Հիւրա-  
սիրելու հանոյքէն մղուած՝

- Ամօթով շնանք,- ըսաւ՝ երբ Ա-  
նահիտ, ճաշի ատեն, կրկնեց ինչ որ ու-  
սած էր ժօրը,- պատրաստեցէք ինչ որ  
պէտք է: Գրէ՛, աղջիկս, թող իմացնի  
թէ մ'ը օրը եւ ո՛ր շոգենաւով կը հասնի  
Ռոտտսթօ: Կառքով մը կ'երթամ կը գի-  
տաւորեմ զինք:

Եւ այդքանը բաւական եղաւ, որ Ա-  
նահիտ յաջորդ օրն իսկ սկսի կարգի  
ղնել ամէն բան: Նախընտրեց տրամա-  
զրել իր ննջասենեակը, որ տանը պար-  
տէզին կը նայէր: Նորոգեց վարագոյր-  
ները: Գզել տուաւ տնկողնին բուրդը: Եւ  
ծրադիրնէր պատրաստեց՝ գիւղաքա-  
ղաքին ծօտակայ վայրերը պարտցնե-  
լու:

Իր փութկոտութիւնը, որ զուրկ չէր  
սովորական ընդունելութենէ տարբեր  
տրամագրութենէ մը, ժօրը մտահոգու-  
թիւնը շնչեց: Ան կը զգար, թէ աղ-  
ջիկը վերադարձած էր հետը լեռնով  
զաղանիք մը, որուն նախանշանները կը  
տեսնէր արդէն եւ որուն կենդանի ար-  
տայարտութիւնը շուտով պիտի մտնէր  
իւր տունէն ներս: Ընդդիմանալու որոշ  
պատճառներ չունէր: Բայց աղջկան կը  
վերադէր տարիքն եկող տկարութիւն  
մը, որ կրնար անխոհեմ ըլլալ:

- Քիչ մը շատ իրար անցած է,- ը-  
սաւ առաւօտ մը ամուսնոյն՝ զգուշա-  
նայով, սակայն, կասկած ներշնչելէ ա-  
նոր:

== Եաքարը չուր չինկա՛ւ... Թող  
գայ՝ տեսնենք,- եղաւ պատասխանը:  
Նոյն երեկոյ իրենց այցելեց Սեդ-  
րոսեանը:

- Անահիտը քեզի հանելի անակնկալ  
մը կը պատրաստէ,- ըսաւ Հայրը Սեդ-  
րոսեանին:

== Բանաստեղծութիւն է գրած ե-  
րևի,- յարեց Սեդրոսեան,- ես միշտ  
թելադրած եմ իրեն՝ զպատմները  
յանձնել թողթին:

- Օ՛, Գրն. Սեդրոսեան,- մէջ ին-

կաւ Անահիտ շիտթած,- շատ կը գերա-  
զնահատէք զիս:

== Մեհրապեա՛նը հրաւիրած է, Օ-  
գոստոսին կու գայ,- ընդմիջեց Հայրը:

- Գրազէ՛տը,- ուրախացաւ Սեդ-  
րոսեան,- իրապէս հանելի անակնկալ է:  
Վերջին անգամ, Պոլիս այցելութեանս,  
ուզեցի տեսնել զինք եւ անձամբ ծանօ-  
թանալ իրեն հետ: Մեկնեք էր իր գիւղը:  
Կը թղթակցի՞նք: Անահիտ,- դարձու-  
անոր,- անշուշտ կարողացած ես ուսուց-  
չի՞դ վէպը:

== Այո՛:

- Վիպիչու շնորհ ունի, յեզուի  
մաքրութիւն եւ աստակ հոգեբանական  
վերլուծումներու:



Անահիտ օրերը կը Համբէր անհամ-  
բերութեամբ: Անքուն զիշերներու  
շարքը վերսկսած էր: Ինչպէս եւ՝ ան-  
նինջ երազներու: Իրենց տան մէջ՝ ամ-  
բողջ օրը միասին, դասարանի ճնշիլ ու  
կաշկանդող մթնոլորտէն եւ դատընկե-  
րուհիներու ներկայութենէն ազատ,  
բայց մանաւանդ այլեւս որոշ եւ անվե-  
րապահ...: Կը նախատեսէր ատանձնու-  
թեան պահեր: Նաեւ՝ առանձին պոստ-  
ներ՝ որքան կը թոյլատրէին գիւղաքա-  
ղաքին բարձրին ու ծնողքին մտայնու-  
թիւնը: Միանգամայն կը մտահոգուէր  
այն հաւանականութենէն թէ՛ Մեհրապ-  
եան, ավանովաբար, պիտի չուզէր իր  
կեանքը կապել մէկուն հետ, որ այդ  
Համեստ գիւղաքաղաքը կը մնար:

Եւ կը յիշէր Մեհրապեանի այն-  
տո՛յն: Այո՛, յետո՛յ...: Բայց աղջիկ  
մը դասապարտուած է տեսապէս իր  
ծնողքին հետ ապրելու, երբ մանաւանդ  
իր կեանքը կը կապէ ուրիշի մը կեան-  
քին հետ: Միւս կողմէ, կը խորհէր,  
տուն, նիւթական լայն կարելիութիւն-  
ներ, ընտանեկան հոգածութիւն ու  
զուրգուրանք, ուրիշ մտաւորականի մը  
ներկայութիւնը գիւղաքաղաքին մէջ,  
ստեղծագործելու լայն հնարաւորու-

թիւններ եւ ի՛նք, վերջապէս, երբ իրապէս կը սիրէ:

Այս բոլորը պատճառներ չէ՞ն, որպէսզի Մեհրապեան ուսուցչի իր համեստ պայմաններէն նախընտրէր Մայկարան: Եւ յետոյ՝ դիւրի գաւազ չէ՞ր ինք եւս: Հսկողակ պարտաւսին, կը մտածէր Անահիտ, հայրը, որ իր զմէկ խօսքը երկու չէր բներ՝ ինչպէս դիտել կու տար մայրը երբեմն, իր կարելիութիւններէն անշուշտ պիտի չզրկէր զիրենք՝ ուր որ ուլ բնակէին:

— Օգոստոսը պտուղներով առատ ամիս է, — ըսաւ հայրը օր մը, — պտղատանին տնակը կարգի դնել կու տամ, շաբաթը մէկ երկու օր մը տանինք այնտեղ: Յարութիւնները զերբ այտեղ կու գամ, կը ներշնչուիմք, կ'ընէր ամէն անգամ:

Հօրը այս հոգածութիւնը աւելի՛ քաջալերեց Անահիտը: Բայց միանգամայն կը մտածէր թէ՛ Մեհրապեան բնութեան պիտի կարօտէր ներշնչուելու համար: Իր ա՛նձը: Եւ յանկարծ կը թերահաւատուէ՛ր. թէ՛ դպրոցական գրասեղանէն դիտուած ամպիոնի անմատչելի երազը շուտով իր մօտ ու իրեն հետ պիտի ըլլար: Ինքզինք տարհամոզելու ճիշդ, զոր տեսպէս ի գործ կը դնէր՝ մտաբերելով Մեհրապեանի ամէն մէկ բանն ու մանաւանդ խօստն նայուածքը, աւելի կը շեշտէր իր անհամբերութիւնը:

Իր այդ հոգեկան տազնային մէջ էր, որ, երեկոյ մը, հայրը քաղաքական ծանրացող տազնապէ մը խօսեցաւ:

— Լուրերը լաւ չեն, — ըսաւ, — վառօդի հոտ կու գայ:

== Կը կարծե՞ս, հայր, — խորապէս մտահոգուած հարցուց Անահիտ:

— Այնպէս կ'երեւի... Վիլհէլմ կրակի մէջ պիտի նետէ Եւրոպան...

Եւ, իրապէս, օր օրէ զամպերը կուտակուեցան, Մեհրապեանի վերջին նամակը ճամբորդութեան յետաձգումի մասին էր: Զօրաշարժերու լուրերը յաջորդեցին իրարու: Մահամանները փակուեցան եւ Թուրքիա մտաւ պատերազմի:

Ամիսները անցան մռայլ ու մթին

օրերով: Աշունը դեղնացուց նաեւ Անահիտի երազը... Զմեռը եղաւ ճնշիչ ու ծանրազնաց:

Ապրիլի վերջին օրերն էին: Երեկոյ մը հայրը տուն մտաւ մռայլած: Եւ քա՛ն չարտասանեց: Ընթրեցին լուռ: Անահիտ կռահեց թէ՛ հօրը տխրութեան պատճառը կու գար հետուէն: Կ'ուզէր իմանալ: Բայց կը վարանէր՝ անողոք իրականութեան մը հետ դէմ յանդիման պտնուելու հաւանականութենէն ահաբեկ:

Ընթրիքէն հտք, երբ նստեր էին պարտէզը՝ հօրը հետ,

— Բան մը կը մտահոգէ քեզ, հայր, — ըսաւ շեշտակի նայելով անոր:

Սարսիինայէն կախուած լայտերին աղօտ լոյսը, որ երեկոյեան սիւքէն կ'օրօրուէր, շոյի երկզնէր կը զծէր տնոնց դէմքերուն վրայ՝ սաղարթներու սառուերներուն ընդմէջէն:

Հայրը նախ չպտտասխանեց: Վառեց պլանիկ մը, ծուխը քաշեց խոր, տուաւ դուրս հառաչանքով եւ՝

== Կը դիտատեն մեր ժողովուրդը, — շշնջեց:

— Ա՛յսինքն, — ցնցուեցաւ Անահիտ:

== Պոլսոյ մէջ սկսեք են ձերբակալել մտաւորականները:

Մա՛նր թակ մը իջաւ Անահիտի զըլխուն: Ելմամ, տահմեկած ու համբացած՝ կը նայէր հօրը՝ մտապատկերելով Մեհրապեանը եւս ձերբակալուած: Ահաւո՛ր էր հարուածը: Թանկարծ վեր ի վայր էր շրջուած ամէն բան, — ցանկութիւններ, երազ... Եւ միանգամընդմիջտ կ'անհետանար շուտով միասին ըլլալու երջանկութիւնը: Անկարելի էր հաւատալ: Սեղողուկ եկաւ կրկորդին: Աչքերը լճացան: Կուրծքը կ'ելեւէջէր: Անխօս՝ բարձրացաւ իր սենեակը: Երեսն ի վար նետուեցաւ մահճակալին վրայ եւ նրբին մարմինը փռած, սեւ մազերուն խիտ ու երկար հիւսքերը ուսերն ի վար, եւ իր հեծկտուքը զօպելու ամէն մէկ ճիւղին հետ ցնցելով իր ճկուն իրանը:

Առատն, նախանշի սեղանը անտեսած նետուեցաւ դուրս: Սանարուած իսկ

չէր: Անքնութենէն ու արտասուելէն ու-  
ոսեր էին կողերը: Հմայեակ Սեղրոսեան  
կը բնակէր քովի փողոցը: Բախեց դուռը  
եւ մասւ ներս: Սեղրոսեան նստած էր  
անկիւնը՝ գրասեղանին առջեւ եւ թուղ-  
թեր կը դասաւորէր:

- Ներեցէք որ այսքան կանուխ կ'ան-  
հանգստացնեմ ձեզ, - ըսաւ Անահիտ՝  
չփոթ ու մտամոլոր կանդներով Սեղրոս-  
եանին առջեւ, - երէկ դիշեր հայրս ահա-  
ւոր լուր մը տուաւ:

Սեղրոսեան, որ նոյնքան տրտում եւ  
ընկճուած էր, ծանրորէն շարժեց գլուխը  
եւ՝

= Ծի'չր է, - յարեց՝ հազիւ լսելի  
ձայնով մը, - այսօր՝ մտաւորականու-  
թիւնը, վաղը, ապահովաբար, ժողո-  
վուրդը... երբ այնքան մօտ էինք մեր  
երազին...

- Այո՛, - հառաչեց Անահիտ, - երբ  
այնքան մօտ էի...

Ու չկրցաւ շարունակել:  
Սեղրոսեան կոտակեց: Ելաւ ոտքի,  
Մօտեցաւ Անահիտին եւ, ձեռքը դնելով  
անոր սւախն՝

= Ամէն մէկէն ճակատագիրը կը  
նոյնանայ մեր ժողովուրդի ճակատա-  
գրին հետ, - մբնջեց խեղդուող ձայնով  
մը:

Անահիտ, խելայն'չ, դուրսը դրեր  
էր Սեղրոսեանի կուրծքին ու կ'արտա-  
ւէր հեղձամղձուկ:

Սեղրոսեան, որ կը նախատեսէր թէ  
անդունդին եզրին է նաեւ ինք եւ որուն  
այտերէն վար կը հասէին արտասուքի  
երկու շթեր:

= Անահիտ, - աւելցուց՝ փորձելով  
զսպել իր յուզումը, - եթէ երազածդ կը  
կորսնցնես, տէրը մնացիք երազիդ...  
Յիշատակներ կան, որոնք կ'արժեւորեն,  
նոյնիսկ կ'իմաստաւորեն կեանքը...

Անահիտ յանկարծ բարձրացուց գը-  
լուխը, արտասուքի վճիտ կաթիլնե-  
րուն ընդմէջէն նայեցաւ Սեղրոսեանին  
եւ՝

- Հին երազները ամպերու պէս չեն  
սնհետիր, չէ՞, - զոչեց փղձկուն, - եւ  
յիշատակն ալ չ'անցնիր երգի մը նման...

4. ՄԵՃԵԱՆ



## ԵՐԳ ԳՈՅՈՒԹԵԱՆ

Անպարագիծ ժամանակներու մոլեգնած վաթսրիկ :  
 Հեռասպառ վազք, շնչահատ սլացք .  
 Փառտազանձ անցեալի փռչեհամ ստրկութիւն :  
 Անփառունակ օրերու դառն յաղթանակ :  
 Տառասպալի յոյս, հրնուեցնող կսկիծ .  
 Անանճնակաճ սէր, համապարփուկ սրբութիւն,  
 Մաքրամաքուք միտք .  
 Օ՛, անգոյ պատմութեան, անգոյ ժամանակներ :

Եւ սղոցուած ռոկոս, կաթկթող դանակ,  
 Արնահամ գիւնի .  
 Խնդուք ու ժպիտ,  
 Ու սէր ու կեր . ուրախ լեր-  
 Մեղք, արիւն :  
 Քրքշացող, կենդանաբոյր, մարդակերպար մրուր :  
 Ու ճիշ, ու լաց . կոտորակուող բազմութիւններ :  
 Հեռասպառ վազք . շնչահատ սլացք :  
 Սկեղեցի, մագաղաթ .  
 Բռնկած գրքեր, բացավառ սրբութիւն,  
 Անգախորդ պատմութիւն :  
 Կրակ, ճիւն, վայելն :  
 Ձիւնեայ :  
 Յիսախառն լաչակ կոյսի . սառած գիրեր-  
 Ջրամոյն գազափարներ ամեհի :  
 Կարկուշ, մարմաջ, ճանաճ .  
 Ու կա՛յծ, կա՛ց, կացնէ՛ .  
 Ու պայքարէ՛, պայքարէ՛, պայքարէ՛,  
 Ու յանդգնի՛ր, գա՛րկ, ու՛ցի՛ր :  
 Կունձած ճեռքերով հպի՛ր,  
 Անբիք աչքերով հիւցի՛ր,  
 Անկարելի հերոսներուն :

Հորիզոնը արձարորոք՝  
 Անկէ անդի՛ն, անկէ անդի՛ն,  
 Փայլատակոզ վեհաբիւմ,  
 Վսեմաբայլ յազթանակ,  
 Եթերածին սրբուքիւն:  
 Ու սէր, ու սով, անմեղք, անմեղ.  
 Հեւասպառ վազք. շնչահատ սլացք:  
 Ու կռի՛ւ, ու գրո՛ւ,  
 Ու զիրք, ու միտք, ու քրտինք.  
 Երկիր, երդիք, երկիւնք.  
 Ու կապոյտ, ու ծաւի, ու վարդնարոյր արեւազալ,  
 Երվ երգ, անհուն տառապանք:

Կապա՛ր, դամա՛կ, արի՛ւն:  
 Կացնահատ գանկեր, ազամանդեայ գանկեր,  
 Կացնահար մտեր, բեւաբափ մտեր,  
 Խաւարածոր լռութիւն:  
 Բարբ ժա՛յքք, շոինդ, շարծ, շառաչ,  
 Արիւն, կսկիծ, յազթանակ, արիւն,  
 Յա՛ւ, ջա՛ւ, ջա՛ւ.  
 Հեւասպառ վազք. շնչահատ սլացք:  
 Խինդ ու խաւար,  
 Կապանք, շղթայ.  
 Անբարբառ մագաղաթ,  
 Անփառունակ գիրք,  
 Արմախոնաւ մատուռ.  
 Սառնադաշտեր դիպարդ, խոյան սքտեր,  
 Մքնած երկիւնք, արնայազ հոզ, սարսուցոզ հոգիներ:  
 Սպասում:  
 Հաւատք անխուսափելի:

Կայծակնափայլ որոտո՛ւմ.  
 Գալիքնելու Պոէտի մտրակոզ պատգամ.  
 Պատմութեան քառուղիներուն շառագունոզ  
 Գալիքնափայլ Արշալոյս:  
 Ու շղթայոզ խաւար:  
 Հեւասպառ վազք. շնչահատ սլացք:  
 Փամանակ.  
 Կեանք ու երգ, ստեղծագործ ոգի:



Ամայութեան փռչիներէն կիսածածկ  
 Անկերպարան շքախումբեր:  
 Միտացող կրակներ. կիսամերկ դպիրներ.  
 Կռքաբանակ, խարխափող ճառագայթներ.  
 Սպառուկ շարական:  
 Հեռապառ վագֆ. շնչահատ ոլացֆ:  
 Ստեղծագործ միտք.  
 Քամոզակող բագուկներ,  
 Կռչող ձեռքեր, յամառ ձեռքեր.  
 Կարօտավառ կանչ, լաց, երգ,  
 Խիմց, սէր, կեանք,  
 Վերլննիւողուած բագմութիւններ:  
 Ժամանակ.  
 Սակարկուած սպասում:

Պատմութեան քառուղիներուն՝  
 Գալիքներու երգիչը.  
 Ակնարկը յառած հրաշափայլ Արշալոյսին.  
 Ժողովուրդը՝  
 Շղթայած իր ճանապարհին:

Վախը գրպանած սմեղուկներուն,  
 Թուքը կլլած հերոսներուն,  
 Անողոք վնիռը լուսաբանողակ առջնորդին.  
 Պոթկացող ոգի,  
 Մրրկածուփ միտք,  
 Դարապիքի մկաններ.  
 Ահագնաբայլ ընթացքը անպատմելի բանակներուն:  
 Վախագնածին գալիքները պատմութեան քառուղիներուն:

Հեռապառ վագֆ. շնչահատ ոլացֆ:

ՎԱՐԱՆԻ ՓԱՓԱԶԵԱՆ

Կ. ՄԱՍՈՒՆԻ**ՄԱՐԵՐՈՒ ԱՍԼԱՆԸ**

ՄԱՍՆ Ե.

ԳԼՈՒԽ Ա.

**ՄԱՐՀԱՏ ԾՈՎՈՒ ԱԼԻՔՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ**

Վանայ ընդարձակ լիճը, շառաչին ու փրփրուն այլքներուն վրայ  
առած էր փոքր նաւակը:

Հայոց աշխարհը, ազատութեան դրօշին տակ, անհուն հեւքով,  
խրճիթներէն մինչեւ լեռնազապաթները, յաճաքօրէն ազատութեան արիւ-  
նոտ ճամբան կը շարունակէր:

Հայոց ծովն ալ կատաղի ծովացում մը կը գոռար Սիփանի եւ Նեմ-  
րաթի ժայռերու երեսին:

Դիւցազները կրող նաւակը, երեք օրերէ ի վեր այլքներուն խաղա-  
լիք, դէպի Սիփանի ճերմակ սաղաւարտը կ'առաջանար:

Լեռնական մարտիկներ, քարի զաւակ, այլքներուն խաղալիք ու ան-  
զօր, հոգեկան անյատակ ծովուն մէջ ինքնամփոփ՝ Նեմրութէն ու Սիփա-  
նէն անդին կը տեսնէին անձնազուճ տղո՞վուրդ մը արեան խաւարանին մէջ,  
ու երկաթէ կամ զը անոնց ուժ կոտար յառաջանալու քարափները ժայռոտ:

Հագար-հագար տարիներ առաջ, նոյն հոգեփիճակը կ'ապրէր թերեւս  
Հայկ Նահապետը, երբ նոյն այդ բարձունքներէն ստիպուեցաւ իր նետը  
սլաքել Բելի կուրծքին:

Ազատութեան ու քոնութեան պայքար: Բարին ու Չարը այս փո-  
րուն վրայ իրենց հաշիւը պիտի մաքրէին:

Թրջական Բելը բանակները շարժման մէջ դրած, Վանէն Պիթլիս,  
Մուշէն Սիփան, ծովեզները ամբօրէն փակած էր, մետալիները ծովուն  
մէջ խեղդելու համար:

Սարհատ ծովուն արկածումը կը դիտէր իր սրտի զարկերով, Բաժ-  
նըւած էր տարիներու իր զինակեց ընկերներէն ու հիմա, այնկո՞ծ ծով մը

կար իրենց եւ Աղթամար հաւաքուած մարտիկներուն միջեւ :  
Ինչ որ անըմբռնելի կը մնար, զուտ հայկական այս լճին թշնամանքն  
էր իր հարազատ զաւակներուն հանդէպ :

- Այս ծովը ի՞նչ կ'ուզէ մեզմէ... :

Սարհատի զժողովանքին Կորիւն անասրբերորէն արձագանդեց .

- Բարիք են այս ալիքները, այլապէս որեւէ ափի վրայ թակարդի  
մէջ պիտի իյնայինք : Վանի շրջանը, այս ջուրերով գոնէ մեզի օգնութեան  
կը հասնի :

- Վանեցիները հանգիստ թող, Կորիւն, անոնց աղօթքները Աղթա-  
մարի տաճարին մէջ, թեթեւ մեր ընկերներուն օգնեն որ անվատեալ անցնին  
արտասահման :

- Սարհատ, մեր ներկայ վիճակը շեւ տեսներ, միտքը կը յոգնեցնես  
ամուր հող իրենց ստեղծուած տակ ունեցողներով : Անոնք փորձանքներէն  
կրնան ազատիլ, իսկ մենք այս ծովու փորձանքէն զատ, արեան ծով մը  
ունինք մեր զիմաց, - ըսաւ Կորիւն :

Մարտիկները ալեհոծուաներէն կը նեղուէին եւ կը զբաղէին իրենց  
զէնքերը մաքրելով : Ձկնքը արդէն Ֆետայիին համար համրիչի դերն ու-  
նէր, անով կը զբաղէր, ժամանակը կարճելու համար :

Սիփանի զազաթը հետզհետէ կը մօտենար նաւակին : Արեւը մարը  
կը մտնէր : Սարհատի խումբը զիշերը փրկութեան լաստ մը կը նկատէր :  
Արդէն Ակրաթի ցցուն ժայռերը նաւակին կը նային մութ ու խոժոռ  
ծանրութեամբ :

- Տղա՛ք, սոքի, շարժեցէ՛ք, թմրած սրունքներով զիմացի ժայռե-  
րէն չէք կրնար մազլցիլ, - ըսաւ Սարհատ, ու սկսաւ հրմշակել զանի մը  
մարտիկներ, որոնք անշարժ կը մնային :

Նաւակը ժայռոտ զարափի մը մօտեցաւ : Բանուկ վայրերէն հեռու,  
բայց նեղ ճամբաներ ունէր զէպի նեմրութի :

Ֆետայիները ժայռերուն կառչեցան եւ սոք զրին հաստատուեւ հողին :

- Փա՛ռք Աստուծոյ... Քայլ առնելու քար ու հող կայ ստեղծուու  
տակ, - առաջին բացազանչութիւնը եղաւ բոլոր մարտիկներուն :

Նաւակը հեռացաւ լճի թափերը :

Խումբը մեծ զգուշութեամբ առաջին քայլերը առաւ, մասները զէն-  
քի բլթակին : Քարի ու քայլի խուլ ձայները ժայռերուն մէջ կ'արձագան-  
գէին :

Ու ահա՛, համազարկ մը վերի քարերէն : Թրջակտն բանակի շղթան,  
ծովու ճամբաները բռնած՝ իր կրակը ուղղած էր զարափի անցքերուն :

Բարձրադադակ հրամաններ ալ ու ձայն :

Ֆետայիները շեշտակի հարուածի տակ առին արդէն : Իրենց զէմ  
ցցուած ջոկատները, որոնք երեսուն քայլի վրայ էին : Ֆետայիները նա-  
հանջի տեղ չունէին ու արադընթաց կ'առաջանային զէպի թշնամին : Թուր-  
քերէն արդէն տասնեակ մը զիսկներ կը թաւալէին զարերուն մէջ :

Յանկարծակի հակահարուածը շփոթանքի եւ խուճապի մասնեց  
Քրջական վաշտը : Այլ ու ձայն հարուածներ ուղղուած էին ամէն շուքի :  
Թրջական տասնեակներն էին որ անորոշ ուղղութեամբ կրակելով, ապա-  
ւէն մը կ'որոնէին :

Ճամբան բացուած էր : Ու թշնամին կը հեռանար խուճապահար :

Սարհատի խումբը արագօրէն կ'անցնէր զէպի նեմրութի բարձունք-  
ները : Հօն իրար պիտի գտնէին ողջ հասնողները... :

Ձէնքերը կը խօսէին ու մարտիկները լուռ էին՝ ձուլուած իրենց զէնքին:

Ճ

Ախլաթի ժողովուրդը քարափին համազարկերու արիւնոտ ընդհարումը յանկարծակիի կը մատնէր որքան թշնամի բանակը, նոյնքան Սարհատի խումբը:

Անակնկալը միւտ Ֆետայիներու ճակատադրին հետ կապուած էր: Կուրծք կրծքի կայծակնային կռիւր բնական մասը կը կազմէր անոնց կեանքին:

Թրջական բանակը, որ յոյս ունէր ծովուն մէջ խեղդել ազատութեան դրօշակիրները, կայծակնային հարուածներուն կը հանդիպէր ու դեակնեցրէր ձգած՝ խուճապահար փախուստի կը մատնուէր:

Ֆետայիներն թանկագին զո՛ւ մը կու տային: Հին ու քաջակորով Աստուրը ծանրօրէն վիրաւոր, ժայռի մը կառչած կը մնար: Ընկերները արդէն հեռացած էին դէպի Նեմրութ: Աստուրը անշարժութեան մատնուած էր: Երկու սրունքները ջախջախուած էին:

Հոգեկան անհուն վշտով՝ հետունքը նայեցաւ: Այլ պիտի չկրնար Մովսատի անուշ ջուրերը խմել, ալ պիտի չկրնար Բարձրաւանդակի իր հին ընկերներուն հետ ազատութեան մարտը շարունակել:

Գիշերուան խաւարը հոգեկան ալեկոծումը կ'աւելցնէր Աստուրի հոգիին մէջ: Վանայ ծովուն ալիքները ժայռերուն կը բախէին, ծովն ալ փոթորկած էր:

Ֆետային՝ երկաթէ մարդ, քարէ հոգի...:

Աստուրը թշնամիին ձեռքը ողջ-ողջ գերի չի նստու վճիռը տուած էր: Ձէնքը ժայռին վրայ ջախջախեց եւ ինքզինքը ժայռէն վար նետեց փոթորկայոյզ ալիքներուն մէջ:

Սիփանի, Նեմրութի եւ Գրգուռի պազաթները երերացին, հովի մը հառաչանքը ձորերը լեցուց...:

Սարհատի խումբին կտրիճները, Նեմրութի ժայռին տակ հաւաքուած՝ նոր կը նշմարէին որ Աստուրը չկար...:

Նեմրութի բարձունքի մարտիկները կերպարանափոխուած էին:

Մովու տատանումներէն ազատած՝ առաջին քայլը որ կ'անէին Տարօնի աշխարհին մէջ՝ շեշտակի, արա՛գ, կուրծք կրծքի արիւնոտ կռիւ մըն էր Ախլաթի ժայռերէն վեր: Ու հիմա, արշալոյսը չբացուած, Ֆետայիները, ժայռերուն դրացնութեան մէջ, քար մը իրենց գլուխին տակ, կը հանդատանային:

Աստուրը չկար...:

Ու Նատուն նոր բերանը բացաւ.

- Տղա՛ք, սրունքս այրեցաւ: Ծար մը ըրէ՛ք:

- Նատո՛ւ, լըլլայ վիրաւորուած ես, - հարցուց Սարհատ անդիէն:

- Պարո՛ն Գէորդ, առաջին համազարկին, զնդակ մը ծունկին վերէն, մարմնէս անցաւ, բայց կուտի ատեն ցաւը չզգացի: Երբ ճամբան բռնեցինք դէպի Նեմրութ, ցաւերս շատցան: Զեռքս տարի շարվարիս, ձեռքս արիւնոտեցաւ: Ծամբան ձայն չհանցի, կենալու ատեն չէր...:

Վա՛յ, աունդ չքանդուի: Ժէն տայիք, գոնէ՛ կը կապէինք, եւ արիւնդ չէր քամուեր: - Ըսաւ Սարհատ եւ մօտեցաւ Նատոյին:

Արդէն վէրքը բացած էին:



Գնդակը զիստէն անցած էր, առանց սսկորը վնասելու:  
 Շապիկէ կտորով մը կապեցին վէրքը:  
 - Հիմա հանգիստ ըրէ՛, Նատո՛, - ըսաւ Սարհատ, - վիրաւորը ոտքը  
 միւսէն աւելի ամուր դարձաւ...

Ճ

Այն ե՞րբ էր որ այս ղէպքերը պատահեցան...  
 Ե՞րբ էր: Օ՞ր մը առաջ, թէ ամիս մը, տարի մը...  
 Դէպքերը որքա՞ն արագ կը դառնային, Ու օրերն ու ժամերը այս  
 անձնուրացներուն համար տարիներու տեւողութիւնն ունէին: Անոնց կեան-  
 քը կարճ էր, բայց խիտ ու բովանդակալից: Քարի պէս ծանր: Մէկ օրուան  
 կեանքը տարիի մը ծանրութեամբ կ'անցնէր անոնց գլխուն վրայէն:  
 Տեւողութիւն... Ի՞նչ էր տեւողութիւնը սարի այս զաւակներուն  
 համար: Ժամանակը կեցած էր իր ղէնթիթին վրայ, ու միայն ազատութեան  
 կռիւն էր նժարին մէջ: Հերոսական խոյանք, ու աչնիւ մահը, անմահու-  
 թեան ըմբռնումով:

Արեւը թագ կապած էր Սիփանի, Նեմրութի եւ Գրչուանի դագաթնե-  
 րուն: Վանի լիճը կը մնար արեւելք, ու այս լեռնական մարտիկները զո՛ւ  
 էին որ ազատած էին ծովու ալիքներէն: Նեմրութի բարձունքներէն անդին,  
 ղէպի արեւմուտք, մշուշէ ծով մը տարածուած էր: Մշոյ դաշտն էր, որ  
 իր գոյութիւնը կը յայտնաբերէր մշուշի մէջէն, թոնիրներէն բարձրացող  
 ծուէններով:

Տեստայիները իրենց հայեացքը դարձուցած էին ղէպի Մովսար, Սնտոք  
 եւ Սուրբ Կարապետի գմբէթները, այնքա՞ն հարուստ յուշերով:  
 Կարծես թէ տարիներ առաջ հեռացած էին այդ մտերիմ վայրերէն:

Ջօրք, ժանտարմ, ոստիկան ու քիւրտ Տարօնի մէկ ծայրէն միւսը  
 շղթայի տակ առած էին: Ամէն օր ընդհարման հաւանականութիւն կար:  
 Բայց Տեստայիներուն ոտքը ամուր հողի վրայ էր, ու արիւնի մէջ տապալը-  
 կաջ Տարօնի աշխարհը ամուր ու անձնուրաց կազմ ունէր: Ամէն տեղ Տե-  
 տայիներուն նուիրուած օժանդակ ուժեր կային, մահը արհամարհող:

Հովիւներ երեւցան պիմացի պուրակին մէջ: Սարհատ զանոնք ջովը  
 կանչեց: Ջրհորքներ էին: Անոնցմէ մէկը գեւղը զրկեց:

- Շուտ իջեր գիւղը եւ Մարգարին ըսէ որ խումբին պաշար փոխա-  
 դրէ՛ հոռ:

Հովիւը արագաբայլ վայրէջքը բռնեց: Մէկ ժամ հազիւ անցած՝  
 Ջրհորէն հինգ մարտիկներ, Մարգարի ղեկավարութեամբ, ջրի մը բեռ-  
 ցած՝ ձորերէն վեր ելան:

Մարգար Տեստայիներուն ղէմ կեցած, խօսքը Սարհատին ուղղեց.

- Դուք բարով դարձաք մեր սարերը, Սարհատ, տասնեւհինգ օր  
 առաջ, մեր գիւղի կռիւէն ետք, լսեցինք որ բոլորը անցած էք վան: Մեր  
 շրջանին վրայ խաւար ամպ մը պատեց: Ժողովուրդը լացով կ'ըսէր. «Ո՛ւր  
 դացին մեր կտրիճները»: Դուք մեր աչքին վրայ եկաք:

- Ե՛կն մնայ Ջրհոր գիւղը, ապրիք տղա՛ք: Մարգար, կոմիտէն եւ  
 մարտական խումբերը արթնան պահեցէք: Այս ճամբաներուն վրայ դուք  
 մեր փրկութեան կամուրջն էք: Այսօր հոս կը մնանք, գիշերը ճամբայ պի-  
 տի ելլենք ու անցնինք Մշոյ դաշտ: Թէ՛ ս'ւր պիտի ապաստանինք, անյայտ  
 է: Տեսնենք թէ ինչպէ՞ս գուրս պիտի դանք այս հրդեհէն: Տղաներուն՝ եւ

Հովիւներուն պատուիրէ խտորէն, որ լուռ մնան եւ ունէ մէկուն չխօսին այս Հանդիպման մասին:

Ճետախիները առատ պաշար ունէին: Անոնք ճաշը ըրին արագօրէն եւ փարեցան իրենց զէնքերուն:

- Մարգար, երբ գիւղ դառնաս, զգուշութեամբ տեղեկութիւններ հաւաքէ Աստուրի մասին: Ան միայ ծովափի ժայռերուն մէջ:

- Պարոն Մարհատ, լուրը հասաւ մեր գիւղ, որ երէկ գիշեր ծանր կռիւ մը տեղի ունեցած է Ախլաթի քարափին: Թուրքերը կ'ըսէին, - Բըրքական վաշտէն տառը դիակ մնացեր է այդ քարերուն վրայ եւ նոյնքան ալ վերաւոր: Ճետախիները կրակի արագութեամբ շղթան ճեղքած ու անցած են լեռները:

Ո՛չ Մարհատը եւ ոչ ալ Մարգարը գիտէին, թէ ծանր վիրաւոր Աստուրը ինքզինքը ժայռէն նետած էր Վանի ծովը, նախընտրելով ծով գերեզման մը, զերի լիջնալու համար Թուրքերուն ձեռքը:

- Պարոն Մարհատ, երբ մենք այս լուրը տոնիք ապահովուեցանք, թէ խումբը անվնաս անցած է: Եթէ Թուրքերը գիակ մը գանէին Ճետախիներէն, աղմուկով այդ գիակը կը պտտցնէին իրրեւ իրենց յաղթանակի նըշտնը: Եթէ Աստուրը վիրաւոր տեղ մը ապաստանած է, կը դանենք, ապահով եղիր:

- Քաջ կռուող էր Աստուրը, ափսոս պիտի ըլլայ իր կորուստը:

- Պարոն Մարհատ, երկու օր առաջ մեծ կռիւ մը տեղի ունեցեր է Աղթամարի վրայ, դուք հոն էիք արգօք, - հարցուց Մարգարը:

- Ի՞նչ կ'ըսես, մանրամասնութիւնները կըրցա՞ք իմանալ: Մինք չորս օր առաջ նաւակ առինք Աղթամարէն:

- Պարոն Մարհատ, Պիթիւնէն մինչեւ Ախլաթ մեծ իրարանցում մը կար Բըրքական զօրքերուն մէջ: Շատերը կ'ըսէին, թէ ամէն կողմէ պաշարած են Աղթամարը, բայց Ճետախիներուն շնչտակի հարուածներուն տակ, Թուրքերը շատ վառ կրած են եւ Ճետախիները առանց կորուստի անցած են Վան եւ Վանէն ուղղուած Պարսկական սահմանը:

- Աստուած տայ որ լուրը ճիշդ ըլլայ, - յարեց Մարհատ, - մենք փորձանքի ճանապարհներու վրայ ենք, գոնէ՛ անոնք այս դժոխքէն ազատին:

Մարգարը, ջրհորցիները հետը առած՝ կէսօրին գիւղ իջաւ:

Ճետախիները պաշար ունէին: Գիշերը ճամբայ պիտի ելլէին զէպի Սասնոյ լեռները:

### ԴՈՒՔ ԲԱՐՈՎ ԴԱՐՁԱՔ ՄԵՐ ՍԱՐԵՐԸ

Օգոստոսեան լուսնեակ գիշերով բնութեան խաղաղութիւնը կը հետար Մշոյ դաշտին վրայ, երբ հարիւրէ աւելի գիւղերը թշնամիի կրունկներուն տակ կը տքային:

Մարհատի խումբը կ'անցնէր Վարդենիսէն, կը կտրէր Մշոյ դաշտը ու կը մազլցէր Մառնիկի լեռները:

Խումբի անցքը կայծակի լոյսի մը գիկզակին կը նմանէր: Հուսնի լոյսը զէնքերէն փայլ մը կը պրկէր եւ լոյսի կայծ մը կը մզէր խաւարակոտ ափսոսներէն ներս:

Հաւասարիմ եւ դադտնապահ քանի մը խմբապետներ միայն իմացան Սարերու Աւլանի վերադարձը: Երբ արշալույսը բացուեցաւ, անոնց դէմքին վրայ խորհրդաւոր ժպիտ մը կար, ու յոյս կը ճառագայթէր անոնց աչքերէն: Ժողովուրդը անոնց դէմքէն առկախ, ինքն ալ վարակիչ յոյսով մը կը դիմաւորէր ծաղող արելը, ոտանց ինչուն զիտնալու, առանց ինչուն հարցնելու: Գիտէին, հաստատօրէն զիտէին՝ թէ այդ պատասխանատու խմբապետներուն դէմքի ամէն մէկ արտայայտութիւնը իրենց ճակատագրի անխարդախ հայելին էր:

Փրկութեան դօտի մը կարծես ունեցան, դառնութեան ծովու այրքանքէն ազատելու իրենց ճիգին մէջ:

Յոյսի խորհրդաւոր ժպիտը, մէկ շարաթ ետք, բանտի հաստ պատերէն ներս թափանցեց: Միտաւրի Արութը, հարուածներուն տակ աչքին լոյսը կորսնցուցած, լուսեղէն ժպիտ մը դէմքին՝ կ'երեւար բանտարկեալներուն մէջ: Անիտա խոստովանութիւն մը այրք կու տար բանտի շրջաններուն զարնուած քանի մը հազար յեղափոխական բանտարկեալներուն մէջ:

Նպատակիւս հասնիմ միայն.

Թո՛ղ զիս հանեն կախազան...

Երբզ աղօթքի հանդոյն, մրմունջ գարձած էր շրթաշունչներու շրթութունքին:

Այդ օրերուն, բանտին մէջ, իր մակհանացուն կը կնքէր դադափառական հին դործիչ մը, ափսոսանքի հտտալ խելով ճարտի ամբողջ ժողովուրդէն: Բողոքի կողմէ սիրուած այդ դործիչը, Հրայրին հին դործափէցներէն, Գիրքեփանքի Վարդանն էր, որ շղիմանալով ժողովուրդի կրօն անպատուս գծախտութեանց, ներկայացաւ Մշոյ կառավարիչին եւ բռտ:

– Ինչո՞ւ կը տանջէք այս ժողովուրդը, ինչո՞ւ այս անձնը մարդիկ շրջալի զարկած էք: Եթէ պատասխանատուն կ'ուզէք պատճել, ա՛հա՛, ես, եկած եմ ձեզ յայտնելու որ այս ժողովուրդը իմ հրահանգով գործած է, է՛ս եմ պատասխանատուն: Խղիազանի Արմենակին (Հրայր) հետ, մենք միասին գործեցինք: Հրայր սպաննուած է: Ինձի ի՞նչ պատիժ կ'ուզէք տուէք, այս խեղճ ժողովուրդը հանգիստ ձգեցէք...:

Վարդանը բանտարկեցին եւ անհուն շարշարանքի ենթարկեցին: Մէկը սղաճարդութենէ զրկուեցաւ, միւսը՝ աչքի լոյսէն, ու անձնագրով վարդանը՝ իր կեանքէն:

Ողբերգութիւնն ու յոյսը իրար բախելով, Տարօնի Աշխարհը կը ցնցէր:



Մովսսարի արեւելեան քղանցքին, Մառնիկի բարձունքին վրայ, մեծղի ծառերուն շուքին տակ՝ Ծեւտայիները ապահով հանգիստ մը կը վայելէին:

Սարերու Աւլանի դէմքը պայծառ էր, աչքերը խօսուն փայլ մը ունէին եւ մշտաշարժ՝ ծառէ ծառ կ'անցնէր, զինակիցներուն կը նայէր, ապա քովի ժայռին կռթնած՝ Հայնազըր մշուշոտ դաշտին, գերեզմանիկ վերացում մը կ'ապրէր:

Գարիւն՝ որ ուշադրութեամբ կը հետեւէր Սարհատի շարժումներուն, մտաեցաւ անոր, ինքն ալ ծառին կռթնած՝ հարցուց.

– Գէ՛տ'րդ, մտքիդ մէջ ճախարակ մը կը դառնայ ու դէմքիդ վրայ տօնական բան մը կայ, ի՞նչ կը մտածես:

— Միքելի Կորբեն, շղարմանաս եթէ ըսեմ, որ կարծես նո՛ր ծնած էմ: Հայրենի այս ծառաստանը աչքիս թագաւորական ապարանք կ'երեւի, այս մեր խումբը անպարտելի բանակի տեղը կը բռնէ: Անհուն երջանկութիւն մը սիրտս կ'ուռեցնէ: Փառք կու տամ Աստուծոյ, որ վերադարձանք մեր լեռներուն: Տասնըփնչ տարիներ այս լեռներէն եւ ձորերէն անցայ ու գարձայ: Բայց այսօր միայն խորագէտ զգացի, թէ ազատութեան գրօշակիր այս բարձունքները որքա՛ն մաս կը կազմեն մեր կեանքին: Մեր վերադարձը ազատազրակուն Սրբազան շարժման ի պատիւ բարձրացած գրօշակ մըն է:

— Իրաւունք ունիս, Սարճա՛ւ, մեր վերադարձը մեր ժողովուրդի արիւնած սրտին սիրտփանք մըն է: Ի՛նչ զոհողութիւն որ ընենք, արժանի է մեր ժողովուրդը, որ ամէն ինչ նուիրեց ազատութեան պայքարին, ահա՛ ասանըփնչ տարիներէ ի վեր:

Ճիշդ այդ վայրկեանին, Մառնիկի խմբապետը, քանի մը մարտիկներուն հետ անտառը մտաւ, խոյ մը հետերնին: Պաշար բերած էին: Անոնք Սարճատն ու Տիտայիները բարեւեցին.

— Մեր աչքին վրայ եկաք, Պարո՛ն Գէորգ, մեր զիւղերն ու լեռները սուզի մէջ էին: Յոյս բերիք մեր լեռներուն: Հազար բարով եկա՛ք...

— Ապրի՛ք, տղաք, պաշարը իր կարդին, բայց այս խոյը մատաղ պիտի ընենք.— ըսաւ Սարճատ: Այսօր ազատութեան նոր տունն է.— ու աւելցուց.

— Արա՛մ, դուն Սուրբ Կարապետի վանքին աշակերտած ես, նաեւ քահանայի տղայ ես, աղօթք մը կարգայ այս խոյի գլխուն եւ զոհէ յեղափոխութեան յաջողութեան ի խնդիր:

Արամ զորժի անցաւ: Մառնիկցիները սնոր կ'օւզնէին, իսկ Ֆիտայիներէն քանի մը հոգի, անտառի ծառի ճիւղերէն խարոյկ մը պատրաստելու ելան:

Մատաղը կար հոգիներուն մէջ:

Բարձունքին արձանացածները, արիւնոտ ճակատամարտէն ետք, նոր ազատամարտի մը պատարագումը կը զգային այս լեռներուն եւ անտառներուն շնչոցներուն մէջ:

Մառնիկի մարտիկները զենուած խոյը խորոված կը պատրաստէին անձնուրաց խոյերուն համար, ու կը կրկնէին.

— Դուք բարով եկաք, մեր աչքին եկաք: Թշնամին մեզ վառեց: Տիտայիները երբ այս լեռներէն հեռացան, կրակէ կարկուտ տեղաց մեր ժողովուրդին գլխուն... Դուք բարով գարձաք:

Սարճատ զորովով նայեցաւ Մառնիկցիներուն ու աւելցուց.

— Ա՛յ տղաք, մեր վերադարձը ձեզ նորէն հրդեհի մէջ կը նետէ:

— Պարո՛ն Գէորգ, ձեր երթալէն ետք դանակը ոսկորին հասաւ: Մեր ժողովուրդը, որ կը կարծէր թէ քիչ մը պիտի խաղաղի մէջտեղը, հիմա, ամէն օր, ձեռքերը դէպի երկինք՝ կը հարցնէ.

— Ո՛ւր գացին մեր կեանքի պաշտպանները, անոնց հետ կուռիլ ու մեռնիլը փառք է մեզի համար:

•••

Ձինջ երկինք մը՝ բարձունքին վրայ: Կաղնի ծառերու տերեւներուն ընդմէջէն ծուխի ծուէններ: Խորովածի բոյր եւ զէնքերու փայլփրում: Հե-



բան պէս մեծդի մարդիկ՝ շարժման մէջ: Վանքերը ուխտազնայութիւն չու-  
նին: Կրօնականները աղօթքի կիցած են շարք խափանելու համար:

Դատան իրականութեան հակադասակերպ կը տեսնենք Մտանիկի վե-  
րելքին՝ անտարուով դժբխտոր: Վանքերու ուխտազնայութիւնը փոխա-  
դրուած է այս անտարը, ուր ազատութեան ուխտաւորները անթարթ աչ-  
քով կը նային թշնամիին:

Մովսսարի գառիթափներէն թռչունի մը ճիւղը...

Սարհատ դէմքը դարձուց երկնակարկառ ժայռերուն:

— Տղա՛ք, վերի ժայռերէն լսուած թռչունի ձայնը նշանախօսք մըն  
է, մէկը թող պտտասխանէ: Սասնոյ խումբն է, որ պտտասխանի կը  
սպասէ:

Աւրանի Արամը ծառի մը վրայ բարձրացաւ, թռչունի ճիւղ արձակեց  
ու կրկնեց:

Վերի գառիթափներէն խումբ մը մարտիկներ դէպի ձորը խուժեցին  
ու քանի մը վայրկեանէն երեւցան անտառին մէջ:

Հին մարտիկները գրկախառնուած են, շատերը իրարու վզէն կախ-  
ւած: Անհաւատալի իրականութիւնը ցնցած է բոլորը:

Կրնայի՞ն երեւակայել, թէ արեան ծովերէն անցնելով օր մը իբր  
ողջ ու առողջ պիտի գտնէին Մովսսարի գառիթափներուն վրայ: Լեզու-  
ները բռնուած են կարծես: Իրար փաթթուած կը մնան: Երես երեսի՛ ման-  
կացած են բոլորն ալ: Հոն են Սպաղանաց Մակարն ու Մարգէն, Գալէն ու  
Յակէն, Մանուկն ու Ախօն, իրենց ընտիր մարտիկներով: Սարհատի  
սիրտը ուռած էր ուրախութենէն, առաջին բերանը բացողը ինքը եղաւ:

— Փա՛ռք Աստուծոյ, ողջ պտայ ձեզ այս ժայռերուն մէջ:

Սպաղանաց Մակարը, որ հայրական գուրգուրանքով վերադարձող  
մարտիկները շոյեց ու շօշափեց իր աչքերուն հաւատարու համար, փլեցաւ,  
լաց ու ծիծաղով:

— Դուք բարո՛վ եկաք, իմ աչքի լոյսին վրայ եկաք... ու վար ծռե-  
ցաւ, քարերը համբուրեց, կաղնի ծառերուն երեսը ջսկ ու աւելցուց:

— Դուք մեզի յոյս բերիք, այս արեան աշխարհին մէջ ազատութեան  
ձայնը ձեզ հետ բերիք: Դուրսէն եկած արծիւները թռա՛ն, գայի՛ն:  
Դուք այս լեռներուն հարազատն էիք, մեզի՛ դարձաք: Ձեր հոգուն զուր-  
պան: Դուք բարո՛վ եկաք...

Քեռի Մակարը յուզուած էր: Յուզուած էին բոլորն ալ:

Սարհատ՝ Մակարին:

— Տնաչէ՛ն Մակար, մեզ համբուրեցիք, անցար քարերն ու ծառերն  
ալ համբուրեցիք, ի՞նչ է, Սուրբ կարապետի վանքին մէջ կը կարծես ինք-  
զինքդ:

— Գէ՛ո՛րդ, այսօր, այս անտարը Սուրբ կարապետէն աւելի՛ սուրբ է,  
այդպէս չէ՛, աղա՛ք:

— Այդպէս է, քեռի Մակար,՝ ձայնեցին բոլորը,՝ Սուրբ Սահակ  
Հայրապետը քու բերնով կը խօսի:

Անտարը մեծցաւ, լեցուեցաւ, աշխարհ մը դարձաւ, Տարօնն ու Սա-  
սունը կարծես կեդրոնացած էին այդ բարձունքին վրայ, ու սպարապետ  
Մուշեղ Մամիկոնեանի բանակներու կրօնկներուն տակ, հայոց աշխարհը  
կը փնդար:

և

Մատաղներ շատցան Մտենիկի բարձունքին:

Մարտական խումբը զիւղի բոլոր բարիքները փոխադրած էր կաղնիէ անտառին մէջ:

Ճեղատիներու բանակը առատօրէն կը վայելէր երկնքին բացուած այս սեղանը, որուն վրայ ազատութեան կարօտ հայ զիւղացիներու սիրտը նուիրաբերուած էր:

Ու Փետայիներու հաւատքը կը պողպատուէր հաւաքական ու անհատի գոհողութեան այս սրտատուչ փերաբերմունքէն:

Տարօնի ամբողջ աշխարհը, իր լեռնականներով եւ դաշտի դանդաղութեամբ, մէկ մարդու պէս բեմին վրայ էր, ազատութեան արիւնոտ դրօշին տակ: Հաւաքական գոյամարտի դժնդակ պայթարը շարունակող ժողովուրդը Մարերու Ալյանին մէջ Սասունցի Դաւիթը կը տեսնէր:

Այս մթնոլորտը կար Մովսարի բարձունքին վրայ: Ծառերը կը խօսէին, ժայռերը կ'արձագանգէին, ծաղիկներուն բուրումնային մրմունջը կը լսուէր զեփեփունքին մէջ: Այդ բոլորը Տարօնի ժողովուրդի հոգիէն բխած խօսքն էր Մարհատին ուղղուած:

— Մարհատ սիրելի, գուն բարո՛վ դարձար մեր սրտին մէջ: Մեր բազուկը կտարած էր, պողպատով զօղեցիր:

Ու Մարհատ խորհուրդի նստած էր մարտական ընտրանիին հետ:

— Ի՞նչ պիտի ընենք, Ի՞նչպէս պիտի ընենք:

Ճեղատի կեանքը կարճ, ժողովը կարճ կը տևէր:

Զեկուցումները սակայն սրտանմլիկ էին:

— Պարո՛ն Գէորգ, Թուրքն ու Քիւրտը կատղած շուն դարձած են: Ճեղատիներու վախը չունին: Գիշեր ու ցերեկ զիւղեր կը խաշեն, — Մուշէն հասած սուրհանդակն էր խօսողը, որ կեդրոնական կոմիտէի նամակը հասցուցած էր Մարհատին:

— Մուշ եւ դաշտ տեղաւորուած Սասնոյ ժողովուրդը Ի՞նչ վիճակ ունի, — հարցուց Մարհատ, — անոնք արդէն ամէն ինչ ձեռկացած են:

— Գէորգ, մոռցայ այդ մասին քեզի ըսելու, — մէջ մտաւ Մակար, — Սասնոյ ժողովուրդը քանի մը օր առաջ արդէն վերադարձաւ Սասուն եւ կ'օգնուեցաւ իր այրուած տուներու պատին տակ:

Մարհատ զեկուցումները կը լսէր մտազբաղ դէմքով:

Անանական բռնակալութեան մը մէջ կը դաւարուէր Տարօնի ալխարհը:

Սուրհանդակները ըսելիք շատ ունէին:

— Դաշտի զէնքերը կը հաւաքեն, Պարո՛ն Մարհատ, զիւղերը օդակի մէջ առած են, ծեծն ու բանտարկութիւնները ամենօրեայ են: Ծեծի տակ մեռնողներ կան, որոնք մահը նախընտրեցին եւ զէնքերուն պահեստները ցոյց չառին:

Միւս սուրհանդակը կ'աւելցնէր.

— Կտարած քանի մը զէնքեր կու տան Ալյայի Պէկի վճռականներուն, ըսելով՝ որ ունեցած շունեցածը այդ է: Ու ծեծը կը վերակսի: Բայց զիւղական մարտական խումբերը ամուր փակած կը մնան իրենց զէնքին, որ վերջին յոյսն է:

— Բանախ տանջանքները չափ ու սահման չունին, — կ'ըսէր Մուշէն:

Հասած սուբսանդալը, — արդէն պիտէք, Դիրքեվանքի վարդանը բանտին մէջ մեռաւ, ծեծի տակ, Աւրանի Ասօն եւ շատեր կտրեցին, Ծխուի Յարութը ա՛լ չի տեսներ: Բանտի Կ. Կոմիտէն, պարո՛ն Սարհաս, ձեր վերահարձը ողբերկէ կը գտնէ: Անոնք ալ, Դուրան-Բարձրաւանդակի Կ. Կոմիտէի պէս, կը թելադրեն խոհեմ շարժիլ առ այժմ, եւ եթէ անհրաժեշտ ըլլայ, խտտօրէն հարուածել, որպէսզի թշնամին ցնցուի:

— Մուշէն խոհեմութեան քարոզ, բանտէն նոյնպէս, — ըսաւ Սարհաս, — յուսալիցը միայն բանտի ընկերներու վերջին թելադրանքն է: Մեր ընկերներուն անցնինք:

Սուբսանդակներն ու Մառնիկի մարտիկները քաշուեցան անտառի միւս ծայրը:

Կարգապահութիւնը խիստ էր, ու իրենք պիտակ էին իրենց արարքին:

Սարհաս խումբերն ու խմբապետները ակնարկին տակ տաւ.

— Կորի՛ւն, ջու ընտիր տղաներով կ'իջնես զաշտ, կոնակդ Ս. Կարապետի կողմերը: Ձէնքերը կը հաւաքես, ու միայն կոտորածները կը թողուս զիւզապետներուն, որպէսզի զազաններուն որկորը նետեն: Մնացածը դուն գիտես: Մեզմէ աւելի վարպետ ես, խորհուրդի պէտք չունիս: Սարհաս դառնալով Մակարին, տւելցուց.

— Մակա՛ր, դուն ալ խումբով մը Սասնոյ քարանձաւները կ'ապաստանիս: Փառք Աստուծոյ, Սասնոյ ժողովուրդը վերադարձած է իր լեռները: Այժմ, Սասուն ամէնէն չի: Վտանգուածն է: Դաշտը վտարիկ կ'ապարի: Մենք պիտի մտածենք ատոր առաջն ստանել:

— Դուն ս՛ւր պիտի պարտկիս, — Մակարն էր որ մտահոգ կը հարցնէր:

— Ես առ այժմ այս լեռներուն մէջ կը մնամ տասն եւ հինգ ընկերներով, — ըսաւ Սարհաս: — Սուբսանդակները մեր այս երեք խումբերուն կապը պիտի ըլլան: Խոհեմ շարժինք եւ պզտիկ դէպքերու տեղի չտանք: Երբ հարկադրաբար դէպքի բռնութիւնք, մեր հարուածը կայծակնային պէտք է ըլլայ:



Այդ ս՛ր, Մառնիկի բարձունքին, Աղասազրական Յեղափոխութեան խորհրդաւոր ժողովը կը վերջանար պարագլխուած հողիով:

Փետայական ուժերը երեք թեւերու բաժնուած, ճամբայ պիտի ելլէին, խաւարը ճեղքելով ի խնդիր ազատութեան լոյսին ու յոյսին:

Քեռի Մակար, արեւը մար շտամ՝ ճամբայ ելաւ դէպի Մովսաթի Քաջատացները: Սասունցի Փետայիները անոր ընկերացան: Իրենք պիտի որոշէին այն վայրերը, ուր պիտի գործէին անվտանգ: Սասունցի ժողովուրդը հազիւ շարաթ մը առաջ վերադարձած էր իր բնակավայրերը, ու կ'ապրէր քարերը լեզելով, բայց երջանիկ՝ որ ապուէն կը գտնէր հարազատ անասուններուն եւ ձորերուն մէջ:

Մասնագութեան մշուշը Մշոյ դաշտի մշուշոտ տարածութեան վրայ էր:

Կորիւնի խումբը պատրաստ էր ճամբայ ելլելու: Մառնիկէն երկու մարտիկներ անոնց պիտի ընկերանային մինչեւ դաշտի որոշ վայր մը: Ուրկէ անդին՝ դաշտի մարտիկները ծանօթ էին ապահով անցքերուն:

Քանձը խաւարը մթակուռ դաշտէն բարձրացած էր դէպի լեռները, որոնք աստղերու լուսաստուերներն ունէին:

Սարհատ քովը կանչեց Մատնիկի խմբապետը.

— Ինչո՞ւր է այս ժամերը պիտի ապաստանի: Դուն եւ երկու հաւատարիմ մարտիկներ միայն պիտի պիտեաք մեր թաքստոցը: Երբ Կորիւնի խումբը հեռանայ այստեղէն, դիւղին պիտի հաւատացնէք, թէ Ֆետայիները հեռացան ուրիշ շրջաններ: Այդ լուրը բերնէ բերան կը հասնի կոտավարութեան եւ զօրարանակին ու նաեւ մեր ժողովուրդին: Այժմ երկու ուղեկից նշանակէ, որոնք Կորիւնը պիտի առաջնորդեն դէպի դաշտ: Միւս մարտիկները եւ ընկերները դիւղ դրկէ՛:

Մէկ ակնթարթի մէջ Մատնիկիները դէպի դիւղ իջան: Երկուքը անոնցմէ կեցած էին Կորիւնի կողքին:

Գիշեր բարի ըսնէք, — ըստ Կորիւնի, — տեսնէք թէ վաղուան արեւը ինչպէ՞ս պիտի ծագի...

— Յաջողութիւն, տղա՛ք, ազատութեան աստուածը ձեզ ապաւէն... Չմոռնա՛ք որոշումը, ուր կտրեցու կապը... տիրուն պապը, — Սարհատի վերջին հրահանգն էր:

— Տիրուն պա՛պը... — կը լսուէր ժայռէն անդին, դէպի ձոր իջնող խումբի քայլերու տրոփին հետ:

Սպարապետական բանակը շկար այլեւս Մատնիկի բարձունքին:

Տարօնի զինեալ բազուկները գիշերուան մութին հետ, հայրենի անձանքուն եւ ժողովուրդի վարազոյրին ետեւ կ'անցնէին: Ընդյառակակայ խաւարին մէջ, թշնամիէն աննշմար, յոյսի լոյսեր կը շողացնէին շրջանէ շրջան, մինչեւ բանտի զնպանը:

Սարերու Աշխնը, տասնեւհինգ կորիւններուն հետ, երկնքի աստղերուն տակ, վերէն կը հսկէր դաշտի խաւարին վրայ ու կը մտածէր այն նոր գործելակերպի մասին, որ քանի մը օրէ ի վեր իր միտքը կը փոթորկէր: Ոչ ոքի չէր խօսած այլ մասին: Պո՛ռեմ եւ զգոյշ պիտի ըլլային: Քա՛ղ այդպէս շարժին խումբերը, մինչեւ ժամը հնչէ իր ուղեղէն պայթելիք օտումբին...



Դատան աշուն մը կ'ապրէր Տարօնի աշխարհը:

Թրքական զօրարանակները դիրք գրաւած էին Սասունի բարձունքները, նորաշէն զօրանոցներուն մէջ: Կռիւր լեռնաշխարհին մէջ դադարած էր ու զօրքերը հանգիստ կ'ընէին, առանց մխրճուելու խորխորասներուն մէջ:

Սասունցիները իրենց այրած տուները կը գերանէին, ձմեռուան ապաստան մը ունենալու համար:

Քարանձառներու խուլ անջոցէն Ազատութեան մարտիկներու շունչը կը զգացուէր անդունդէ անդունդ:

Մշուշոտ դաշտի ժողովուրդը արիւնստ շղթաներուն մէջ կը դալարուէր: Նեմըութէն մինչեւ Ս. Կարապետի բարձունքը հարիւր յիսունէ աւելի հայկական դիւղերը սպանութեանց, կողոպուտի եւ տանջանքի թատերաբեմ դարձած էին:

Բեմին վրայ կը վխտային ժանտարմներն ու ոստիկանները: Հրապարակ իջած էին քրտական ցեղապետները զինեալ խուժանով,

և ազատ էին ամէն վայրագութեան դիմելու: Վանքերը թրջական զորանոցի վերածուած էին:

Ու նոր տեսակի բանակ մը կազմուած էր, կառավարութեան գերատեսչութեամբ, Ջան Ֆնտայի կոչումին հակադրուելու համար ու Ճան Պէզար (կեանքէ յուսուհատ) անունը կը կրէր: Այսին Պէզար այս արիւնաբերութեան խառնիճաղանճին հրամանատարն էր, ու կոչուած էր արիւնաքամ ընելու այս ժողովուրդը:

Թրջական բռնակալութիւնը ճամբայ ելած էր զինաթափելու Դուրան-Բարձրաւաղակը, ու այս աշխատանքի ընթացքին, հայ գիւղերը ճգնաժամ, փոշի դարձնելու անմարդկային զազանութիւնները թոյլատրուած էին Մուլթանական հրամանագրով:

Ճ

Յուրա աչուն էր, երբ Կորիւնի խումբը դաշտին մէջ երեւցաւ:

Գիւղէ գիւղ մարտական շունչ մը գալարուեցաւ արսուներու և մարազներու պատերուէն:

Գիւղերները մթասուտեր շուքեր շարժեցան գլխաւոր ճամբաներուն բոլորտիքը: Ու յաջորդ առաւօտուն, եթէ քանի մը հոյս պահնուած կային այս ու այն գիւղերու պատերուն տակ, ճանապարհներուն վրայ, Ճան Պէզարնըռալ գիւղերը ալ թաւալուած գտնուեցան:

Գիւղերուան խաւարին մէջ խուլ գոյամարտ մը ծայր տուաւ: Երկու ամիսներէ ի վեր, այս վայրագ վրէժակները Ֆնտայի հարուածին հանդիպած չէին, ու դարձած էին անզուսպ:

- Պարոն Կորիւն, թշնամին մեզ մոխիր դարձուց: Զարննք այս անիբաները: Այս հրէշները միայն հարուածէն խօսք կը հասկնան: - Մարտական խումբերու անհամբեր և յուսահատ ճիւղն էր որ կը լրուէր:

- Զեր ձեռքը զէնքին վրայ, բայց գգուելութիւն անհրատելի է: Այս զազանները առիթէն օգտուելով՝ մեր անզին ժողովուրդը կոտորելու կըրնան ձեռնարկել: Մեր խումբերը ընդունակ են հինգ-ասա թշնամի շանտառակ ընել և քաշուիլ գիմացի լեռը: Ժողովուրդը կը մնայ անտէր և սուրբ ենթակայ:

Գիւղական մարտիկները իրենց մտահոգութիւնը յայտնեցին Կորիւնին.

- Արեան գին մեր զէնքերն ալ պիտի հաւաքեն: Որքա՞ն մարդիկ մեռան ծեծի տակ, քանի՞ քանի կիներ բզիկ-բզիկ եղան, որպէսզի զէնքերու տեղը մտանեն: Ալ համբերութիւն չմնաց, պարոն Կորիւն:

- Տղա՛ք, այս գիւղեր խկ, գիւղէ գիւղ՝ սուրհանգողի դրկեցէք: Զէնքերը մարտական խումբերը պիտի գրաւեն և թաքստոցի մէջ պահեն: Ես քանի մը գիւղերէն արդէն զէնքերը հաւաքած եմ և ապահով ձեռքերու յանձնած: Գիւղի հրապարակին վրայ գիւղապետն ու խմբապետը ծեծեցի, որ զէնքերը կուտակուեցան յանձնեն: Անշուշտ ձեւական ծեծ մը, իրենց գիտակցութեամբ: Ամէն տեղ պիտի բան, - Կորիւնը եկաւ, ծեծի և սպաննելու սպառնալիքով, ի՛նչ զէնք կար առաւ ու քնաց: Գիւղի ժողովուրդը արդէն վկայ է ծեծին, կոտորած զէնքերը թող հաւաքեն գիւղապետին քով, որ կառավարութեան յանձնէ:

- Պարոն Կորիւն, անմիջապէս գործի անցնի՛ք: Ժողովուրդի ձեռքէն ընտրի զէնքերը պէտք է փրկել: Մինչև հիմա կը կարծէինք թէ զէնքերը կարելի էր փրկել ժողովուրդի մէջ ցրուած պահելով:

- Գործի: Այս գիշեր սուրհանգակները գիւղէ գիւղ պիտի անցնին, նոր սուրհանգակներ ճամբայ հանեն, որպէսզի օր չկորսնցնենք: Ձմռանաք պատուիրէ՛ք սուրհանգակներուն որ շնչասակի հարուածեն իրենց ճամբան կարողները: Գիշերը թշնամին իր քաջութիւնը կը կորսնցնէ, երբ այրող գնդակի բռնութի:



Մուշ քաղաքի մէջ Գեղամ եւ Համազասպ կը դողային նոր բռնկումներու վտանգէն: Ղեկավար մարմնի պատասխանատուութիւնն ունէին իրենց ուսերուն:

Վանահայրերը Ս. Կարապետի, Ս. Յովհաննու եւ Առաքելոց վանքերուն մէջ, թրքական վաշտերու սուրինն տակ, կ'աղօթէին եւ կը ժը գտնելու մտածումը կ'որոնային:

Ժողովուրդը յուսահատութեան յատակը իջած, ազատութեան մարտիկներու շտապին հարուածները տեսնելու յուսալից բազմանքներով կ'օրօրէր իր փոթորկայոյզ հոգին:

- Ո՞ր են մեր անձնուէրները...

Ժողովուրդի հոգին փրթած կանչը գիւղերու հորիզոններէն անդին կը հնչէր:

Գիշերուան տիրապետութեան տակ՝ գէնքի շաշիւը երբեմն լռութեան մէջ կ'արձագանգէր: Բռնութեան ելած վրձնակները Փետայիի վախը զլացին եւ ցերեկին միայն ապախնեցան: Կեանքը բաժնուած էր երկուքի: Լոյսն ու արեւը թուրքին, իսկ գիշերուան խաւարը՝ Հայուն բաժին ինկած էին: Ի՞նչ հեղանք: Հայը ազատութեան լոյսին կը ձգտէր, ու խաւարին մէջ շարժելու դատապարտուած էր, մինչ թուրքը որ խաւարման իշխանութիւնն էր, լոյսն ու արեւը կը վայելէր:

Գոյութեան պայքարի ամէնէն դաժան օրերն էին:

Սուրհանգակները, աննկուն մարտիկներ, դաշտ, լեռ ու ձոր կը մաշէին՝ զեկուցումներ հասցնելու Սարհատին: Անոնք բանրերներն էին Կ. Կոմիտէին եւ բանտին ընտրեալներուն: Կարճ խօսք մը, ականջին փոփոտք մը, անուան մը յիշատակումը իրականութեան պատկերը արիւնով կը դունաւորէր: Ամբողջ ժողովուրդի մը հուռաքական կամքի ու ապրումի բոցափառումն էր, որ կը միար Տարօնի աշխարհին մէջ, հարիւրաւոր գիւղերէն բարձրացող մշուշոտ ծուխերուն պէս:

Ազատութեան ճանապարհին վրայ, Սասունի եւ Տարօնի ժողովուրդը իր հաւաքական ամբողջ կեանքը զոհողութեան սեղանին դրած էր:

Ու գեկուցումները ի՞նչ դառնութիւններ կը պարզէին.

- Պարո՛ն Գէորդ, բանտ, ծեծ, կողոպուտ եւ սպանութիւններ մեր ժողովուրդը կը հանդուրժէ ծանր տառապանքով, բայց թուրք եւ քիւրտ ցեղապանները ձեռնարկած են գիւղերն ու կալուածները սեփականացնել, կեղծ թուղթերով: Մեր տունը, տեղը, հողն ու անասունները արդէն իրենց ապրանքը կը նկատեն:

Ուրիշ սուրհանգակ մը.

- Պարո՛ն Գէորդ, մեր ժողովուրդի համբերութեան վերջին թելը կտրելու վրայ է: Ո՛չ միայն կեղծ թուղթերով գիւղերուն տէր դարձած են, այլ իրենց զինեալ՝ հետևորդներով եկած ու նստած են գիւղին մէջ: Քէօշք ու բերդ ունին, եւ գիւղերը դողի մէջ կը պահեն: Փառք Աստուծոյ, որ Կո-

րիւնը կարուկ միջոցներով զէնքերը ազանովեց: Հիմա դիւզացիները կտարրտած եւ անպէտք զէնքերը կը յանձնեն Ալայի Պէկին:

Մուշէն Հասած բաները խօսքի մէջ մտաւ.

- Ժանգոտած եւ անգործածելի զէնքերը եղան կտոցերով Մուշ կը Հասնին ի մեծ ուղեւորութիւն կառավարութեան: Քաղաքի թուրքերը զարմանքով կը տեսնեն այդքան զէնքերու կուտակումը: Արդէն հազար հինգ հարիւր զէնք Հասած է Մուշ: Թուրքերը աչքերը լայն բացած, կը բացագանչեն.

- Ալլա՛, Ալլա՛, այս կեալուրները որքա՛ն զէնք ունին եղիբ...

- Այդ զէնքերը կորուստ մը չեն, - ըսաւ Սարհատ, - մարտական տղաներուն պատուիրեցէ՛ք որ ամուր կառչած մեան իրենց զէնքերուն: Գիւշէ գիւղ, խումբէ խումբ, եւ կոմիտէէ կոմիտէ՝ շղթայ կապեցէք: Գիւշերները թշնամին պէտք չէ որ համարձակի դուրս դալ ճամբաներուն վերայ: Այս կարգադրութիւնը, մէկ օրուան ընթացքին, բոլոր գիւղերը պէտք է իմանան: Կապերը գիտէք: Սուրհանդակները եւ լրատարները այս գիշերն իսկ բոլոր ուժերը ոտքի պիտի հանեն: Օր կորսնցնելու ատենը չէ:

Յորհրդաւոր մտածում մը կար Սարհատի ունքերուն տակ: Շէն ու ուրախ շարժումները, որոնց այնքան վարժ էին իբր զէնքի ընկերները, անոր քով չբա՛ն: Կատարի հրդէ՛ մը կը բոցավառէր անոր աչքերուն մէջ:

Սուրհանդակները Սարհատէն բաժնուեցան այն Համոզումով, որ փոթորիկ մը պիտի պայթէր գալիք օրերուն:

Աշունի անձրևառ ու մշուշոտ գիշերը կը ճեղքուէր Մասնիկի բարձունքէն դէպի գալտ իջնողներուն առջև: Անոնք արդէն թրծուած էին երկար տարիներու յեղափոխական ջոհումին մէջ, նրկաթէ մարդ, քարէ հագի դառնալու համար: Անոնց լուռ ու տնչուկ անցքը, հոգիներուն մէջ փոթորիկ կը բարձրացնէր:

Երկնքի բարձունքէն հանելի, ցանկալի գող մը կը մողուէր կեանքի ու մահուան պատերազմի ելած հայ բազմութիւններու սրտին վրայ:

Ճ

Ձէն առիկն, ձէն առիկն: Սարհատի կանչին վրայ՝ ոտքի ելան, ըսին - Այսօր լուռ է, քան ամէն օր: Շատին՝ շատ, ու քիչէն՝ քիչ: Նլէ՛ք, հլէ՛ք երթանք, տեսնենք թշնամին ի՞նչ կ'ուզէ մեզմէ: Կա՛մ Աստուած այդ մարդուն կու տայ՝ կամ թէ՛ Աստուած կու տայ մեզի:

Ու հին Ֆետայիներ ձի նստեցան, քշեցի՛ն...

Հեքիա՛թ էր այդ, թէ Դաւիթի կանչ: Մարտիկները չհարցուցին: Սարհատի հրամանն էր: Ֆետային ձի պիտի նստէր ու կէս դիւերին՝ մութ ճամբուն վրայ կենար:

Ասկէ անդին... Ազատութիւն կամ մահ:

Կ. Ս.

(Շար.)

## Մ Ա Տ Ո Ւ Ռ Ի Ն

Ուտիներով եզերուած մատուռ մըն է մենաւոր,  
 Թառած լերան մը կրծքին, որքահայեաց ու անգոր,  
 Որուն բովէն գիւզակին կ'անցնի գետակը ծիծղում  
 Զոհեիւր կեանքն իր անանձ ջրագացի մը սիրոյն:

Փամանակէն փուզուած պաստերուն տակ իր մթին,  
 Լակ դամբանի մը լսոնաւ կը տիրէ վիշտն անընդմէջ  
 Եւ ուր անփոյթ քայլերով մողէզներ յար կը շրջին,  
 Մերք իյնալով ակամայ ռստայններու ցանցին մէջ:

Գմբէթն ի վեր կը նայի հին խաչափայտ մը տրտում,  
 Բախանձանքով մը կարծես պարգած թւերն երկնքին,  
 Աղանիներ ճիւղաքոյր հոն նազանքով կը քառին,  
 Եքերներու կաթնային կախարհ երազն աչքերուն...:

Կանգնած սեմին իր փաշտ կը մտածեմ տխրագին,  
 Թէ այս յարկին տակ կ'անէր ինչ վերացում հոգեկան,  
 Ուր խորանին երկնայաւս կ'իջնէր Հոգին հաչեալին  
 Պատարագի վեհիմաստ խորհուրդին մէջ արդիական:

Խունկի բոյրով պարուրուած կանթեղներու լոյսին տակ,  
 Այնտեղ որքան սերունդներ իրենց ազօրքը լացին.  
 Մամիկն իր վիշտը ողբաց, հարսն իր երազը սրտին,  
 Սրտամորմոք պատանին՝ սիրոյ բազմանքն անպակ:

Զկա՛ն մարդերն այն, որոնք զայն երկիւզով կերտեցին  
 Արիւնն իրենց խառնելով անտաշ ժայռին ու հողին,  
 Որոնք գեղբուկ թէպէտ հեզ, մտածումով այլ ներհուն,  
 Պայքարեցան, ապրեցան սուրբ իտէալի մը ճամբուն...:

Կամարներուն իր ներքեւ անոնց հոգին է պայծառ,  
 Որ կը հեւայ ունկերու կեանքի այն խօսքը լսուան,  
 Թէ մատուռն այս քարակերտ ըլլայ ինչ փոյթ շանթահար,  
 Երբ յախտեան կը մնան աննիւթ բերդերը հոգւոյն:

Ու դարերու դէմ հիմա յաշարձանի մը նման  
 Ցտտած աչքերը անթարթ այգարացի մը հեռուն,  
 Ան կը սպասէ, կը սպասէ վառ հաւատով առլըցուն,  
 Խորշակահար իր գարնան ոսկեմաճանչ յարութեան...:

ՅԱԿՈՒ ՄԱՆՈՒԿԵԱՆ



**ՔԻՒՋԱՆԴ ԵՂԻԱԵԱՆ**

**Մ Ա Գ Ա Ղ Ա Թ Ը**

Ոսպետանման թիկնեղ սա մարդը, որ հիմա Վնաստալու Փագար» վանատա-տունը կը մտնէր խուզարկու աչքերով, բժիշկ մըն էր. բայց մարդ արարածի մարմնական օխտերէն ծագող խնդիրնե-րէն նուազ չէին հեաաքբբեր գինքը՝ մարդ արարածի հոգիի առողջութենէն ծնած արուեստի գործերը:

Տօքթոր Բայունի բժշկութիւն կ'ընէր պիւղաւանի մէջ. սակայն ամէն ամա-պիտուն երբ քաղաք կ'իջնէր, հալէպ, իր գարմանատան վերաբերեալ գործերը լրացնելէ ետքը, զեղորայք եւ գործիք, անպայման կը հանդիպէր իր հայրենա-կից Ձէբչի Աւետի Վագարսին, Որովհե-տեւ զիտէր որ այնտեղ պիտի գտնէր հնութեան բեկորներ, կիլիկեան դրամ, կամ սղառք, կամ զարդարանք, նկար: Իր աչքերէն չէր վրիպէր ի'նչ առարկայ որ ժանդոտած էր ու նմուած: Ու տար-ւէ-տարի, հատիկ-հատիկ այս խանութէն կրելով, ան թանկագին յիշատակներ տարած էր, իր դարմանատան կից որահը զարդարած: Իր կեաքի հաճոյքն ալ ա՛յն էր եղած:

- Իհի՛ն, Տօքթոր. բարո՛վ եկար, բարով-բարով - գոչեց Ձէբչի Աւետ՝ իր բարեկամին մուտքը ողջունելով, ու յարգանքի ելաւ, ապա քովը նստած ան-ձին դառնալով յարեց - Տօքթոր Բու-լունի՛ Փաւառային թանգարանի Տնօ-րէն...  
- Բարով տեսանք - փոխազարձեց Տօքթորը - բայց շուն քրքէ՛ն ի վեր

սորվեր ես այսպիսի զուարթ սուտերով յաճախորդ որսալ:

- Արժանաւոր չէ՞ քեզի տուած տխ-րոսս - շարունակեց իր կատակարանու-թիւնը հնավաճառը - եթէ հաշուենք միջինը որ սա պազարէն քու տարած ա-ռարկաներդ՝ անոնցմով լման թանկա-րան մը չի՞ սարքուիր անպատին կեդ-րոնը:

- Կը թուի՛ նոր ստացած աղուոր բան մը ունիս, որ քու գէ՛մքդ ու լեզուդ զուարթացուցեր է - ըսաւ բժիշկը:

- Ունի՛մ հապա, ու շա՛տ կարեւոր բան - ըսաւ վաճառատէրը ու դարձեալ քովը նստողին ուղղեց խօսքը. - ես վաղը քեզի կը հեաաձայնեմ այդ մասին: Մարդը հասկցաւ ակնարկութեան իմաստը, թէ Ձէբչին նորեկ եկողին հեա առանձին տեսակցութիւն կ'ուզէր, ու - շա՛տ լաւ, ուրեմն վա՛ղը, - ըսաւ, դուքս ելաւ:

- Է՛, պատմէ՛ տեսնե՛ք՝ ի՛նչ կարե-ւոր բան - ըսաւ Տօքթորը՝ նայուածքը արաղօրէն շուրջի վարակներուն զարձը-նելով:

- Նստէ՛ որ իմանաս: - Են շատ ժամանակ շունիմ - ըսաւ բժիշկը՝ տեղաւորուելով քիչ առաջ ստա-րականի թողուցած աթոռին. - բե՛ր տեսնե՛մ, ի՛նչ ունիս:

- Հի՛մա, ճիշդ հի՛մա բան շունիմ, բայց վաղը անպայման պիտի տեսնամ: Դեռ քիչ առաջ ինձի հանգիպեցաւ... անունս փնտուր-հարցուցիր զիս զտեք

է... Հին, շատ Հին ծանօթ մը՝ Թուրքիայէն: Ու եթէ իբրև էլլէ ինչ որ ան խոստացաւ ինծի բերել, դուն կ'ունենաս, սիրելի Տօքթորս, այն ինչ որ տարիներէ ի վեր ինձմէ ուզած ես բայց ես քեզի մերժած եմ:

Տօքթոր Բալուշի աչքերուն մէջ փայտակեցաւ անմիջապէս՝ վաճառականի գրասեղանի ետին պատէն կախած ոսկի շրջանակէ մէջէն կայծկլտացող մանրանկարչական մազադաթեայ թերթը՝ ՚հին Անազիրէ մը փրցուած, իր մասնագիտութեան պաշտօնական վկայականի մը պէս: Տարիներէ ի վեր, քանի՜-քանի այցելութիւններուն, ուզած էր զայն ստանալ, ի՞նչ գնով ալ ըլլար, առանց սակարկութեան, բայց տէրը միշտ մերժած էր անոր մասին խօսիլն իսկ:

- Անիկա իմ Թալիսմանն է, իմ կեանքի պաշտնիքս, իմ ժօրս սրբութիւնը, Հոգիին մէկ մասն է ան, ու ոչ մէկ պայմանով կը բաժնուիմ ես անկէ - ըսած էր ան, ու կախուած տեղէն վար իսկ շէր առած մազադաթը:

- Տո՛ւր սա դարդանկարը գոնէ մէկ անգամ ձեռքերուս մէջ քննեմ - ըսած էր ինք, բայց տէրը միշտ մերժած:

- Գիտե՞ս - ըսեր էր Ահաւ, - Հեքիաթներու մէջ կը պատմէին թէ Հերոսը իր Հոգին կուպուած-կըպուած կ'ունենայ գազանի լիբան մէկ ժայռի ծերպին նստած բոյնի մը կամ քարայրի մը խորշին պահուած հաւկիթին, զոր եթէ ուրիշ մը գտնէ ու ձեռք առնէ՝ անմիջապէս այդ Հերոսի Հոգին կը նոցմութ, ոյժը կը շքանայ, կեանքին թելը կը փրթի... Այս իմ մազադաթ թերթիկս ալ Հերոսի այդ դաղանի Հոգին է ահա. մարդու ձեռք պէտք չէ դպլի տնոր:

Խորհրդաւոր սրբութիւն մըն էր այդ անմերձելի մազադաթը՝ պատին խաչած: Ու յանկարծակի սիրտը լնցնող յաղումի առաջին հակադրեցութեան տակ՝ գոչեց բժիշկը:

- Ի՞նչ կ'ըսես, ուրեմն դուն այս երազային մազադաթը ինձի՞ տալ կը խոս-

տանաս՝ եթէ վաղը մարդը քեզի բերէ ուզածներդ:

- Ո՛չ այս մազադաթը, այլ ասոր նման ուրիշ մը, եւ ուրիշներ...

Բժիշկ Բալուշի Թաղուհցաւ խորհուրդներու մէջ: Բայց անմիջապէս փորձեց լուծել զազտնիքը: Այդ եղանակը չէպի Մեքէն ուխտի շրջանն էր: Ու շրջանակայ երկիրներէն, մանաւանդ Թուրքիայէն հաճինէր ուխտի կ'երթային, դաղթող Թուշուներու երամներու նման. Հալէպ քաղաքը կարեւոր մէկ կայանն էր այդ ուխտասէրներուն, որոնք իրենց յետ կը բերէին միշտ Թանկագին արևելեան գիրքեր, կամ արծաթ ու ոսկինձ սպասներ, ՚հին դրամներ, զարդարանքներ, եւ վանոնք շուկայ կը հանէին՝ իրենց ճամբու ծախսը ապահովելու համար:

- Բայց ուրկէ՞ կու գայ այդ ՚ին բարեկամը - Հարցուց անհամբեր՝ քիչ մը եւս քակել ուզելով զազտնիքին կրծիկը:

- Պիթիխէ՛ն, Բաղեշէ՛ն - գոչեց միւսը. քու եւ իմ հայրենիքէն:

- Կը բաւէ՞ - ըսաւ բժիշկը, ու ջլապիրիկ քայլերով դարձաւ դէպի դուրս. վաղը անպայման ես հոս եմ նորէն, վա՛ղը:

- Վաղը, երեկոյեան մութին հետ, սանկ՝ շուկաներու Թահնէ պահուն - յանձնարարեց վաճառատէքը՝ ժպտով:

Բժիշկ Բալուշի կը քաշէր գէպի պանդոկը, բայց իր միտքը՝ իրմէ արտա: Քաղաքի իր գործերը լրացուցած էր արդէն, եւ այսօրն իսկ պիտի վերադառնար գիւղական: Բայց որոյնց որ մը եւս մնալ քաղաք եւ հանգիստիլ Բաղեշէն եկած Թուրք Հէմէշիթիին:

Իր տեսիլքին անձկութեամբ կը վերականդանանար հայրենի տուն Բապշըր, Արծրունեաց ՚հին Բղեշիներու բերդաքաղաքը, շոքս կողմերէն շրջապատուած բնութեան հրաշալիքներով. արեւելեան կողմէն «զարմանալատ» առուակներով եւ «ճաղկապահոյճ» պարտէզներով, արեւմտեան կողմէն՝ «ճիծաղածաւալ» ու

վիճարուխ յորդընթացս զետով, չարաւէն զգեղաւորեալ ծառասնկօք պողոտէաբք, իսկ հիւսիսէն զբարձրարերձ թաղերովը զբխտունէիցն, եւ բոլորէն վեր «վիճածիւ» բլուրներու գագաթին թառած մեծահոշակ Ամիրտէօվէթ Վանքը, Ս. Կարապետ Յովհաննէս Տաճարով, որ ժէ-ժէլ զարերու կամարին, բարձրագոյն ուսմանց կեդրոն եղած էր, ծաթւայցիի աշակերտ Բարսեղ Վարդապետի ու Վարդան Բաղդիւցիի նման «երջանկագործ ու առաքելաշարժող» ուսուցիչներու ինամբին տակ, եւ համբաւուած որպէս «համալսարան», ինչպէս դայն կոչած էր հարազատ աշակերան ու վըկան՝ Յովհաննէս Կոլոտ:

Յիշեց անձիջապէս, որ Հայոց միջնադարեան միւս վանքերուն պէս, Բաղդիւցի Ամիրտէօվէթի մէջ եւս կեդրոնացած կար ճոխ մատենագարան մը զարմանալի պէս-պէս մատենիւք ու լի ամենայն զբեամբք աստուածարանակաւօք եւ փելիտոփայակահիւք: Եւ Ամիրտէօվէթի այդ մատենադարանի ընտիր գիրքերէն էր որ, Պոլսոյ վերակազմիչ Յակոբ Նալբան Պատրիարք օրինակներ բերել տուած, եւ ընդօրինակել տալով հիմը դրած էր Պատրիարքարանի մատենադարանին:

Սիրաը թնդաց յիշելով զեւ, թէ Բաղդիւցի «համբաւուոր» այդ մատենադարանին այցելած էր, ժթ գարու վերջին քառորդին, հայրենասէր Գարեգին Եպիսկոպոս Սրուանմտեանց, ու վկայած՝ թէ հոն տեսած էր «հարուստ թիւով մեռագիրներ», որոնք պահուած կը մնային քարուկիր ամուր պատերու ետին, եւ զժուր կրնար բացուել միայն ազգին երեսելիներու ձեռքին տակ պահուած բանալիով: Նոյն այդ մեռագիրները, Բաղդիւցի այցելութեան, 1904-ին, Բարդէն Վարդապետ (յետոյ՝ Կաթողիկոս Գիլիկիոյ) ցուցակագրած ու քննած էր, մօտ 100 հաս ընտրագոյնները գատած, որոնց մէջէն երեսուն բերած Ոսկեղարու անման Յիւլիէ Պատմիչի մէկ հին թանկագին օրինակը, որ իր թէգին հիմ ծառայած էր:

Գաւառի Թանգարանաւէրը կը քուլէր, բայց այլեւս Հալէպի փողոցներուն մէջ չէր որ կը քուլէր. իր հայրենի աշխարհ Բաղդիւցի բլուրներն էր որ կը մտազըցէր հեւալով:

Ամրող զիշերը անբուն անցուց Բըժիկ Բալուէին: Ի՞նչ պատահած էին արդեօք այդ լուսափառ մեռագիրներուն, զորս ընդօրինակող զըշաքերներ ծոճով եւ ազօթբով կը սկսէին իրենց դործին, ու տարիներու կեանք մը ամրող կը սպասէին մենաւոր խոցիկի մէջ, պնակ մը սպապտորով ու կուժ մը ջուրով, կ'աշխատէին յաճախ սպանալիքին տակ թշնամի խուժումներու: Նախ կը պատրաստէին մագաղաթը, սպիտակ ու ոգորկ, հայրենի լեռներու ուլիկներուն ու հորթուկներուն ժորթերէն: Ապա կը պատրաստէին սեւ թանաքը եւ զարդադիրներու գոյնզգոյն ներկերը՝ հայրենի բլուրներու ծաղիկներէն: Յետոյ կը նըստէին կը զըշաքէին նշանադիր առ նշանադիր, տոզ առ տոզ, էջ առ էջ գիրքը ամրող: Ոսկի, ծիրանի ու երկնածաւի գոյներով կը ծաղիկէին էջերը, իւրաքանչիւր Աւետարանի մուտքին՝ կամարագեղ խորան կը դծէին, Գլուխներու առաջին բառերը կը զեղազրէին, պատմութի դրուազները կը լուսազարդէին: Աւ լրացրինէ ետքը, ամուր կազմով կողքերը արծաթապատ կը զարդարէին սուրբերու նկարներով: Իսկ Յիշատակարանին մէջ, օրհնութիւն արտասանելէ ետքը իրենց մեկնասաներուն, ուսուցիչներուն, զստացողներուն, գիրքը «մազկողմներուն ու կազմողներուն», ծունկ մը ազօթք եւ ոգորմիս կը հայցէին իրենց «յոգնամեղ ու տրուազ անձին համար ընթերցողէն ու կը խրատէին:

«Ընթերցող, ներող եղիր զիրես խոշորութեան կամ անկանոնութեան, որովհետեւ զրեցի իմ սա ծեր տարիքին, աչքս տկար ու ձեռներս դողդողուն: Մերկ ձեռքով մի՛ բըռներ գիրքը, այլ՝ մտաւոր վարչամակով: Իջնը զարձուցած ատենդ՝ մատներդ թուքով մի՛ թրջեր: Զորւա՛յ որ նկարուած թերթերը վրցնես

բաժնեկա մորմէն: Անհաւատին ձեռքը շտա՛ս դէրքը: Ու եթէ մատնանս գողցուի կամ գերութի, զայն փնտրուես, փրկես ու ետ յանձնես Եկեղեցիի սուրբ խորանին»:

Իսկ այսօր, լուսահաւատ իր հայրերուն աչքի լույսն ու հոգիի սրբութենէն քիւրզկացած այդ գիրքերը, որպէս գլխալ գոյք» աշխարհի հասարակ շուկաներուն կը նետուէին... Ս', հեղանջը աշխարհի բեմերէն բարոյաւոր զմալուրթային սրբութեանց ու զմարդկային բնական իրաւունքներուն եւ զանխրատած ազգերու ազատութեան սկզբունքներուն:

Յանկարծ վերձակը մէկդի նետեց, ցատկեց նստաւ անկողինին... Բայց ինք քախտը պիտի ունենա՞ր վաղը իր հայրերու սրբութեամբ օծուն այդ Ձեռագիրներէն մէկ հատը բռնել բարձրացնել իր երկու ձեռքերուն մէջ, զնել իր ցածքած շրթներուն, ու նոր շնորհ տառնալ իր յառաջացող կեանքի աշունին:

Յա՛նքը օրը, կէսօրէ ետքը կանուխ ժամուն, Տոբթոր Բալունի Աւետի Անտառու Պաղարք վաճառատունը վերադարձաւ, ժամադրութեան պահէն դեռ շատ առաջ: Տեսաւ որ իրմէ ալ կանուխ եկեր նստեր էր երէկուան անձանոթ մարդը: Որսի հոտով դարանի սպասող աղուէսի մը պէս:

«Անուրդի դնելու խօսք չեմ կրնար տալ» եղան վերջին բառերը զորս լսեց ան երբ ներս կը մտնէր:

— Կը յուսամ՝ պարագի եկած պիտի չըլլամ — ըսաւ Տոբթոր Բալունի՝ չքմեղանք մը փորձելով իր կանուխ ժամանուրին համար:

— Հրամայեցէ՛ք, նստեցէք. կը կարծէի՛ աւելի ուշ պիտի գայիք. հոգ չէ՛ մեր բարեկամը օտար չէ, ինքն ալ կը հեռաբերութի արուեստի նիւթերով — ըսաւ Աէրլին ու միւսը ներկայացուց. — Հաճի Դաւիթ:

Լուս իրարու նայեցան: Տոբթոր Բալունին զգաց որ հիմա նստած էր մըլտցօրէ հնազանդի մը գէմը, որուն աչքերը

կը խուսափէին իրմէ ու կը թափառէին խանութի զարդարուն զարակնիւրուն մէջ:

— Ուրեմն դուք ալ կը հեռաբերութիք հնութեանց առարկաներով — դարապութիւնը խօսքով մը լեցնել ուզեց Բալունի:

— Ի՛նչ — ըսաւ Հաճի Դաւիթ. — երբեմն յարմար կոտորներ կը հանդիպին, ու ես զանոնք մինչեւ Եւրոպա կը գրկեմ: Համեստ ապրուստ մըն է՛ կեղծ: Բայց ամենէն շատ գնահատուածները Հայկական Ձեռագիրներն են: Եթէ մէկ-երկու հատ կարենանք ձեռք ձգել՝ հազարներ կրնանք գանձել:

— Մեր լուսապաշտ հայրերը — ըսաւ Տոբթորը — այդ Ձեռագիրները երբեք վաճառքի համար չէին գրչապրած, այլ՝ Աստուծոյ փառքին ու մարդոց փրկութեան համար: Բայց ինչքա՛ն փոխուած են աշխարհի բարքերը: Մարդիկ այժմ զանոնք շուկայի ապրանքի վերածել են: Հայութեան այդ ամենէն սուրբ գանձերը այսօր ցրուած են հայերէն կարգալ չգիտցող մարդոց թանաքաքաններուն: Մեր հնագոյն Ձեռագիրը, Թ. դարէն, գրուած 887 թուականին, կը դրոշմուի հիմա Մոսկուայի Պետական Թանաքանին մէջ, նախապէս՝ սեպհականութիւնը Հայոց Լազարեան Զեմարանի:

— Ուրեմն հազարամակէ մը աւելի կեանք ապրեր է այդ մէկ Ձեռագիրը — զարմացաւ Աւետ. — ուրիշ ո՞ւր ունինք հնագոյն Ձեռագիրներ:

— Մեր երկրորդ հնագոյն Ձեռագիրը կը գտնուի Վենետիկի Միխիլաբիանց Ձեռագրատան մէջ, գրուած 902-ին, անունովը «Միլլէ Թագաւի»-ի, որ աղջիկն էր Բազառատնեաց Մմբաս Գ. Թագաւորին, ու կրնը՝ Արծրունեաց Գաղիկ Թագաւորին: Իսկ երրորդ հնագոյնն է Վեմիլանի Աւետարանը, գրուած Ժ. դարու վերջերը, 989-ին, եւ ընդօրինակուած՝ Ռսկիգարու ընտիր Մայր օրինակէ մը: Ուրիշ մը կը գտնուի Լոնտոնի Բրիտանական Թանգարանին մէջ, չօյնպէս Ժ. դարէն, եւ ուրիշներ՝ Պուսոյ, Պերլիի, Փարիզի, մինչեւ Ամհրիկայի

Թանգարտններուն մէջ, ինչպէս Պալթի-  
ժուր նահանգի Վոլոյքըրգ Արք-կալե-  
րիճի մէջ՝ 866-ի մէկ Աւուպիրը, նա-  
խապէս Պոլսոյ Օրթոքսիք թաղի  
սեպհականութիւնը: Եւ աշխարհի շոք  
հորիզններուն ցրուած ուրիշ Աեռա-  
պիրներ, եւ ուրիշներ, Հայու ստեղծա-  
գործ հանճարի ամենէն կենդանի վկա-  
ները՝ աշխարհի դատաստանին առջեւ...

- Ներկայիս, աշխարհի մէջ հայկա-  
կան ո՞րքան Աեռապիրներ կան կը կար-  
ծէք - հարցոց Հանի Դաւիթ՝ ընտանի  
Հետաքրքրութեամբ:

- Առնուազն քան հազար, ու թե-  
րեւ ջրաներկու-ջրաներեք հազար -  
պատասխանեց Տոքթոր Բալուշի - կէսը՝  
արդի Հայաստանի Պետական Անուգրա-  
տան մէջ, ինամբով պահուած եւ միջ-  
նադարեան մեր մշակոյթի ուսումնասի-  
րութեան աղբիւր ծառայած, միւս կէսն  
ալ արտասահմանի մէջ. Երուսաղէմ,  
Վենետիկ, Վիեննա, Նոր Զուլա, Կալ-  
կաթա, Պոլսո, Անթիլիաս, Չմառ, Հա-  
լէպ, Կիւրոս ու բազմաթիւ այլ գա-  
ղութներ: Ուր որ Հայ Եկեղեցին կայ՝  
չուն անպայման հայ Աեռապիր պիտի  
չտեսնուի: Հազարէ աւելի կ'եւլին, պակաս  
չեն կ'լլեր, նաեւ օտար պիտական թան-  
գարաններու, կամ հայ եւ օտար անձնա-  
կան Թանգարաններու Հաւաքածոները:  
Աեռապիրներու հաշիւով՝ մենք աշխարհի  
ամենէն հարուստ ազգն ենք: Եթէ միւս  
քրիստոնեայ ազգերու բոլոր Աեռապիր  
մատակները իրարու վրայ զննենք -  
Յոյն, Լատին, Ասորի, Ղպտի եւ Եթով-  
պացի - անոնց թիւը տակաւին նուազ  
կը մնայ քան Հայ Աեռապիրներուն թիւը:

- Ի՞նչ կ'ըսէք - գարմացաւ Ձերնի  
Աւետ. - մեր այսքան Փոքր Ածու ազգը  
ուրեմն այնքան աւելի՞ Աեռապիր ար-  
տադրած է:

- Բայց դուք Հայ Աեռապիրներու  
այդ «մեծ» թիւը մի՛ Համեմատէք մեր  
ժողովուրդի ներկայ «փոքր» համրանքին  
հետ: Որովհետեւ մեր ազգը այլքան  
զերպանց թիւով Աեռապիրները ար-  
տադրած է իր «մեծ ազգ» եղած դարե-  
րուն: Երեւակայեցէք՝ թէ Հայ Ազգը

ատենին ամբողջ Փոքր Ասիոյ տարածու-  
թեան վրայ նստած հոգի ազգ մըն էր,  
հազար ու հազար վանքերով ու եկեղե-  
ցիներով: Մեր ազգը պատմութիւն ունե-  
ցած, պատմութիւն կազմակերպած ու քա-  
ղաքակրթութիւն կառուցած ժողովուրդ  
մը եղած է: Եւ իր այդ աշխարհատարած  
տեսնին է ա՛նա, որ զբնագրած է թիւով  
եւ արուեստով զերազանց այդ Աեռա-  
պիրները, որոնք դարերու յափշտակու-  
թենէն ու փճացումներէն ետքն ալ տա-  
կաւին կը ներկայացնեն աշխարհի ամե-  
նէն պատկառելիները:

- Ո՞րքան եղած է թիւը մեր Աեռա-  
պիրներուն, հին ատեն, կը կարծէք -  
հարց տուաւ դարձեալ Հանի Դաւիթ:

- Կարելի չէ ճիշդ թիւը լինուալ  
- պատասխանեց Տոքթոր Բալուշի, -  
բայց մեր տոսներկորդ դարու ժառե-  
նագիր Օրբելեան յիշատակագրեր է, թէ  
Սելճուկներու արշաւանքին, երբ Հայեր  
Սիւնեաց Գաւառի Աեռապիրները մէկտեղ  
հաւաքեցին՝ գտանդէ պահելու համար,  
միմիայն Տաթև Վանքին մէջ մեկտեղ-  
ւած Աեռապիրներուն թիւը տակի էր քան  
տասը հազար... Արդ, եթէ Հայոց միայն  
մէ՛կ դաւառի Աեռապիրներուն թիւը  
տասը հազար կ'եւլէր, ուրեմն հայկա-  
կան միւս տասնը՛հինգ դաւառներուն մէջ  
եւս նոյն Համեմատութեամբ դանձու-  
ներուն թիւը ենթադրելով, կրնանք հաշ-  
ուել՝ թէ անուազն հարիւր-հազար,  
եթէ չափազանցութիւն նկատենք՝ դէթ  
տասը կիսուն շափ Աեռապիրներ գոյու-  
թիւն ունէին Հայոց Աշխարհին մէջ, մի-  
լին գարուն:

- Անհաշիւ հարստութիւն - գոչեց  
Հանի Դաւիթ. - հազար ո՞ւր դացած-  
կորսուած են այդ բոլորը:

- Մեծ մասով՝ Թալանուած, բզրկ-  
արուած, հրկիզուած՝ մեր ազգը նուա-  
ճողներու կողմէ, որպէսզի շի՛նք Հայու  
Հոգին որ անոնցմով կը շնչէր: Երբեմն  
ալ «զերուած» Աեռապիրներ փրկագին  
արուելով վերադարձուած են: Օրինակ,  
ներկայիս՝ Անթիլիասի Կաթողիկոսարա-  
նին մէջ կայ նշանաւոր «Բարձրերդի Ա-  
ւետարանը», զերահուշակ մանրանկարիչ

Թորոս Ռոսիկի ձեռքով լուսադարձուած ու կողքը արծաթապատ, որուն յաւելւածական Յիշատակարանները կը պատմեն՝ թէ ան երեք անգամ զողջուած է եւ երեք անգամին ալ Ատանայի Հայերը փրկագիրքը վճարած, զայն եկեղեցիին վերադարձուցած են: Կիլիկիան թաղաւորութեան դարերը եղան Հայկական ամենէն ընտիր Ձեռագիրներու պատրաստութեան շրջանը, մանաւանդ Բարձրերգի, Թրակարկի, Սիււապի եւ Ներսէս Լամբրոսացիի Վանքերուն մէջ: Ա. մինչեւ ներկայ դարս վերապրած Ձեռագիրներու մեծագոյն մասը Կիլիկիան շրջանի Ձեռագիրներն են:

Սակայն միայն թշնամիներ չեն փճացուցած Հայ Ձեռագիրները - շարունակեց Տօքթոր Բալուշի. - Հայեր իրենց եւս յաճախ անխնամ թողուցեր, փոտեցուցեր են զանոնք: Օրինակ, տասներեքնորդ դարու ժամանակագիր Առաքել Դաւրիժեցի, խօսելով Պարսկա-Օսմանեան մեծ պատերազմներու հետեւնքով ամայացած Հայ Վանքերու տըխուր վիճակի մասին, կը պատմէ թէ մեր հայրերու աչքերուս Ձեռագիրները փրատակներու անկիւններուն լքուած, փայտի չոր կոճղերու պէս իրարու վրայ խառնխուռն նետուած, մոխիրի ու փոշիի տակ կը մնային...

Ա. պատմե՞մ ձեզի՝ Վանայ Մովու Լիմ Կղզիի Ձեռագիրներուն պատահանը: Երբ վանահայրը իմացեր է որ Կաթողիկոսը այցելութեան պիտի գայ, վանքին մէջ յարգարանք ու մաքրութիւն ընելու ետանդով՝ Մատենադարը եւս կարգի դնելու ատեն, մէկդի հաւաքել տուեր է կիսաւեր հնամաշ Ձեռագիրները: Եւ որպէսզի Սրբազան Կաթողիկոսը գալուն՝ զինք չյանդիմանէ, զանոնք անխնամ թողուցած ըլլալու յանցանքով, այդ վանահայրը հրաման տուեր է, ու վանականները Ձեռագիրներու այդ ամբողջ հաւաքածուն Վանայ Մովու թափեր են... անոնց ծաղկումներուն ներկէ՛ Շամիրամի առասպելական չուլունքներուն պէս՝ Վանայ Մովու անպատճառ մը եւս ներկեր են խոր կոպտոյտով...

- Անցածը անցած է, ու կորսուածը կորսուած - եզրակացուց Հաճի Դաւիթ՝ խոր շունչ մը առնելով. - մենք հիմա նայինք թէ ի՞նչքան կրնանք օգտուիլ մնացածներէն: Եթէ մենք այսօր կարենանք յաջող սակարկութիւն ընել Ձեռագիր բերող այդ մարդուն հետ, կրնանք իր միջոցով շատ գանձեր հաւաքել Թուրքիայէն:

- Դիւրին ատուար չկարծէք - գիտել ատուա դարձեալ Բալուշին. - այսօր թուրք կառավարութիւնը ինքն ալ գիտակցած է Հայ Ձեռագիրներու արժէքին, ու թոյլ պիտի շտայ որ անոնք Երկրէն դուրս հանուին: Ընդհակառակը՝ ինքն ալ զանոնք կը հաւաքէ թանկարան կը դնէ, որպէս թուրք նախահայրերէն մնացած գիրքեր:

- Ի՞նչ. կատա՞կ կ'ընէք-կոր: Թուրքը ի՞նչպէս թէ Հայ Ձեռագիրները կրնայ իւրացնել որպէս Վերջին նախահայրերու գիրքեր:

- Ընչ ախպէս ինչպէս իւրացուցած է մեր աշխարհատարած հոգերը, մեր հոյակերտ վանքերն ու բերդերը, մեր անլարժ ու շարժուն բոլոր Վերջին ժողովուրդները, մեր արուեստն ու Ձուհուհանքն ու կոմիտասեան երգերն իսկ, ու մեր ցեղին մնացորդները ամբողջ, բոլորն ալ թուրք...

Խօսքը կէս մնաց Տօքթոր Բալուշի բերանին մէջ, որովհետեւ նայն պահուն խանութէն ներս մտաւ վարանումով՝ սպասուած միջնորդը:

Վաճառականը անմիջապէս ոտքի յատկեց, վազեց, մէկ ձեռքը թելին անցուց, միւս ձեռքը երկարեց անոր երկրորդ թելին տակ ուտած ծրարը ազատելու: Բայց մարդը կարեւորութիւն չտրուաւ այդ շարժումին, ու եկաւ վարանումով կանգնեցաւ երկու հիւրերու դիմաց:

- Օտարներ չեն, բարեկամներ են - անպարեց ապահովցնել Ձեր Վեհա, ու զայն ներկայացուց. - Պիթիւսցի Վիլի-Օղլու Իֆրատ Ատիլ-Պատէ: Եւ անմիջապէս խօսքը անոր ուղղելով յարեց. - վստահ եղիք, մեր երկու բարեկամներն

ալ շատ պիտի գնահատեն այս ծրարիդ բովանդակութիւնը:

- Այլտհը դիտէ, ես վաճառքի ապրանք չունիմ - ըսաւ Վէլի-Պըլլու Իֆրաթ, ու ծրարը պինդ սեղմեց թեւին տակ. - ես զատի բերած եմ միայն Հին արդար պարտք մը հասուցանելու: Ու շուրջը նայելով տակցուց, - ո՞ւր է, մեր փափազը պիտի կանչած ըլլայիր հոս...:

- Կը կանչեմ - փութաց պատասխանել Աւետ, - բայց նախ ուզեցի վստահ ըլլալ բերած դիրքերուդ մասին: Ահա երկու պատուական վկաներ այստեղ, ու Տոքթորը՝ ինծի եւ քեզի ալ հէմշէրի:

Երեք Հոյեքը լռեցին: Հաճի Դաւիթ սակարկութեան ճարդիկ տն մը նկատեց Իֆրաթ Ատիլ-Չատէի այդ յայտարարութիւնը: Իսկ Տոքթոր Բալունի ուշով կը դիտէր նորեկը: Գունատ շարվար մը հազած էր տն՝ վերը լայն, սրունքները նեղ: Կոնակին ունէր սեղմուած բաճկոն մը, դիլտան՝ շուխայէ կարուած գտակ, սաքին՝ քաւուկ ներքնով ու կտաւեսայ երեսով պարզ մուճակ մը, ճակատը արեւախանձ, ու կղակը մարուսաւոր, ճիշդ Մէքէէ գացող թուրք ուխտաւորի մը տիպարը, որ իր հագուածքովը անչփոթիկ կերպով կը դանազանուի քաղաքի միւս բոլոր բնակիչներէն: Բայց մարդը դէմքին ունէր հանդարտ վճռականութիւն մը, եւ ալքերուն՝ ուղղաշըշտ նայուածք մը, որ ակնածանք կը պարտադրէր:

- Գուզի՞ր բանանք ծրարը - հեղութեամբ հարցուց Աւետ:

- Պիտի բանամ միայն մէկ պայմանով, որ ուղիղ կտտարեա իմ պահանջներս - վճուեց Իֆրաթ:

- Կ'երդնում մեր մանկութեան բարեկամութեամբ՝ առ վկաներուն ուղիւ - վստահեցուց վաճառականը:

Մարդը ծրարը հանդիցուց սեղանին, եւ առանց ամբողջ բանալու՝ մէջէն քաշեց հանեց թերթիկ մը, գունապեղ թուշունի թեւի մը պէտ:

Թերթիկ չէր, արեւի ոսկի բոցով սկաւառակ մըն էր սեղան իջած մազա-

դաթի այդ բեկորը, դժայլական գոյներով ներդռնուած մանրանկարչական հրաշահեց մը: Կը ներկայացնէր փայտեայ խաչ մը, գետին պտուկած եւ արմատէն կտորած՝ բունը հողին միւրճուած, շորս թեւերուն ցցուն դամբրովը, որոնցմէ տակաւին արիւն կը կաթկթէր, ու խաչին վերեւ, կթերի մէջ սաւառնուն, մուշային տեսիլք մը: Եւ այդ երկուքէն՝ խաչէն ու տեսիլքէն՝ ճառագայթող լոյսը ողողած ամբողջ Հիւսիսային կիսագունդը ուշտարհին, մասնաւորապէս բոցավառած ցցուն գազաթնիւրը Տաւրոսեան եւ Անդր-տաւրոսեան լեռնաշարքերուն, մինչեւ Մասիս եւ Արարած՝ հեռուոր հորիզոնի խորքին:

- Սքանչելի՞ք է - բացազանչեց Տոքթոր Բալունին:

- Ուրիշ է՞նչ ունիս տեսնեք - ըսաւ Հաճի Դաւիթ:

Իֆրաթ Ազան ծրարին մէջէն դուրս թեւամբ թերթ մը եւս հանեց: Այս տնդամ էլին վերի կէսը շտորանք մըն էր, եռակամար, ամէն մէկ կամարին՝ խոյակներէն սկսած՝ թռչիկներու ու հղիկներու եւ ուլիկներու սճաւորուած նկարներով, վերիքը երկարած՝ աղեղնաւոր՝ կամարի ձեւին յարմարած, ու ստփերն ու թեւերը շարժումի դիրքով, կամարներէն կախուած՝ լուսաշատալ լապտերներ, ու ներքեւ՝ զրիչը ձեռքին ու մազաղաթը գիրկին՝ նստած սուրբը որ կը դէէ:

Վի ՍԿՁԱՍՆԵ ԷՐ ԲԱՆՆ...»

Բացման էրն էր Յովհաննու Աւետարանին: Եւ այդ բոլորը՝ անկարագրելի դոյներու համադրութեամբ, երկնային երաժշտութիւն մը ամբողջ: Էջը կը շարունակուէր լուսանցքի զարդանկարներով:

Յափշակուած երեք գիտողներու լռութեան մէջ, մարդը իր ծրարէն թերթիկ մը եւս քաշեց դրաւ սեղանին.

- Ահա՛ - գոչեց Աւետ՝ ձեռքը մազաղաթին ճետելով, - ասիկա այն նկարը չէ՞ զոր գուն ինծի ցոյց տուիր առաջին անգամ, մեր մանկութեան լացի ործուն...:

- Ճիշդ նանչար - Հաստատեց Իֆրաթ, - հիմա կատարէ՛ իմ պահանջը։  
- Բայց ստոնք ի՞նչ պիտի արժեն առանց իրենց մայր զիբեհրուն - մէջ մտաւ Հահի Դաւիթ. - Ո՛ւր են ստոնց Ձեռագիրները։

- Չկա՞ն, կորսուած են այդ գիրքերը. ես մանկութեանս ի՞նչ որ փրցուցած պահած եմ՝ միայն անո՛նք մնացած են ահա։

- Եւ ի՞նչ է պահանջը ստոնց համար - դեռ հետապնդեց Դաւիթ։

- Ըսի ձեզի թէ ես դրամ չեմ ուզեր։ Ես ստոնք ծախելու չեմ բերած։ Բերած եմ, որ դուն հալալ ընես իմ հօրս եւ ինձի...

- Թէ ոպէ, էսթաֆըր-ուլլահ. հալալ ընելիք ի՞նչ կայ որ - շփոթեցաւ Աւետ-ընդհակառակը՝ ե՛ս եմ մնացած պարտական, որ քու ազիզ հայրը մեզ փրկեց ջարդէ, իբրեւ բարեկամը իմ հօրս՝ Չէրի Թորոսին։ Դուն իմ պատանութեանս ուրախութիւնը եղար... Եւ անզրպեյի զոսցումի մը պտթկումով՝ ան վիղին փաթթուեցաւ օտարականին։ Թուրք մարդուն զէմըը ամպոսեցաւ, աչքերը մթազնեցան։

- Այդպէս չէ, այդպէս չէ, - յարեց ան. դուն իմ հայրս ազիզ մարդ կոչեցիր, բայց ան իբ ամբողջ կեանքին՝ դժբախտ մնաց ու մեզ ալ տառապեցուց։ Նոր մարդ էր իմ հայրս՝ Վէլի Ատիլ-Չատէն. բայց կեալուրներու տուներէն ու եկեղեցիներէն իբ հաւաքած պանծերը իբ սիրտին ծանրացան, զինք հիւանդացուցին, ճգնեցին։ Դիտե՛ս, այն ձեռքը որով ան իբ սուրբ քաշեց ու քու առջեւ մազազաթ գիրքը բաժնեց կողքէն, այդ ձեռքը յետոյ ծոցեցաւ, մատները կծկեցան, անշարժ քարացան։ Դողը ձեռքերէն մարմինին ու գլխուն անցաւ, ամբողջ կեանքը շարժարանքով անցուց, ու մեռաւ «Հալալ՛ ըրէք, հալալ՛ ըրէք» զանանցելով։

- Ալլահը պատճառին ա՛նքը փորէ հարածը - վրայ բերաւ Բո՛իչի Բալունի։

- Ալլահին պատճառին ա՛նքը փորէ - սրտանց անիծեց Թուրքը. - Մինք ի՞նչ

վէճ ունենայինք պիտի ձեռք հետ։ Դարերով զրկից ու բախտակից ուղեր կինք, ու միասին կրնայինք ապրել յաւիտենապէս՝ լախ այդ երկրին մէջ։ Բայց եկան այդ էճնէպիները մեր երկու հղբայր-ժողովուրդները լարեցին իրարու դէմ, ու թէ՛ դուք քայքայուեցաք, թէ՛ մենք թշուառացանք, կորսուեցաւ մեր երկրին պէրէքթը... Բայց ըսելիքս այդ չէր հիմա... Ես այս ծրարս քեզի բերած եմ եւ ամբողջը պիտի յանձնեմ՝ մէկ պայմանով։

- Խե՛ր ըլլայ, փափաքը ըլլայ - ըսաւ Աւետ համակերպած։

- Նախ պատմէ՛ հիմա այստեղ, օտ վկաներուդ առջեւ, թէ ի՞նչպէս ես հետդ արգար վարուեցայ այն օրը. պատմէ՛ որ սիրտս թեթեւայ։

- Ի՞նչ պատմութիւն, ո՞ր օրը...

- Այդ գիրքի՞ պատմութիւնը։

- Ա՛, գիրքին պատմութիւնը, իմ խեղճ մօրս մահուան օրը...

- Այո՛, պատմէ՛, որ ես գիտնամ թէ քէն չկայ սիրտիդ մէջ, եւ հալալով արձակէ զիս ձեր սուրբերու անէծքէն...

- Ձե՛մ կրնար. երբ ես սարսափի այդ օրը վերապրեմ, սիրտս դող կ'իւլէ - ըսաւ Աւետ, եւ իրապէս սկսաւ դող-դրդալ ամբողջ մարմնով։

Ուխտաւորը սկսաւ ետ հաւաքել իր ծրարը, թէ - ես կ'երթամ կը գտնեմ ձեր եկեղեցին, այնտեղ փափազներուն կը յանձնեմ այս գիրքերը, արդէն այդ նպատակով բերած էի, բայց երբ բախտը դատաւ քեզ, վստահեցայ քու միջնորդութեանդ։

- Բա՛ջ եղիր, Աւետ, պատմէ՛ - միջամտեցին միւս երկու Հայերը, որոնք սկսածայ ներկայ կ'ըլլային սղորդութեան մը։

Ընկճուած հերոսը շունչ հաւաքեց իր կուրծքին ու պատմեց՝ կոտորած իբ Թուրքերէն լեզուովը։

Ներեցէ՛ք, շատ կարճ պիտի խօսիմ։ Սրբ Թուրք կառավարութիւնը աքօրեց բոլոր Հայերը, մենք քանի՞մը ընտանիք միայն մնացինք Պիթիս, իմ ողորմած



Հայրս ալ, ուրիշ բազմաթիւ անձեղներու հետ, տարուած էր անյայտ մահուան նամրով: Ես կը թափառէի իմ մօրս ու փոքրիկ քրոջս հետ: Ու քու հայրդ, ինչ գատէ, պաշտպան կանգնեցաւ մեզի: Ու մենք՝ ես եւ դուն՝ թաղընկեր զարձանք: Սմէն օր, միասին, լքուած Հայ տուները կը շրջէինք, բեկորուած կը հաւաքէինք: Սեւաւոր մայրս սահայն կը զգուշացնէր զիս: «Չես գիտեր, ես վրուս, այդ մոլան ինչ ծրագրերն ունի. սմրողը ազգին հարստութիւնը իր ծառաներու ձեռքով իր տունը հաւաքած է եւ դու չէ՛ կշտացած. չորնա՛ն ձեռքերը, կ'ըտէր ան: Ես կը համբուրէի մօրս ձեռքերը, ու չէի մտնէր ձեր տունը: Բայց ընկեր էինք, ու դուն օր մը, երբոր ձեր տունէն թանձր մուխ կ'ելլէր ու ճենձերի հոտ, ըտիբ ինձի թէ հայրդ լեցուն լեցուն գիրքեր ունի, արծաթապատ կողքով ու մէջը նկարներով, որոնց ործաթները կը փրցնէր կը պահէր. իսկ գիրքերը կրակի կը նետէր... Հարցուցի թէ ինչ գիրքեր էին անոնք, ըտիբ՝ կեովուր գիրքեր են: Եւ յաջորդ օրը բերիք ինձի ցոյց տուիր այդ գիրքերէն փրցուած նկարազարդ թերթեր, որոնցմէ մէկ հատը ճանչցայ ահա այսօր... Այն ատեն ես ալ դու չէի գիտեր անոնց արժէքը:

Ու երբ դացի իմ մօրս պատմեցի, իրիկունը, ան իր կմախքացած ձեռքերը երկինք պարզեց ու դռնը. «Ճըճըճ ու գրա՛ն ինչէ՛ գլխուն. Աստուծոյ արդար շանթին հանդիպի, որ վանքի սուրբ մատանները այդպէս կրակի կու տայ: Այս անօրէնները կ'ուզեն որ մեր մեռելներն իսկ ատանց խաչի եւ Աւետարանի թաղուին»:

Եւ այդպէս մուխ օրեր ու սեւ ամիսներ անցան: Խեղճ մայրս, մեր օրուան հացը ճարելու իր շարժարարից աշխատանքէն յողնած սպառած, հիւանդ ինկաւ ու մեռաւ: Ո՛չ քահանայ մնացեր էր, ո՛չ դպիր՝ թաղումը կատարելու համար: Չայն պիտի թողէինք՝ ես ու քոյրս: Ու սիրտս կը կսկծար երբ ակունջիս կը հնչէին դեռ մօրս բառերը, թէ անօրէնները մեր մեռելներն իսկ ատանց

խաչի եւ Աւետարանի թաղել պիտի տանին: Կը զգայի թէ ատանց խաչի եւ Աւետարանի մայրս հողին իջեցնելը՝ մեծապոյն սրբապղծութիւնը պիտի բլլար:

Յանկարծ միտքս ինկաւ, թէ դուն կ'ըսէիր՝ հօրդ քովը մեր սուրբ գիրքերն ու խաչերը կային: Եկայ թեզի աղանջիցի, որ հօրմէդ ուզես այդ գիրքերէն մէկ հատը ու խաչերէն մէկ հատը, որպէսզի գէթ անոնցմով կնքէի հողակոյսը անոյշ մօրս: Ու դուն զիս հետդ ստիր, հօրդ տարիր:

- Ի՞նչ է այս կեալուրին ձագը ատն բերեր ես - դոռաց հայրդ:

- Մայրը մեռած է: Իրենց գիրքերէն մէկ հատը կ'ուզէ, որ անով թաղուին ըտիբ դուն:

- Եան գիակը թող տանին փոսի մէջ նետեն. ի՞նչ գիրք, ի՞նչ թաղում - բարկացաւ հայրդ:

Իսկ լարով պաղատեցի. - Սեվապը քեզի՛ կու դայ, Չատէ Պապա: Մեր հայրերու սովորութիւնն է որ մեռելները խաչով եւ Աւետարանով թաղենք: Գիրք մը ու խաչ մը տո՛ւր, տանի՛մ մօրս անհունները օրհնեմ, յետոյ նորէն թեզի կր ըրելմ պանոնք, որդի՛դ վկայ... -

- Տո՛ւր, Պապա. իմ անունովս կ'ըմանաւ - միջամտեցիր դուն:

Ու հայրդ մեզ իր հետը տարաւ, սենեակ մը բացաւ, ուր ինչ տեսնեց. լեցուն-լեցուն գիրք ու սպասք, ու դէպ - դէպ սպրանք, արծաթներու կոյս մը՝ մէկ անկիւնը: Եւ ան դէպէն խոշոր գիրք մը քաշեց.

- Ա՛յս է ուղածդ - գոչեց, ու գիրքին երկու արծաթապատ կողքերը բացաւ կռակի վրայ իրարու ծալլեց, ու սուրբ քաշեց, հաւու մը թեւերը բռնել կարելու պէս՝ թփրտացող գոյշ կողքերը իր սուրովը կտրեց-բաժնեց գիրքի մարմինէն: Այդ ծալլուած կողքերը միւս արծաթներու գէզին նետեց, սենեակին անկիւնը, ու մերկացած սպիտակամարմին գիրքը ինձի շարտեց՝ նոր մորթուած թեւարար թռչնիկի մը պէս, թէ՛

- Ա՛ռ դնա, աէ՛Ք եղիբ. ասիկա կը

բաւէ քեզի. խաչը արծաթ է, շեմ է ասար...

Ես սարսափահալած վազեցի, այդ թեւատ գիրքով մայրս թաղեցի, մինչ քոյրիկս ջովս կու լար: Փայտեայ խաչ մը անկեցի հոգակոյտին: Բայց հոն զկապի որ աշխարհի մէջ իրապէս անպաշտպան մնացեր էինք այլևս: Քոյրս հետս առի, նոյն օրն իսկ ինկայ ճամբայ, զիրքը հետս՝ իբրևս պաշտպան ներկայութիւնը իմ մօրս:

Լոեր էի թէ Ուրֆայի մէջ Հայոց սրբանոց կար, Գերմաններու խնամքին տակ: Երկար ճամբով, շարժարանքով - ինչպէս պատմեմ - մենք Ուրֆա Հասանք, Գերմանացիներուն: Որքանոցին մէջ ես հազիւ անկողին մը ունէի իբր սեպհական աշխարհս, բայց միշտ սնարես տակն էր փրկուած գիրքս: Որքանոցի ուսուցիչներս կ'առնէին, կը թերթատէին զայն, կը զմայլէին նկարներուն ու միշտ կ'ուզէին որ զայն իրենց ամս, բայց ես կը մերժէի: Օր մը նոյնիսկ զերման տնօրէնուէին ուզեց տեսնել զայն, ու երբ տեսաւ, անիրաւ ձեռքով մը անկէ բաժնուած գեղազարդ մէկ էջը ետ գիրքին մէջ դրաւ, ու խրատեց ալ որ ազանովութեան համար ամբողջ գիրքը իր ջովք ձգեմ: Բայց ես լայով խիցի գիրքս եւ անկէ անջատուած այդ մէկ թերթը:

- Ատիկա իմ մայրս է. այս գիրքէն ես պիտի չբաժնուիմ մինչև մահ...

Երբ վերջապէս, Զինադարարին, մեր որքանոցը Ուրֆայէն Հալէպ փոխադրուեցաւ, ես ու քոյրս հոս եկանք, գիրքը միշտ մեզի հետ՝ իբր կենդանի շունչը իմ մօրս: Իսկ որքանոցը ցրուելուն, ես գործի սկսայ այստեղ՝ իմ հօրս Զէրէի խանութով: Ու փառք Աստուծոյ, տարիներու համետ աշխատանքով յաջողեցայ վերականգնել հօրս-մօրս ահեմներէն յարութիւն առած մեր տունը:

Եւ ահա իմ մօրս յիշատակ այդ գիրքէն փրցուած թերթն է այս պատին խաչուած մագաղաթը... Ու եթէ կ'ուզէք դիտնալ, այդ գիրքն ալ ջովս է դեռ պահուած... Ըսաւ ան՝ իր պատմութեան

մեծ գաղտնիքը լուծելու խոր մայնով, ու նախ պատէն իջեցուց ոսկեշրջանակ մազաղաթի թերթը, դբաւ սեղանին, եւ ապա իր դրամարկղը բացաւ, հանեց մերկամարմին գիրքը...

- Ես անկէ առաջ միայն մէկ հոգիի ցոյց տուած եմ իմ այս գիրքս, մեր Անաշիրոյ Հայր Սուրբին... Եւ այդ ուսրք մարդը, լսելէ ետքը իմ պատմութիւնս, ըսաւ ինծի. «Պահէ՛ այս վերտար-սիրտով գիրքը թու դանձաւանդ մէջ. առկա ջու հոգիիդ փրկելն է, ու կեանքիդ պէ՛տէ՛թը»:

- Կեցի՛ր - միջամտեց թուրք հիւրը՝ Իֆրաթ Ատիլ-Ջատէ. - մնացածը ես պիտի պատմեմ:

Երբ դուն լայով գիրքը առիք դաջիր մեր տունէն, իմ սիրտս ալ թեւազուրկ այդ գիրքին թերթերուն պէս սկսաւ հոլէն դողդողալ: Ու յաջորդ օրը, դաջանի մտայ հօրս գանձատունը, նոյն այս գիրքին արծաթապատ կողքը վերցուցի պահեցի, որ չըլլա՛յ թէ միւսներուն հետ Հալեցուի:

Ու դուքս ելայ, քեզ փնտրեցի՝ այն օրը, յաջորդ օրը, եւ միւս օրեր, որպէսզի գայն քեզի տամ... Բայց չդատայ գեք...

Յետոյ, երբ հօրս վրայ Հիւանդութիւն ու դող ծանրացաւ, իր մահուան մօտ օրը, ան դիս կանչեց, զուրս ըրաւ միւս բոլոր Հիւրերն ու անեցիները, եւ ինծի վասիյէթ ըրաւ, կտակեց... «Տղաս, այն սուրբերը որոնք դիս հարուածեցին, հատուցում կը պահանջեն, որպէսզի չըլլա՛յ թէ քեզ ալ հարուածեն... Ընտեց արծաթապատ գիրքերէն մէկ հասը եւ ոսկեհիւս խաչերէն մէկ հատը պահած եմ դաջանի արկղին մէջ... Մարդ չտեսած վերցուէք զանոնք ու պահէ՛: Ու եթէ Ալլահը քեզի ողորմի ու դուն կարենաս երկրէն զուրս ճամբորդել, հե՛տդ տար դաննք յանձնէ՛ իրենց տէրերուն, որպէսզի թու սիրտիչդ արձակուի այդ սուրբերու անէծքէն...»

Ու ես լացի հօրս հետ, խոստովանեցայ իրեն թէ ես ալ պահած ունէի

բազմաթիւ լուսազարդ թերթեր՝ փրցը-  
ւած այդ գիրքերէն, եւ թէ խնայած էի  
նաեւ կողքը մորթուած այդ մէկ պիւրքին,  
որով որք աղան էր մայրը թաղեց: Աւ  
հոն երգումով խոստում տուի, որ ան-  
պայման այդ նշխարները պիտի տանիմ  
օր մը յանձնեմ իրենց տէրերուն...

Եւ ահա հո՛ս են՝ հօրս այդ գոյգ յի-  
շատակներն ալ, եւ արծաթապատ կողքն  
ալ քու այս գիրքիդ - ըսաւ ան եւ ամ-  
բողջութեամբ բացաւ իր դադտիքներուն  
ծրարը:

Թեւածալ կողքին մէջէն սեղանին  
թափեցան տասնեակ մը ուրիշ մագաղաթ  
թերթիկներ եւ: Բայց ոչ ոք այլեւս կը  
նայէր այդ լուսափառ թերթերուն ու  
քովը ճառագայթող միւս ողջ Աւետարա-  
նին ու ոսկի խաչին: Կարեւորը այլեւս  
արծաթաքանդակ զոյգ թեւերն էին, ո-  
րոնք կը շողշողային Ձէրչի Աւետի ձեռ-  
քերուն մէջ, սուրբ Առաքեալներու լու-  
սապասկներովը ու ցոլարձակ ակունքնե-  
րով...

Ձէրչի Աւետ դուրդուրանքով զայն  
հապոյց իր ձեռքերուն մէջ դեռ մերկ -  
մերկ սարսուացող մագաղաթեայ մատ-  
կանին, ու չափը-չափին, եղբ-եղբին,  
ճիշդ գիրար գրկեցին ամբողջացան՝  
կողք ու մագաղաթ:

Բաղեւցի Հայուն դէմքին նոր լոյս  
մը ծիածանուեցաւ. - Օրհնեալ, Տէր  
մեր, Յիսուս Քրիստոս - գոչեց եւ գիրքը  
իր ճակատին ու շրթներուն փակցուց:  
սկսաւ լալ ու լալ՝ կարծես իր յարուց-  
եալ մօրը կուրծքին փակած ըլլար:

- Օրհնեալ է Աստուած, - բացապան-  
չեցին միտքերան Տոքթոր Բալունի եւ  
Հաճի Դաւիթ:

- Մնաց հիմա իմ վերջին պահանջը  
- ետ խօսք առաւ Պիթիւսի Իֆրաթ Ա-  
տիլ-Չաստէն. - դուն հիմա ողջացած այս  
գիրքը, սա միւս պիւրքին ու խաչին ու  
փրցուած թերթերուն հետ, պիտի տա-  
նիս ձեր եկեղեցիին յանձնես... Վկայ

են այս երկու բարեկամներդ... Քու  
քովդ պիտի չպահես այլեւս գանձեք, ո՛չ  
խօսք մէկ թերթ. իր բուն տէրերուն՝ ձեր  
սուրբերո՛ւն պիտի յանձնես բոլորն ալ...  
Եթէ ոչ, իմ հօրս կրած ախան ու աղէտը  
քեզի կ'անցնի... Ահա ես իմ կեանքիս  
փախի՛թը կատարեցի, ու հանդարտ  
սիրտով հիմա կ'երթամ իմ ուխտիս, -  
բոաւ ան ու քայլերը դարձուց դէպի  
Մէքքէ...

Բայց անոր հետացող շուքը դիտե-  
լով, խորհրդածեց Հաճի Դաւիթ.

- Մեզմէ յափշտակուած միլիոնաւոր  
միլիոններուն մէկ-միլիոներորդին մէկ  
միլիոներորդը մեզի հատուցում բերե-  
լով՝ իր խախտած սիրտին խաղաղու-  
թիւնը կ'ուզէ գտնել... մեզմէ յափշ-  
տակուած Հարիւր-հազար թոնի տեղ՝  
մէկ միլիոնամբ մեզի ետ տալով...

Իսկ Տոքթոր Բալունին նկատել տը-  
ւաւ.

- Ինչպէս հիմա այս մէկ խղճահար  
անհատը հասկցեր է, օր պիտի գայ, երբ  
իր ամբողջ ուղիւն ալ պիտի հասկնայ՝  
թէ որդար հատուցումի օրէնքը պայ-  
ման է աշխարհի խաղաղութեան:

Իր քովիկը սակայն Ձէրչի Աւետ  
միւս կ'ողբար ու կը կրկնէր.

- Ես հիմա, ես այլեւս ի՞նչ պիտի  
ընեմ այս գիրքերը...

Իրաւ, ի՞նչ ընէր, որո՞ւ յանձնէր  
մանուանդ իր մայր գիրքը, որ փրկու-  
թիւնը եղած էր իր կեանքին: Բայց ի՞նչ  
պէս պահէր զայն: Որովհետեւ ան իրեն  
չէր պատկաներ. կը պատկանէր Հայոց  
Սուրբերուն:

- Ես ի՞նչպէս ուզիմ առանց անոր.  
եւ ի՞նչպէս բաժնուիմ իմ մօրմէս... Իմ  
հոգւոյս թելը փրթա՛ւ - ըսաւ ան, խո-  
րունկ շունչով հոգուց մը հանեց:

Եւ ինչպէս բժէշկ բարեկամին թեւե-  
րուն մէջ:

Բ. Ե.

## ՅՈՒՍԱՀԱՏԱԿԱՆ ԳԵՂՕՆ ՅԱՂԱԳՍ ՈՏԱՆԱԻՈՐ ԳՐՈՂԱՑ

Ջաւե՛շտ է քէ համաճարակ -  
Դաւիթ ազան սեղանաւոր,  
Ձոր վարժուեիմ երկար-բարակ  
Ու դրբացիս տակառափոր  
Ժիր կը բրիտնն ստանաւոր -  
Ջարի մ'ըլլար, էշ մը կամ ճի  
«Քերթոզ»ներուն առ կամակոր  
Տա՛ր փրկարար իր աւացիմ...

- Հերի՛՛ք, ո՛վ դուք, «աստղերուն տակ»,  
Լուսնի լոյսով խորհրդաւոր,  
Պատմէ՛ք ձեր տարտը «տխրումակ»  
Կամ դարպասէ՛ք աւոր-անոր...  
Ինչպէ՛ս ախտակն ու վարչն անգոր  
Պայերը ձեր լզրմեցիմ,  
Բա՛ւ՛ նրեան, Սեւան աշտոր  
Ձեր գրքոսինն նշտակ՝ հիւծիմ...

Ու կը մետէ՛ք հրբայարակ  
«Երկ»եր անշտ, անժուր, սղտոր.  
Մեզ չէ՞ք բուզքին իսկ հասարակ  
Ու գրաշարիմ վաստակաւոր:  
Ու կը ջարդէ՛ք մեր դարաւոր  
Լեզուն, լամե՛ր իսթանպուլցի,  
Ո՞վ ձեզ ուսոյց արհեստն այդ մոր.  
Յեղագակնե՛րը ձեր դրացի...

Ձ Օ Ն

Եզրա՛րք, հոյրե՛ր յանբժ տկուր,  
Դուք ա՛ւր, ճիբքն ա՛ւր յանաստեղծի.  
Ալ մի՛ բրգէ՛ք ստանաւոր,  
Ի սէր ամուշ Մեծարեցի...:

ՕԳԱՐԱՐ

Մարտ 1967

Գաւհրէ



# ԻՎԱԿԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ

## ԻՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՅԼԱՓՈՆՈՒԹԻՒՆԸ ԱՐՈՒԵՍՏԻ ՄԷՁ

### ԻՆՁ Է ԱՐՈՒԵՍՏԸ

Արուեստ բառը սերած է լատիներէն արթեմ բառէն, որ կը նշանակէ հնարք, կտրցադրութիւն:

Արուեստին առաջին նպատակն է զննեցկութիւն ստեղծել զիտակցօրէն:

Գեղեցկութեան գաղափարը մարդկային մտքին յղացումներէն մէկն է, եւ զարեբու ընթացքին առած է զանազան սահմանում: Գեղեցիկը գոյութիւն չունի բնութեան մէջ, կ'ըսեն շատեր, այդ մարդկային մտքին կարելիութիւններուն մէկ իտեալ պատկումն է: Մանաւանդ, արուեստի մարզին մէջ, գեղեցիկի բոլորումը յարաբերական է: Գեղեցիկ է այն՝ ինչ որ ժամանակի մը ճաշակին համապատասխան է:

Գեղեցիկը, կ'ըսէ Պլատոն, - ճշմարիտին շքեղութիւնն է: Այսինքն տիեզերական է եւ անփոփոխ՝ ինչ որ հակառակ է վերը արուած գաղափարներուն եւ ներկայ փիլիսոփայութեան տուեալներուն, որուն համար գեղեցիկը չի բացատրուիր, այլ կը զգացուի:

Արուեստագէտը կ'ընդունի որ բնութեան մէջ զուտ գեղեցկութիւն չկայ, եւ իրականը՝ կարելի չէ ամբողջովին ընդունիլ արուեստի մարզին մէջ: Արուեստագէտը կը ջանայ ուրեմն բնութեան թերութիւնները զարմանել: Ասոր համար

ունի երեք միջոց. կամ ընտրել ինչ որ գեղեցիկ է հոն, կամ բարեփոխել բնութեան տուեալները, կամ քանդել իրականութիւնը եւ վերստեղծել նոր իրականութիւն մը իր ուզած ձևով, իր հասկցած գեղեցկագիտական օրէնքներուն համաձայն:

Արուեստագէտը կը ստեղծէ նոր աշխարհ մը՝ իր եւ մեր ներքին պահանջներուն համաձայն: Այս վերստեղծուած գրախօսը կը տարբերի իրական աշխարհէն. կրնայ ըլլալ աւելի մեղմ կամ աւելի բիրտ, բայց չի դադրիր պահել ներքին սրամարտութիւն մը, որ կը հմայէ մեզ:

Արուեստագէտին աշխարհը ուրեմն զԱՍԼՈՁ աշխարհ մըն է, եւ այդ սրամտաւ Պլատոն կը դատաւարտէ արուեստը ճշմարիտին անունով: Այն առարկաները, այն անձերը, այն տեսարանները, որոնք կ'իջնան մեր զգայարաններուն հսկողութեան տակ, սովորյալ պատկերներն են գերազոյն իրականութեան, եւ երբ արուեստագէտը իր նիւթ կ'առնէ այդ սովորյալ իրականութիւնը, այն ասան մեղի կու տայ պատկերին պատկերը եւ մեզ կը խաբէ երկու անգամ: Ուրեմն արուեստը ստու մըն է, գեղեցիկ ստու մը եթէ կ'ուզէք, եւ ասոր համար վտանգաւոր: Մեծ փիլիսոփան, սակայն, երբեք չէ ուզած հաս-

կրնալ, թէ Արուեստագէտը այդ սովորոյն իրականութիւնը, իբր նիւթ առնելով կը շահայ թափանցել եւ մեզի պարզել այդ պերագոյն իրականութիւնը, որ իր մէջ կը պարունակէ բո՛ւն ճշմարիտը, բո՛ւն բարին եւ բո՛ւն զեղեցիկը:

Վսիթէր կը զարմանար, թէ ինչո՛ւ մարդիկ այնքան կարեւորութիւն կուտան պատաստի մը եւ կրնաք շնն հետաքրքրուիք ա՛յն անձերով, տեսարաններով եւ առարկաներով, որ այդ պատաստին իբր օրինակ կամ ներշնչման աղբիւր ծառայած են:

Վսիթէր իրաւունք պիտի ունենար, էթէ նկարչութիւն կոչուած արուեստին նպատակը բլլար պարզ իրականութիւնը ընդօրինակել: Այն ատեն տեսարանի մը լուսանկարը, առնուած արդիական գործիքով, աւելի արժէք պիտի ունենար, քան նկարիչի մը գործը, որ իրականութեան շի նմանիբ: Արուեստագէտը ամբողջովին այլափոխած է բնութեան սուսանկերը՝ շէշտը զնելով պիծերու ներդաշնակութեան եւ զօյնիրու հասարակչութեան վրայ, զեղեցիկ տեսարանի մը տալով արուեստի գեղեցկութիւնը:

ԱՐՈՒԵՍՏԱԳԷՏԻՆ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1.— ԵՐԵՒԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Տեսանելի եւ անտեսանելի անձեր, վայրեր եւ առարկաներ ներկայացնելու յատկութիւնն է: Երեւակայութիւնը պէտք է ըլլայ ներդործական, նոր աշխարհ մը վերստեղծելու համար, իրական աշխարհին թիրիկերը սրբազրելու համար:

2. ԶԳԱՅՆՈՒԹԻՒՆ

Արուեստին աւել զտուր բուն յատկութիւնը զգայնութիւնն է: Հասկնալու համար մեր շուրջիներուն զգացածները զանազան պարագաներու մէջ: Նոյնանալու համար մեր ստեղծած անձերուն եւ զանոնք աւելի կենդանի դարձնելու համար, այս յատկութիւնը անհրաժեշտ է:

3. ԻՄԱՏԱԿԱՆ ՈՒԹԻՒՆ

Արուեստը զիտակցութիւն կը պա-

շանջէ: Առանց սուր շննք կրնար վերլուծել մեր երեւակայածը եւ զգացածը: Պէտք է իրիւր լուս հասկնանք եւ զանոնք իրարու հետ բաղդատելով ստեղծենք արուեստի գործը:

Զգայնութիւնը եւ երեւակայութիւնը խորհրդաւոր կերպով զիրար կ'արդաստանորին մեր ներքին աշխարհին մէջ եւ ծնունդ կու տան ներշնչութիւն:

ԱՐՈՒԵՍՏԻՆ ՆԵՐՇՆՉՄԱՆ ԱՂԻԻՐԸ

1. ԳԵՐԲԵՆՈՒԹԻՒՆ

Աստուած, Գրիտոս, Աստուածամայր, Հրեշտակներ, Դրախտը, Սասնաները, Դժոխքը... Զաստուածները, սպիները...

2.— ՏԻՆՁԵՐԸ

Ասողերը, Կշանակները, Լուրը, օդը, կրակը, հողը... Զպայտանքներուն ընկալումները.— զօյները, խաւարը, ձայները, երաժշտութիւնը, լուսութիւնը, բոյրերը, համերը... Կենդանական, բուսական եւ հանգային աշխարհները...

3. ՄԱՐԴԸ ԵՒ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Քաղաքը, գիւղը, քնակարանը, կահկարասին... Արհեստները եւ արհեստի վայրերը եւ գործիքները... Հազուատները, արդուզարդը... Կեցուածքները, շարժումները, խօսքը, ձայնը... Անձերը եւ առարկաները... Զպարտումները՝ ուրախութիւն, սրբութիւն... Կեանքը եւ մահը, սէքը, ստեղծութիւնը, ծնունդը, նախնձը...

ԱՐՈՒԵՍՏԻՆ ԵՐԿՈՒ ԲԵՒԵՆՆԵՐԸ

ԱՌԱՐԿԱՆ, այսինքն՝ արուեստագէտի ներսի եւ գուրսի աշխարհը: Եւ ԵՆԹԱԿԱՆ, այսինքն՝ արուեստագէտին եՍը, Կրկանք ըսել սր Արուեստը Ենթա-

կային եւ Առարկային փոխ-յարաբերութիւններուն արգելանքն է :

Դարերու ընթացքին, զեղարուեստական դպրոցները իրարմէ զանազանութեամբ համար առած են որոշ անուններ բարդացնելով պարզ խնդիր մը : Տեսանկիւնի հարց են այս բոլորը, աւելի միջոց համեմատութեամբ հարց մը : Ենթակային կամ Առարկային արուած կարեւորութիւնը, կամ բռնած անզը արուեստի գործին մէջ :

ԲՆԱՊԱՇՏ (Առարկայի) դպրոցին համար, Առարկան միայն կարեւոր է, Ենթական կը դառնայ պարզ գործիք մը : «Ժողով մը, - կ'ըսէ Էմիլ Զոլա, - ինչ որ ալ ըլլայ իր հանձնարը, պարզ գործուոր մըն է, որ իր զարը կը բերէ շարունակելու համար ազգային հիմնուարց շնորհը» եւ կը շարունակէ : «Ինչպէս որ ժամանակին վերաբան մը գովելու համար նշանակին. ան երեւակայութիւն ունի. կը պահանջէ որ այսօր ըսեն. ան ունի իրականութեան զգացումը : Դիտելու միջոցը աւելի հազուադէպ է, քան ստեղծելու միջոցը : Մական Զոլա չ'ուրանայ ենթակային կարեւորութիւնը. «Ո՞նք եւ արւեստ կը ստեղծենք մեր միտով, մեր եզրով», - կ'ըսէ ան պատասխանելով փրկառոժի պնդումներուն, թէ՛ «Արւեստը պէտք է ըլլայ անմահ պատկերը քաղաքակրթութեան մը» :

ԻՐԱՊԱՇՏ (Արտիստ) դպրոցին համար, Առարկան կը բռնէ առաջին տեղը : Ենթական պէտք է իր գոյութիւնը զգալի գործնէ, առանց սակայն խանդարելու զէպերուն յառաջնադասքը : Փրոզը պէտք է կատարանէ իր գործը, իրականէն մեկնելով, փոխ առնէ մեծ վարդապետներէն եւ վերադառնէ նոր ամբողջութիւն մը, որ կը իր արուեստագետի հանձնարին կնիքը : Պարզաբ կը զանազանէ Բնական իրականութիւնը, որ յաճախ բիրտ է եւ զժպտի՝ արական իրականութենէն, որ ընտրութիւն մըն է :

ԴԱՍԱԿԱՆ ԴՊՐՈՅԸ իր գործնական պին մէջ շատ նման է Իրարայում դպրոցին : Կը թերագրէ մօտէն աւտոմատիքի իրականութիւնը եւ զայն վերարտադրել :

Վերարտադրել ո՛չ թէ ամբողջ բնութիւնը, իրականութեան բոլոր երեսները, այլ անոր յատկանշական գիծերը, եւ այդ գիծերով կազմել համալսարի ու զեղեցիկ գործ մը : Դասական դպրոցը կը նախընտրէ զբողիլ որոշ առարկայով մը՝ այդ ալ մարդկային թնութիւնն է, Ենթական կը ջանայ ըլլալ անկողմնակալ, գործել վարագոյրին հետեւէն, եւ սակայն իր անձնատրութիւնն է, որ կ'որոշէ արւեստի գործին բանելիք ուղղութիւնն ու արժէքը :

Վիպապաշտ դպրոցին համար Ենթական կը գրաւէ առաջին տեղը, արեւա կը հկատենք այդ դպրոցին մեծ գրողներուն յայտարարութենէն, սակայն անոնք կը սիրտին, «ոս ալ առարկան ունի այն կարեւորութիւնը, որ ունէր Դասական վարդապետի համար : Սակայն վիպ գոյարտները, իրականութիւնը իր պատրաստի կը բռնէին իրենց նսր արտայայտելու, եւ այդ մեղով իրենց անմահական դասերը, երազները, տեսիլները՝ աւելի մատչելի գործնելու համար հասարակութեան :

ԵՌՐՆԻՐԱՊԱՇՏ ԴՊՐՈՅԸ է որ իրական փոփոխութիւն մը կը մտցնէ Ենթակայ-Առարկայ հակառակ դասերէն : Զորքն փոխ-յարաբերութեան մէջ, շրջելով անոնց փոխ-յարաբերութիւնները, Ենթակային տալով, կամ տալ փորձելով առաջին ու միակ տեղը : Ասոնց համար Ենթակայէն անջատ ինքնութիւն մը չէ Առարկան, այլ ձուլուած է անոր մէջ, եւ կ'արտայայտուի արուեստագետին ներքին արամագրութիւններուն համաձայն :

ԳԵՐԻՐԱՊԱՇՏ ԴՊՐՈՅԸ ԿԸ ԶԱՆԱՅ ԵՆԹԱԿԱՆ ԱՄՖՈՂՁՈՎԻՆ անջատել Առարկայէն. նոյնիսկ Առարկան չեղեալ նկատել, միայն աւ միայն կեղծանալով ներքին իրականութեան վրայ, սեք կայ ուրիշ աշխարհ մը ուրիշ առարկաներով : Սէկ խօսքով, գերիբապաշտ դպրոցը իր մէջը կը գտնէ այն աշխարհը, զոր ուրիշ արուեստագետներ կը ջանան կառուցանել մեկնելով գուրտի իրականութիւնը :

Այս դպրոցին հակառակ կը գործէ

20-րդ դարու կէսերուն ծնունդ առնող Արդի վէպը, կան Ռոման Նուվո դարոցը, Գննադատ մը՝ Իմիլ Համախո, այս դըպրոցը կ'անուանէ Աւարկանքով գրականութիւն։ Աւարկան այնքա՞ն կարեւորութիւն կ'առնէ չոն, որ ո՛չ միայն Ենթական գոյութիւն ունենալէ կը գագրի, այլ նոյն իսկ մարդ էակին պոյութիւնը կ'արտացոլայ առարկաներուն վրայ եւ անոնց գոյութեամբ է, որ կը թելադրուի իր գոյութիւնն ալ։

**ԻՐԱՎԱՆՈՒԹԻՒՆԸ  
ԱՐՈՒԵՍՏԻ ՀՈՒՄ ՆԻՒԹ**

Գրական դպրոցներու վրայ չհասուած վերի հասցեն պահանջներով դադարաւոր մը ունեցանք Աւարկայի եւ Ենթական փոխ-յարաբերութիւններուն վրայ։

Հիմա Արուեստ բառին սահմանումին վրայ հիմնուելով, տեսնենք, թէ ո՞ր չափով հեղինակ մը կրնայ իրականութիւնը գործածել իր ստեղծագործութիւններուն մէջ եւ որչափով իրաւունք սեփական այն աշխարհիւն։

Անկարելի է որ Տոթոյի վիպիկի, Վիգորի Հիւկոյի, Սթանալի կոմ Տիգրիսի վէպերուն անցուդարձերը պատահած ըլլան այնպէս, ինչպէս հեղինակները գտնուէ մեզի կը ներկայացնեն։ Նոյնիսկ Իրապաշտ եւ Բնագաշտ կոչուած վեպասաններուն դործերը, որոնք ըստ իրենց կեանքի շնորհք են, անկարելի է որ ըլլան պարզ ընդօրինակութիւնը իրական կեանքին։

Եթէ այդպէս ըլլար, պիտի տեսնայինք լաւ գրուած թղթակցութիւններ, ոչ թէ արուեստի գործեր։ Հոն ուր ընտրութիւն մը չէ եղած բնութեան մեզի տուած մանրամասնութիւններէն, հոն ուր չկայ աշխարհում, փոխադրութիւն իրական աշխարհէն տարբեր աշխարհ մը, հոն չկայ արուեստ։ Իրական կեանքի իրականութիւնը դեղարուեստական իրականութիւնն ըստ տարբեր բան մը չէ։ Երկրորդը՝ անիրական ըլլալով՝ յաճախ աւելի արամարանութիւն կը պարունակէ, քան իրական կեանքը։

Ոչ մէկ արուեստագէտ չէ իսպա-

քած ըլլալ իրականութեան պարզ հայտնին։ Բնագաշտ գրողներէն մինչեւ գերիապաշտ եւ Փանթոսթիլը գրողները, ուզած են ըլլալ Ենթարտախալ իրենց ընտրած նիւթին մէջ, եւ իրենց ստեղծած աշխարհին տալ համաշախ ու ներպաշտակ մթնոլորտ մը, զայն գանազանելու համար ներկայ աշխարհէն, որ աննրդաշնակ է եւ անհեթեթ։

Շատ մը հեղինակներ անցնալ դարուն, եւ մասնաւորաբար հայ հեղինակներ մեր օրերուն, կարծէք իրենց դործը աւելի վաւերական դարձնելու համար, հարստութեամբ կ'արձանագրէին ու կ'արձանագրէին ԻՐԱՎԱՆ ԿԵՆՆՈՒՄԸ մակդիրը, իրենց վէպին վերնագրին տակ։ Ըսել կ'ուզեն, ի՞նչ որ կը պատմեն իրենց կ'ընուն մէջ, պատահած է նոյնութեամբ եւ թէ իրենք ակնատեսը եւ դերակատարը եղած են դէպքերուն եւ անոնց իւրաքանչիւր մանրամասնութիւններուն, եւ այդ բոլորը՝ օրը օրին էւ ժամը ժամուն վրի առած են։ Կամ քամերո մը լարած եւ արձանագրել մեքենայ մը աշխատացուցած են անընդհատ, հերոսներուն շարժումները եւ դործերը լուսանկարելու եւ խօսքերը արձանագրելու։ Եթէ ստիկա կարելի ըլլար, իրենց մեղի հրամցուցած գործը արուեստի դործ մը պիտի ըլլար, այլ ստիկան տառապանքներով մը։ Եթէ ասանք անկեղծօրէն ըրած ըլլան այդ հետապնդումը, այն ատեն իւրաքանչիւր օրուան համար բարձրորոտ ժամ տեւող պատկերներ պէտք է տեսնենք եւ ծայեր լսենք։

Ուրեմն, արուեստագէտը կը ներշնչուի իրականութենէն, տեսածէն, լսածէն կամ երեւակայածէն, զայն տանելով իրը հուս նիւթ, ինչպէս ճարտարապետը գործածել կու տայ իր գործաւորներուն անտաշ ջարբեր, անձեւ շաղախ եւ կը կառուցանէ հոյակապ շէնք մը։

Շատ քիչ անգամ կը պատահի որ հեղինակ մը կարենայ իր դործին անձեքը, դէպքերը եւ վարքերը վերցնել իրականութենէն։

Ձյուպէտ այն հազուապիտ հեղինակներէն է, որ քաջութիւնը ունեցած է վէպ



ժը գրելի՛ - Մատամ Պովարի - օգտագործելով իրական դէպք մը, իրական անձեր եւ իրական վայրեր: Դէպքը պատահած է 1840-ական թուականներուն, ինչպէս կը վկայէ Ռուսն ըսողաբի օրաթերթերէն մէկը, եւ լատ մը ակնատես վկաներու համաձայն՝ անձերը սպրած են խկապէս Ռի դիւղին մէջ, Ռուսն բազաբէն քսան քէլովներ հետու. անոնք կը կոչուէին Տըլամար, Եորլ Պովարի, Տէլիֆի Տըլամար, Էմմա Պովարի, Ինդագործ Ժուսնն, Պարոն Հոմէ, Լուի Բամփրոն, Ռոտոլֆ, Սթանիսլաս, Պոթէ, Պարոն Լէոն: Հոն կարելի էր տեսնել Տէք եւ Տիկին Տըլամարներու շիրիմը, յիսուն տարի առաջ. կարելի էր տեսնել Լիոն Տոր իջեանը, որ կը կոչուի ներկայիս Օթէլ տը Ռուսն, Դեղարան Հոմէն, այժմ նույնիսկ իստուրթ, եւ մանաւանդ այցելել Պովարիներու տունը: Տլոպէտ, Հաւատարիմ ըլլալու համար իրականացող դպրոցի օրէնքներուն, ջանացած է ըլլալ անկողմնակալ եւ բացակայ իր դործէն եւ սակայն...

Սակայն այս բոլոր տուեալները եւ բազմաթիւնը իրականութեան եւ դործին միջեւ, ցոյց կու տան, որ չոս այլափոխումը աւելի զգալի է, քան ամբողջովին երեւակայութեամբ դործի մը մէջ: Տլոպէտ յաջողած է սաօրեայ եւ Հասարակ այս անձերը վերածել յաւերժական տիպարներու:

**ԴԵՊՐԸ ԻՐԻ ՀՈՒՄ ՆԻՒԹ**

Երբեմն արուեստագէտը կը ներշնչուի իրական դէպքէ մը, որուն սկանաւտեւ եղած է, կամ լրած է ակնատեսի մը բերնէն, կամ կարգացած է օրաթերթի մը կամ գրքի մը մէջ. Այդ դէպքը հունա մըն է, որ պիտի արդասաւորէ հեղինակին երեւակայութիւնը: Գործող իրական անձերը կրնան յարմար լըլլալ յղացուելիք դործին, կամ տուեալները աղօտ եւ աննշան կրնան ըլլալ: Կրնայ վայրին մասին որեւէ անգիրութիւն տրուած չըլլալ: Արուեստագէտին միտքը արդէն գործի լծուած է, կամայ կամայ մանրամասնութիւններ կը ծնին, կը ստեղ-

ծրել յարմար վայր մը, հասակ եւ ինքնութիւն կ'առնեն անձերը, անոնց անուն մը կը տրուի, եւ ահա գոյութիւն կ'առնէ նոր աշխարհ մը, որ արուեստագէտի կախարդական տաղանդը կը դարձէ իրական եւ ստեղծուած են անձեր հեղինակին ուղեղին մէջ. անձեր՝ որոնց երբեք պիտի չհանդիպինք մեր կեանքին մէջ եւ որոնք, սակայն, մեզի կը թուին կենդանի եւ հարազատ:

**ՎԱՅՐԸ ԻՐԻ ՀՈՒՄ ՆԻՒԹ**

Յաճախ վայր մըն է, որ կը տպուարէ հեղինակին երեւակայութիւնը: Ետտ անգամ փողոց մը, պարտէզ մը, տնակ մը, կայարան մը, եկեղեցի մը ա՛յնպէս կը խօսին մեր ներաշխարհին, որ անմիջապէս կը սկսինք յղանալ դէպքեր եւ դէմքեր, որոնք յարմարին այդ վայրի միջոցաւ: Քանի դործեր ծնած են կայարանի մը, նաւահանգիստի մը, թաղամասի մը ք տես:

Առնենք Բամիւի «Իանսալտ»ը: Վայրը գոյութիւն ունի. Օրան բազաբը կրնանք այցելել, զայն տեսնել քարտէսի մը վրայ, կարգալ թաղերուն եւ փողոցներուն անունները, ուր տեղի կ'ունենան դէպքերը: Սակայն երբք 1940-ական թուականներուն Օրանի մէջ Ժանտարտ չէ պատահած: Եւ այն անձերը որոնք կ'ապրին վկային մէջ, անուն ու գիծագիծ ունին, երբք արձանագրութիւն չեն ունեցած որեւէ մարդահամարի մէջ:

**ԱՆՁԵՐԸ ԻՐԻ ՀՈՒՄ ՆԻՒԹ**

Երբեմն հեղինակը նանչած է անձ մը կամ անձեր իր շրջապատէն, իր շըրջապատը երկիրներէն, իր կարգացած գիրքերէն եւ անոր կամ անոնց շըրջը երեւակայած է դէպքեր եւ վայրեր, որոնք կը յարմարին անձերուն ինքնութեան եւ կը կազմեն համաշխարհիւն մը ստեղծուած աշխարհին ընդհանուր տրամարանութեան հետ:

**ԱՐՈՒՍՏԱԳԵՏԻՆ ՆԵՐԱՇԽԱՐՀԸ**

Հոս, արուեստագէտի արդասաբեր ներաշխարհին մէջն է, որ ծնունդ կ'առնէ ամէն բան. դէմքը՝ որ կրնայ

բլլալ իրական դէմքի մը ազատ յիշու-  
տակը՝ դէպքը՝ որ երբեմն պատահած է  
իր մանկութեան՝ կամ արուն մասին լսած  
է, եւ վայրերը՝ որոնք կը գոյանան կի-  
սամութ աշխարհի մութ դանդաւանե-  
րէն:

Եւ վերջապէս, չեղինակ մը հրա-  
ւունք ունի դէպքեր ստեղծել, որոնք եր-  
բեք չեն պատահած, կրնայ ստեղծել անձ  
մը, գայն կազմելով տարբեր անձերէ առ-  
նչուած գիծերով: Կրնայ պատահած դէպ-  
քեր իրարու համադրել, կամ պատահած  
դէպքերը խառնել չպատահածներուն եւ  
վերջապէս, չեղինակը իրաւունք ունի  
ստեղծելու վայրեր ո՛չ միայն Փանթոս-  
թիկ եւ երեւակայական բնոյթ ունեցող  
գործերու մէջ, այլ անոնց մէջ՝ որ իրա-  
կանական են: Կրնայ օրինակի համար  
դէպք մը տեղափոխել քաղաքի մը մէջ,  
փողոցի մը մէջ, որ երբեք գոյութիւն չէ  
ուրեքստ եւ որ սակայն յարմարագոյնն է  
իր գործին ընթացքին:

Այսպէս բրած են շատ մը վիպասան-  
ներ (Պլինանոս, Մորուս), ժիւլիէն  
Կրիմի շատ մը վէպերը, մանաւանդ Լե-  
վիաքամ վէպը, ամբողջովին ստեղծուած  
վէպ մըն է եւ որ սակայն իրական կեան-  
քի սպաւորութիւն կու տայ: Գործողու-  
թեան վայրը կը կոչուի Լորժ, Փրանսա-  
կան գիւղաքաղաք մըն է իր փողոցնե-  
րով, ճաշարաններով, եկեղեցիով ու զե-  
տակով, որ կը կոչուի Լա Սամէանթը, եւ  
սակայն ո՛չ մէկ նահանգի մէջ, ոչ մէկ  
քարտէսի վրայ կարելի չէ գտնել այդ  
երկու անունները: Ձիտտինք Քոֆքոյի,  
էտկար Փոյի, Վէլոի եւ Վէրնի ստեղծա-  
գործութիւններու մասին: Նոյնիսկ իրա-  
պաշտ վիպասանները, որոնք կը ջանան  
նկարագրել իրական վայր մը, փողոցը  
եւ տունը, տալով անոր թիւը, յարկերը՝  
կը խարեն մեզ, որովհետեւ կամ այդ  
փողոցին մէջ այդ թիւով տուն չկայ,  
կամ ալ պարզ խանութ մըն է կամ պար-  
տէզ մը:

ԵԶՐԱՎԱՅՈՒԹԻՒՆ  
: Հոս է որ մենք մեզի կը հարցնենք,  
ո՞րք կանգ կ'առնէ չեղինակի մը երեւու-

կոյնը եւ ստեղծագործելու իրաւունքը:  
Այսինքն Արուեստը պէ՛տք է որ բո-  
լորովին առարկայական ըլլայ, թէ ամ-  
բողջովին ենթակայական:

Կան արուեստագէտներ, որոնք կ'առ-  
աջուրեն մնալ կարելի եղածին շփ  
մօտ կեանքին, այսինքն Բուրլուային, կը  
ջանան արուեստը նոյնացնել բնութեան  
հետ: Զուտ առարկայական արուեստը  
անկարելի է, եթէ ընդունինք որ ար-  
ուեստը այլափոխումն է իրականութեան,  
վերստեղծում մը: Արիշնէր բոլորովին  
կ'անտեսեն իրականութիւնը եւ կը ջա-  
նան իրենց ներաշխարհէն ստեղծել ամէն  
բան. եւ սակայն կարելի չէ այլափոխել  
բան մը, որ գոյութիւն չունի:

Վաստակի նկարիչը կ'ըսէ:  
«Զուտ գոյնը եւ գուտ ձեւը կրնան  
աշխարհի իմաստը տալ:

Եի՛մն է թե՛մոր մը դասական նկար-  
չութեան մէջ, եթէ ոչ գեղին կլորութիւն  
մը, այդ գեղին կլորը կրնայ նաեւ ներ-  
կայացնել այնքը. Ինչպէ՞ս մեր դարուն  
ինտաքսքրաի մարդկային կեանքի նեղ  
շրջանակով. տուն, վարտէզ, քաղաք:  
Արդի արուեստագէտը պէտք չէ նկարի  
ծառիմ կանաչ տերեւը, այլ փնտտէ թէ  
ուրիշ կու գայ բնութեան էությունը:

Ապսթրի արուեստը կ'արտայայտէ  
միայն չեղինակը, միայն անոր անձը,  
որովհետեւ ան կ'ուրանայ առարկային  
գոյութիւնը, եւ այդ ժխտելով կը խզէ  
ամէն կապ իր եւ մարդկութեան միջեւ:  
Արուեստը կը գառնայ անձի մը աշխար-  
հը, որուն ինքը միայն կրնայ իմաստ մը  
տալ. ինքը միայն կրնայ քացատրել  
գործածած գոյներուն, գիծերուն, կամ  
բառերուն իմաստը: Եթէ չեղինակ մը կը  
փափաքի իրական արուեստի սահմաննե-  
րուն մէջ մնալ, պէտք չէ մտնայ սր  
գոյները, գիծերը եւ բառերը պէտք է  
հողորդակցութեան կապեր ըլլան իր եւ  
հասարակութեան միջեւ եւ ոչ թէ պատ-  
նէշներ իր աշխարհին եւ անոնց աշխար-  
հին միջեւ:

Ն. ԶԱՐԻՈՒՏԵԱՆ



Լ. ՄԿՐՏԵԱՆ

### ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ԵՍՂ ԵՒ ԺԱՄԱՆԱԿԻ ՇՈՒՆՁՐ

1

Բոլոր տուեալները ցոյց են տալիս, որ Եզիլէ Զարենցի գրական վաստակը արժանացել է համազրային սիրոյ եւ դիտահասանքի: Ինչպէս նրա ողջութեան օրերին, այնպէս էլ մահից տասնամեակներ յետոյ՝ Զարենցի անունն ու գործը շարժառիւթներէն թափանցած թափանցած անկողնի վրայ կ'ընկնէ եւ են: Այլ խօսքով՝ նա դիմացել է Բամանակի քննութեանը եւ հազիւ թէ կասկած լինի, որ կը դիմանայ նաեւ դարձեալ գարեբի անհամեմատ աւելի լուրջ քննութիւններին:

Կեանքում պատահականութիւններ շատ են լինում, բայց դժուար է ունեն ինչ ամէն դէպքում պատահականութեան վերադարձը: Զարենցի իր բանաստեղծական վերելքով ամէնից առաջ, անտարակոյտ, պարտական էր իր վառ անհատականութեանը եւ ազա միայն այլեւայլ օժանդակ հանգամանքների: Նա ունեցել է անթիւ բարեկամներ եւ համակիրներ, բայց ունեցել է նաեւ նոյնքան հակառակորդներ ու շարակամներ: Հարթ չի եղել նրա ուղին: Այնուամենայնիւ, Զարենցի ճանապարհը ստեղծագործական իմաստով ընդհանուր ստմամբ յաղթանակով է պսակուել:

Կենսագրական կողմակի վկայ-

յութիւններից եւ հէնց Զարենցի գեղարուեստական խոստովանութիւններից յայտնի է, որ նրա գրական եռանդի իր-թանման զործումը բախտորոշ դեր են խաղացել երկու մեծանուն դէմքեր՝ Իրենց բարձր հովանաւորութեամբ: Առաջինը՝ Հայաստանի Հանրապետութեան օրօք Վլադիմիր Գլուշկոյն Նիկոլ Աղբալեանն էր, որը փաստօրէն այսպէս ասած Վեհաճի ուղղորդող առեւ Զարենցի ստեղծագործութեանը: Երկրորդը՝ խորհրդային օրօք Ալեքսանդր Միսանիկեանը: Տարբեր դժի վրայ պէտք է գիտել Խանջեանի քաջակերպական վերաբերմունքը հետադարձ: Այդպիսի բարձր եւ ընթացիկ հովանաւորութիւնների կողքին Զարենցը աւելի շատ ճաշակել է տարեայն հետեւողական պարտականութիւն ու անուշաղն բարոյական հարստանքի դառնութիւնը, մինչեւ իր եղբրական մահը: Սակայն այսօր նրա անունն է փայլում հայոց արդի պատմութեան երկնակամարում եւ դեռահասում է նրա թեղուն ճանապարհը ըստ ամենայնի:

Զարենցը վերջին հաշուով հաստատուն աւել գրուեց հայ ժողովրդի եւ մանաւանդ մտաւարականութեան սրբուրում: Դրա ազատացը լուսազոյն աղբուկն այսպէս կոչուած անհատի պաշտու-

ժուռքի տարիներին: Հակառակ ամէն տեսակ դրակոնական եւ մահացու ար-  
վելքների, ընթերցողների անձնական  
խաջատոցներում ըստ հնարաւարին սըլ-  
րութեան պէս պահուեցին Չարենցի  
տպագիր երկերը եւ բարեկամների ժօտ  
մնացին նրան վերաբերող իրեղէն մա-  
սունքները: Այդ տեսակէտից Չարենցի  
հետ կարող է համեմատուել յասկապէս  
Բաֆֆին: Տարբերութիւնը այն է, որ  
Բաֆֆու քրտածի տակ պահուողը երկերը  
մասշնի լինելով շարքային զանգումա-  
նորին՝ աւելի լայն տարածում ունէին,  
իսկ Չարենցի ստեղծագործութիւնը պաշ-  
տամունքի արժանացաւ համեմատա-  
բար նեղ շրջանակում, յասկապէս դրա-  
նէր երիտասարդութեան կողմից: Դա  
եւս դժուար է պատահական համարել:

Յէնե Չարենցի երկերը շատ անգամ  
են վերահրատարակուել ու տարածուել,  
թէն նրա կենսի ու ստեղծագործու-  
թեան վերաբերեալ բազմաթիւ յօդուած-  
ներ եւ ուսումնասիրութիւններ, նոյնիսկ  
դրբեր են լոյս ընծայուել, կարելի է  
վստահօրէն պնդել, որ ամբողջական ի-  
մաստով բուն շարենցադիտութիւնը դեռ  
չի ծնուել եւ յայտնի չէ, թէ երբ կը  
ծնուի: Մինչեւ հիմա նոյնիսկ մի կանո-  
նաւոր եւ ամփոփ, հմուտ ձևաքով գըր-  
ւած կենսագրութիւն չի պատրաստուել:  
Եղածը տակաւին չի անցնում դասագըր-  
քային կցկտուր տեղեկութիւններից: Իսկ  
գրականագիտական յօդուածները հիմ-  
նականում կրում են նկարագրական կամ  
յոճախ միակողմանի փոտաբանական  
բնոյթ: Բուն վերլուծութիւններ լինում  
են ի միջի այլոց, Բացայայտ է, որ Չա-  
րենցի անուան ամէն մի յիշատակու-  
թիւն, երկրի ներքում թէ դրսում, ա-  
ռայժմ աւելի շատ հանդիսանում է սի-  
րոյ եւ հպարտութեան առիթ, ընդհա-  
նօր վերաբերմունքի ճշգրտւմ, քան ման-  
րակրկիտ գրականապիտական ուսում-  
նասիրութեան յատկութիւն:

Եւ այս ամէնք ինքնին հասկանալի է,  
Չարենցի գրական ժառանգութիւնը, ամ-  
բողջութեամբ վերցրած իր բազմալարու-  
թեամբ, մեծութեամբ, խորութեամբ եւ

մանաւանդ առերեւոյթ հակասականու-  
թեամբ՝ օւնի դիմադրական մեծ ուժ եւ  
հնչողութեամբ չի ենթարկուում մաքի ըն-  
թացիկ ու թեթեւ մարզանքների: Մակե-  
րեսային եւ վճռական եղբայրանքումների  
ժամանակն արդէն անցել է: Իսկ այդ  
ժառանգութիւնը լիովին ու անվերա-  
պահօրէն իսկապէս քննութեան առնելու  
ժամանակն էլ գեռ չի եկել: Քոնդի դրա  
համար նախ հարկաւոր է հրապարակի  
վրայ ունենալ բանաստեղծի յայտնի եւ  
անտիպ երկերի ըստ հնարաւորին լիա-  
կատար ու ակադեմիական մի ամբող-  
ջական հրատարակութիւն: Հարկաւոր  
են, բացի այդ, հանրային նպատաւոր  
պայմաններ, ինչպէս եւ Չարենցի ստեղ-  
ծագործութեան մէջ յասկապէս թափան-  
ցելու ի վիճակի եւ այդ ստեղծագործու-  
թիւնը ամէն կողմից լուսարձակների  
խաշածեման տակ առնող գրականա-  
պէսներ: Այն ժամանակ թերեւս աստի-  
ճանարար լուծուեն այնպիսի կնճռոտ  
հարցեր, որոնք այժմ մեզ համար մեծ  
մասամբ մութ հանելուկ են:

Ճիշդ է, Չարենցի ստեղծագործու-  
թիւնը ընդհանրապէս աչքի է ընկնում  
իր փայլով եւ շիտակ պայծառութեամբ,  
ինչ որ բաւական դիւրացնում է գրական  
վերլուծումների գործը: Բայց նա յա-  
կանչում է նաեւ բազմախորքութեամբ  
ու յաճախ էլ վերին աստիճանի խրթին  
երկերով: Ճիշդ է, Չարենցի համար  
բնորոշ է արտասովոր անկեղծութիւնը,  
ինչ որ առաւել հմայք ու կշիռ է տալիս  
նրա գործին, վստահութիւն ներշնչում  
եւ օղնում այն հասկանալուն: Բայց ճա-  
կատագրական պարագաների բերմամբ  
նա հարկադրուել է դիմելու մեծ ու փոքր  
գարտուղութիւնների, դրանով իսկ շփոթ  
գնահատականների աղբիւր ծառայելով:  
Այնպէս որ տակաւին յաղթահարելու եւ  
վերծանելու շատ բան կայ:

Չարենցի վաստակի ուսումնասիրու-  
թիւնը բացառիկ կարեւորութիւն ունի  
ոչ միայն նրա համար, որ մենք գործ  
ունենք բանաստեղծական ինքնին վեթ-  
խարի մի անհատականութեան հետ, այլ-  
եւ ու մանաւանդ նրա համար, որ Չա-

րենցը իրենով խորհրդանշում է մի ամբողջ գրական ժամանակաշրջան, մի օրջակի փուլ եւ աստիճան, ու հանդիսանում է հասարակական օրոշակի տրամադրութիւնների ցայտուն արտայայտութիւն: Յայտնի է, թէ «ժամանակի շունչը լինելու» բանաձեւը որքան մեծ տեղ է բռնում Չարենցի գրական հանգանակի մէջ: Ստեղծագործող արուեստագէտի եւ ժամանակի փոխարարութեան հարցը մշտապէս դադողեցրել է նրան՝ գրական արշաւախոյնի մինչեւ եղբերական մայրամուտը:

Եւ քնական է, որ Չարենցի երեւան գալու փաստը դիտուել օչ թէ որպէս մի ինքնահնար մեկուսի երեւոյթ, արտասովոր եւ անակնկալ հրաշք, այլ որպէս Հայ գրականութեան զարգացման մի բարձրագոյն փուլ, հանգուցային օղակ, մի նոր որակ: Չարենցը, անտարակույս, իր կազմաւորման շրջանում սնուել է իրեն նախորդած գրական սերունդների ստեղծագործութեան հիւսիսով, ապա միայն աէր կանգնել իր ինքնուրոյն ճանապարհին ու դարձել կենտրոնական դէմք ժամանակակիցների համար, միաժամանակ շատերի համար ուղեցոյց եւ ուղիների հանդիսանալով: Նա սիրելով մերժել եւ մերժելով սերել է իր մեծանուն նախորդներին, սկզբից եւ ի վերջոյ արժանաւորելով սակայն, ըստ էութեան զգուստ եւ գիտակից վերաբերմունք: Նա այդ կարգի իր մտածումները շարադրել է գեոեւս 1923 թուին՝ «Երկու աշխարհի սահմանագծում» վերնագրով յօդուածում: Չարենցը, նկատի առնելով նորաստեղծ հասարակական պայմանները, իր հասկացած մեւով բնութագրում էր առեւալ իր միջավայրի շանցեալին բունաստեղծների Յովհաննէս Թումանեանի, Աւետիք Իսահակեանի եւ Վահան Տէրեանի ստեղծագործութիւնը եւ եզրակացնում, թէ զուրիչ պիտի լինի մեր օրերի երգը, եւ նա ուղէ էլ, չի կարող առնելու չնիւն, անցեալին: Չարենցը վերաբնութեան էր ենթարկում ինչեալ բանաստեղծների գրական այժմէակաւնութեան հարցը, բայց չէր ձխտում ոչ

նրանց կատարած դերը եւ ոչ էլ ժանաւանդ նրանց արժէքը: Հետագայում Չարենցը զանազան ստիճիւրով տեղադարձու այդ հարցին, զարգացրեց ու քանիցս վերանայեց իր տեսակէտները եւ աւելի շնտեց իր սէրն ու հաւատարմութիւնը՝ այդ վրականութեան դարաւոր ժառանգութեան նկատմամբ, ընթանալով հանդերձ իր ինքնուրոյն ստեղծագործական ճանապարհով:

Եղիւէ Չարենցը փաստօրէն հանդիսացաւ իր մեծ նախորդի՝ Վանեանի հայոց բանաստեղծ թումանեանի գրական ժառանգորդը:

2

Եթէ բուն շարենցագիտութիւնը առայժմ նախապատրաստական փուլի մէջ է միայն, Թումանեանագիտութիւնը, ընդհակառակն, հասունութեան շրջանում է ապրում: Թումանեանի երկերը եւս շատ են հրատարակուել եւ նրա մասին շատ է գրուել: Այդուհանդերձ, 1964 թուին Երեւանում ապուած «ԹՈՒՄԱՆԵԱՆ» ՈՒՍՈՒՄԵԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ» վերնագրով Առաջին ժողովածուն հիմնովին տարբերում է մինչայժմեան հրատարակութիւններից: Երբեմնի որոշ խմատով նոյն ընթացքն ունեցող միապաղաղ, անայտարարական ոգով շարադրուած գրութիւնների փոխարէն՝ այժմ կողք-կողքի ճառագայթում են քննական կոփուածքի բազմատեսակ ուսումնասիրութիւններ: Ընթերցողների տրամադրութեան տակ են դրուած կամայ-ակամայ ժառանգութեան տրուած երկեր, նոր խոսք տակալուստու փորձեր են արուււ: Եւ զուրիւս բարձր մակարդակի Թումանեանագիտութեան լոկ սկիզբն է, ինչպէս որ կարելի է գատել հրատարակչների առընթեր խոստումներից: Այսպիսով պարզում է, որ 1923 թուին Թումանեանի մահուան առթիւ գրուած Չարենցի վերոյիշեալ յօդուածի այն միաջը, թէ Թումանեանի մասին այլեւս համարեալ

ասելիք չկայ՝ շատ վաղաժամ էր: Քանզի Հանրայայտ է, որ թուժանեանը սոսկ անհաս բանաստեղծ չէր, այլ մի ամբողջ ժամանակաշրջան, մի ամբողջ աշխարհ, ազգային կեանքի ու հոգեբանութեան վերժանումներէ առատարուի սղորիւր: Ուստի եւ պատահական չէ, որ այժմ մեծ տեղ է բռնում թուժանեան - Չարենց յաջորդականութեան հարցը՝ այդ երկու կոթողուած դադարների փոխ-յարարելութեան հարցը:

Դեռեւս 1957 թուին տպուած «Նորիչ Չարենցի ստեղծագործութիւնը» ժողովածուում՝ էջ. 2րրաշեանի «Չարենցը եւ թուժանեանը» ուսումնասիրութիւնը հէնց այդ հարցն էր առաջ քաշում: Իսկ թուժանեանի վերաբերեալ պատրաստուած յիշեալ ժողովածուում զանազան ուսումնասիրութիւններ այս կամ այն չափով շօշուփում են առհասարակ սրբական յաջորդականութեան, թուժանեան-Չարենց պատմական կապի խնդիրները, կամ ուսանելի եւ թելադրական գիտողութիւններ են պարունակում այդ կապակցութեամբ: Մի խօսքով՝ ամէն տեղ յականէ-յանուանէ ներկայ է Չարենցը:

Այսպէս, Մուրէն Աղաբաբեանը զգրական ժառանգականութեան ժշտական ու յանրակական կոտիւն, զգեղարուեստական հին ու նոր պատկերացումների օրինայափ մենամարտի մասին խօսելիս՝ ներկայացնում է Չարենցի ըմբռնումները բնաշրջումը թուժանեանի նրկատմամբ եւ այդ իրողութեան դրուպատաճառները, վերստին յիշեցնում Չարենցի անյողողը եզրակացութիւնը, թէ «թուժանեանն է անհաս Արարատը մեր նոր քերթութեան»: Մի այլ՝ Հր. Մուրադեանի յօդուածում քննութեան է առնում թուժանեանի եւ Ռափայիլ Չատուանեանի ստեղծագործական փոխ-յարարելութեանց հարցը: Կոյնպէս պարզւում է, որ թուժանեանն էլ իր հերթին, իր գրական աշխին մտնելիս, անպայման չի հետեւել իր բանաստեղծ նախորդներին, ձգտել է իր նոր գեղարուեստական խօսքն ասել եւ իսկապէս ա-

սել է, միաժամանակ յայտարարելով, թէ՛ «Եւ օրհնեալ են ամէնքն իրենց տեղը»: Այս նշանակում է, որ ամէն մի նորակազմ գրական սերունդ՝ ի շէմս մանաւանդ իր ակնաւար դէմքերի, թէեւ մերժում է իր նախորդների սուղործագործութեան որոշ կողմեր՝ ասելի նոր եւ կատարեալ արժէքներ ստեղծելու համար, անպայման չի ուրանում եւ մոռանում այդ ստեղծագործութիւնը: Այդպէս պատահեց եւ Չարենցի հետ, որը սկզբում. որդի վերապահումներով շանաց ամէն կերպ սահմանադատուիլ զանցեալից», իսկ յետոյ իր գործով ու խօսքով եղաւ այդ անցեալի ամենախանդոտ եւ օրինական ժառանգորդը:

Թուժանեանի վերաբերեալ ժողովածուում Լ. Հախվերդեանի գծումնաների հայրենասիրական մտախնայը 90-ական թուականներին յօդուածը սկսում է այսպէս. «Նշանակալից խորաթափանց ընդհանրացում էր մաքսաման տեսութիւնը, որով Մանուկ Աբեղահանը բնութագրեց հայ միջնադարեան գրականութիւնը: Բայց այդ շատախիղճ ձգում է հայ նոր գրականութեան վրայով հեւ Արովեանից ու Ալիշանից մինչեւ Սրամանեթ, մինչեւ Տէրեան»: Մրան կարելի է առայժմ անելացնել, որ եթէ իրչի է հիմնականում մաքսաման գրականութիւն համարել հայ միջնադարեան եւ նորայոյն գրականութիւնը մեծ մասամբ, ապա դա առաւել հեւ կիրառելի է Չարենցի ստեղծագործութեան նկատմամբ: Հէնց նրա երկերում է, որ բացարձակ ուժգնութեամբ արտայայտում է մաքսաման ոգին՝ իր տեղուտ ելելէջնորով: Անշուշտ, միշտ էր հարց է ծագում, թէ մաքսաման՝ այս, բայց յանուն ինչի՞, ի՞նչ նպատակների: Եւ արգեօ՞ք Չարենցի մաքսամանը որեւէ ձեւով հանգիստում է տաննակ զարեթի գիտակից մաքսաման տրամաբանական շարունակութիւնը: Բոչար փաստերը աներկբայօրէն վկայում են, որ այս՝ Դեռ ակնին: Տաննակ զարեթի ընթացքում ստեղծագործող անմանց համար ապագային ճանապարհը դադարաւորական առա-

մով գրեթէ մէկ էր եւ յտակ, կեանքի ուղղութիւնը որոշ: Իսկ Չարենցի ագրարած ժամանակաշրջանը անհամեմատ րարդ ու խոսնակ, երբ տասնապատիկ շանքեր էին պահանջուած նախ կողմնորոշուելու, ճանապարհների խաչմերուկներում պլուխը չկորցնելու եւ միաժամանակ շուշափելի ու արդիւնաւէտ զործ կատարելու համար: Դա պահանջում էր ուժերի զերազոյն զօրահաւաք, ամէնօրեայ լարուածութիւն եւ ոգու առուել տոկոսութիւն: Այս չի նշանակում, անշուշտ, թէ նախորդ դարերում հայ մշակոյթի գործիչների համար զարգացման պէս մաքառելը հեշտ էր եւ Ժանր զոնորութիւն չէր պահանջում: Բայց, արնուամենայնիւ, կայ լարուածութեան շափի, ներքին աւարտաքին կապանքների յաղթահարման, ուժերի յարաբերակցութեան տարբերութեան հարց:

Այժմ Հայաստանում չի վիճարկուած այն դրոյթը, որ թումանեանն ու Չարենցը հանդիսանում են հայ նորագոյն բանաստեղծական խոսքի զարգացման երկու հանդուցային փուլերը, որոնցից երկրորդը յաջորդում է առաջինին: Այնպէս որ նրանց ստեղծագործութեան ձեւակերպն ու որակական նմանութիւններն ու տարբերութիւնները որոշ իմաստով պատկերացում են տալիս եւ նրանց ագրարած ժամանակների աշխարհայեացքային նմանութիւնների ու մանուսնոյ տարբերութիւնների մասին: Երկուսի ստեղծագործութիւնն էլ ամէնից առաջ նշանակալից է նրանով, որ համակողմանիորէն արտացոլում է նրանց ժամանակը, սպայային ուսկայ կիսանքը եւ զեղարուեստական մտածողութեան բնոյթն ու մակարդակը: Այժմ հետաքրքրուողները կարող են Չարենցի առոյթների ու բանաստեղծական զանազան կտորների մէջ

տեսնել, թէ նա որքան բարձր էր դնուած թումանեանին, նրա պարզութիւնն ու իմաստունութիւնը, նոյնիսկ երբ ինքը խրթին էր դրում, որքան էր ցանկանում նրա նման լինել հայ բազմադարեան գրականութեան երկար շղթայի մեծագոյն օղակներից մէկը, տանց նրաժարուելու իր ինքնութիւնից: Այստեղ հարկ չկայ աղբյուրի մէջբերումներով ծանրաբեռնել յողուածը: Բայց միշտ էլ հարկաւոր է աչքի առնել ունենալ թումանեան-Չարենց գրական զօր, յաջորդականութեան եւ փոխ-յարաբերութեան հարցը, երբ ուզում ենք ճիշդ որոշել Չարենցի տեղը հայ գրականութեան պատմութեան մէջ: Փանդի նրանցից իւրաքանչիւրը անվիճելիորէն ջանաց իր ժամանակի շունչը դառնալով, ժամանակները տարբեր շնորհներն ունէին եւ բնականաբար տարբեր եղաւ այդ բանաստեղծներից իւրաքանչիւրի ստեղծագործութեան կենսական պարունակութիւնը եւ լարուածութեան աստիճանը:

Եթէ թումանեանին առաջին իսկ քայլերից ուղեկցեց կեանքի վաղա՛ւտ իմաստութիւնը եւ նա իր շրջապատի լուսաւոր ուժերին համաքայլ ընթացաւ՝ հայրենի բնաշխարհի վերանորոգման ու նրա մարդկանց կենսական ինքնապատուելիւն ձեռք բերելու ժամանակաշրջանում եւ եղաւ ժամանակի հարազատ գեղարուեստական տարեղիւրներից մէկը, այդ Չարենցը աչք բացեց մի փոթորկոտ ու ա՛նեղ ժամանակ, երբ բազմաթիւն զանգուածների ստեղծագործութեան զօր էր բունակալ ամբողջաբանների տրամադրութեան տակ, որոնք էլ անպատիժ կերպով իրենց կամքն էին թելադրում. ուստի եւ կա՛մ պէտք էր ճզմուել ու անհետ կորչել, սրպէս անհատականութիւն, կամ էլ պէտք էր դարին յարմարուելու ուղիներ որոնել:

Ն. Ա. Ա.  
 (Շարք: 1)  
 Լ. ՄԿՏՏՁԵԱՆ



Ե Դ Ո Ի Ա Ր Դ  
Պ Օ Յ Ա Ճ Ե Ա Ն

Եղուարդը եւ ճանչցայ շորս տարի առաջ, 1962-ին, Լիբանանի մէջ: Կը կարծէի տեսնել ժրկածին ու ժրկա- յոյց տղայ մը, կապորճը միշտ ուսին, աղեղը՝ պիրկ, պատրաստ արձակելու նետը, որ կրնար հանդիպել արդար մարդու մը կամ մեղաւոր մարդու մը եւ կամ... Երկուքին ալ: Պայքարի լիղը, կը մտածէի, իր բնական տարերքը ըլ- լալու է, քանի որ ամէն տեղ կը միջա- մբտէր ան, իր արձակին՝ ինչպէս քեր- թրամոնթերուն մէջ ալ:

Տեսայ ո՛չ թէ յախուռն նետաձիգ մը, այլ Հեզ ու բարի տղայ մը: Վշտա- կոծ ու դառնացած երկրածին մը, որ կ'ապրէր ո՛չ թէ երկրի վրայ, մարդոց Հեա, այլ երկնքի մէջ, Հրեշտակներու Հեա:

Իր անձնաւորութիւնը հակապատ- կերն էր իր զբաղանութեան: Կուռազան տղայ մը չէր, բարի սամարացի մըն էր, զգայուն, թերեւս նոյնիսկ զերզայուն, տենդաւար, վանականի խառնուածքով քնարակիր մը: Ոչ կապարն ունէր ու- սին, ո՛չ աղեղ՝ մեռքին: Իր ժպիտն իսկ կ'արտայայտէր ցաւ, դառնութիւն, դժգոհութիւն, Հիասթափութիւն:

Բայց յայտնապէս սովորական մարդ չէր այս ձեպէլ-Մուսացին: Խոտովայոյց հոյի մը, որ կրնար իր ներքին խոտվքը քողարկել արտաքին ծածկոյթի մը տակ: Իր գիրիփորձները, ինչպէս պիտի ըսէր Սկիւտարի հանճարեղ պատանին, աւելի շատ ներսն էին, քան դուրսը:

Ներսի մարդը եւ դուրսի մարդը երկու բնեւունք էին, որոնք զիչ անգամ իրարու կը հանդիպէին, ներքին միջ- րէականի հատման կէտին վրայ:

Կրնամ ըսել, թէ իր սերունդին զը- րողներուն մէջ ամէնէն ինքնատիպն էր Եղուարդը, թէ իր բառերով եւ թէ մա- նաւանդ արտայայտութեան եղանակով:

Իր ամէն մէկ խօսքը, նոյնիսկ ամէն մէկ բառը պատկեր մըն էր, իւրատիպ նկար մը, զոր իր երեւակայութիւնը, անսանձ երիվար, - կը քանդակէր պատաստին վրայ, երբեմն Հիացնելով, երբեմն շփոթութեան մասնելով մեզ:

Իր սերունդին մէջ բացառիկներէն էր:

Բաջածանօթ երիտասարդ մտաւո- րական մը, որուն Հեա կը խօսէինք մեր նոր զբաղանութեան եւ զբողներուն մա-



սին, յատկապէս Լիբանանի մէջ, ըստ ինծի՝ իբրեւ եզրակացութիւն իր յայտնած թեր ու ղէմ կարծիքներուն. «Եզրարդ սմէնէն տողանդաւորն է իր սերունդի աղոց մէջ»:

Երկուքը, Եղուարդը եւ միւսը, ուղիկիցներ չէին, նոյն ուղիին ուղիւորները չէին: Կրնամ նոյնիսկ քսել, թէ իրարու հակադիր գեղրքեր էին, մէկը աջ էր, միւսը՝ ձախ: Ասիք սմէն պատճառ ունէր նեմացնելու ալը: Պատեհ ատիթ մըն էր արժեւաբը թեք պահելու: Բայց, — մտածեցի ես, — քանի որ այս առիթը շօղտադործեց նժարին մէտը ցած իջնցնելու համար, իր կարծիքը մասնաւոր արժէք մը ստացաւ իմ աչքիս:

Այն ատեն, ինչպէս հիմա, ես ալ Համոզուած եմ, որ Եղուարդ Պոյաճեան ո՛չ միայն իր սերունդին լաւագոյններէն մէկն էր, այլեւ թերեւս միակ լաւագոյնն էր: Հաւանարար կը շափազանցեմ եւ ապահովարար կը շափազանցեմ, որովհետեւ այս սերունդը դեռ լիովին չտուաւ, ինչ որ կրնար տալ, ինչ որ կոչուած էր տալու:

Եթէ միւսները բարձրանային, — եւ վստահ եմ, որ պիտի բարձրանան, — բարձունքին վրայ պիտի գտնէին մէկը, յետեցի աղայ մը, որ լայն ու արձակ օդի մէջ ծնած, անած ու մեծցած էր:

Կը դաւանիմ, թէ գրականութեան մէջ ինքնատիպ մարդը ան չէ, որ ոչ մէկուն կը նմանի, այլ ա՛ն է մանաւանդ, որուն ոչ ոք կրնայ նմանիլ:

Չեմ կարծեր, որ սխալ բան մը ըսած կ'ըլլամ, եթէ այս վերջիններուն մէջ դասեմ Եղուարդը:

Սկսեակ մը չեղաւ այս մէկը, խո-

հուն ու ծխալունչ դնացքով այս մեկուսի ուղիւորը, որ լաւ հայերէն գիտէր, մանաւանդ գրելու արուեստին մէջ հըմուտներէն էր: Ոճ մը ունէր, եւ ստիկս ինքնին բաւական է լաւ դրող ըլլալու համար: «Ոճ ունեցէք, որպէսզի ես կարենամ գրագէտ կոչել ձեզ». չեմ յիշեր ո՛վ ըսած է ստիկա, բայց ես կրնայի կնքահայրը ըլլալ այս նախադասութեան:

Վիճակներու շարքը, զոր սկսաւ եւ շարունակեց գրեթէ մինչեւ իր մահը, զբական քննադատութիւն չէ անշուշտ, ոչ ալ զգիմաստներն է Հրանդ Ասատուրի ըմբռնումով, պարզապէս գրականութիւն է, բայց հանոյքով կը կարգացուի իր գեղեցիկ հայերէնին եւ ինքնատիպ, ոճ մը յայտնաբերող գրելածեին ու պատկերներուն համար:

Կը թուի, թէ Եղուարդ Պոյաճեան պայքարը կը սերէր իբրեւ տեսութիւն, բայց ոչ՝ նաեւ իբրեւ պրակտիկա: Գոնէ ես մօտէն տեղեակ չեմ իր անձնական կեանքին՝ հանրային կեանքի մէջ: Ես չեմ յիշեր, որ կեանքի մէջ ալ պայքար մղած ըլլայ այն ձեւով, ինչ ձեւով որ ըմբռնեց ու գործագրեց զայն գրականութեան մէջ:

Երէկ՝ Լեւոն Գարսէնը՝ այսօր՝ Եղուարդ Պոյաճեանը: Եթէ ըսէի, որ վաղը մեզմէ մէկուն պիտի դայ կարգը, մեր մշտագալստը ընկ' Ս. Վրացեանը պիտի յանդիմանէր զիս:

Եղուարդին համար՝ մահը կարգով բան մը չեղաւ, կարգէ դուրս, գրեթէ անկարգ բան մը եղաւ:

Ախտ'ս...:

Ա. Ա.

## ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՐԱԳԷՏՆԵՐՈՒՆ ԿԱՇԿԱՆԴՈՒՄՆԵՐԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԿԱՐԿԵՐՈՒ ՏԱԿ

Գրագետ՝ բանուտ — Գրականությունը՝ գործի — Արևեսոր՝ փրակականության միջոց — Գրագետի վերիվայրումները — Փամբակապետը — Կամբակապետի արտադրություններ — Գրագետը օտարերկրյա պահանջներ — Գրագետի քաղաքացիական պարտականություններ — Գրականության մակարդակներ — Իրաւ գրագետի մարդկայական օտարացման անկարելիութիւնը:

### Գ.

#### ԽՐՈՒՇՉՈՎԻ ԱՆԿՈՒՄԵՆ ԵՏՔ

1965 Ապրիլ 22-ին, Խրուշչևի անկումից վեց ամիս ետք, սովետական մամուլը կը տեղեկացնէր, թէ Լենինեան մրցանակի համար թեկնածու ներկայացուած ստեղծագործական հեղինակութիւններէն եւ ոչ մին մրցանակի չէր արժանացած:

Միակ մրցանակը տրուած էր Թղթակիցի մը:

Գրականօրէն, կամ արուեստի տեսանկիւնէն արժանի գործեր չկային արդեօք:

Մրցանակի յանձնախումբին ներկայացուած գործերուն մեծ մասը բարձր պովասանքի արժանացած էին ընթերցողներուն եւ քննադատներուն կողմէ: Ուրե՞մն...

Հիմնական պատճառները մրցանակ չյատկացնելու, նոյնն էին ինչ որ 1958-ին, եւ 1961-ին, 1958-ին Լենինեան մրցանակը շարունակաւ «Ստոլցնայի» պատճառով, 1961-ին, երիտասարդ ՉԵՐՐՈՂՆԵՐՈՒ ԷՎԱՍՏԱՄԱՐՈՒԹԻՆՅՆ էր պատճառը:

Խրուշչևի անկումով հարցերը չէին վերացած, նոյն գոյալիճակը կ'առաջացնէր նոյն հակադարձ շարժումը:

Խրուշչևի անկումէն ետք, ատեն մը, յայտնի չէր թէ ղեկավարութեան մէջ

առաջացուած այդ փոփոխութիւնը ի՞նչ ձեւով պիտի ազդէր սովետական արւեստի աշխարհին վրայ:

Նախապահ ֆենետիկ սպանութիւնը, եւ առաջինական յարաբերութեանց բարեկաման անհրաժեշտութիւնը կը թուէին թելադրել միջազգային մասնազուլութեան, թէ վերջ պիտի գտնէր միջազգային լարուածութեան թուլացումը, եւ անոր հետ, քնակահարար, նաեւ աստիճանաբար ձեռք բերուած որոշ ազատական մտայնումը սովետական գրականութեան եւ արուեստի մարզին մէջ:

Մինչեւ Մարտ 1966 այդ հակադարձ շարժումը տեղի ունեցած չէր:

Իսրերախտութիւն մըն էր, որ Խրուշչևե ինքը, նախ քան իր անկումը, այնքան յետադիմական վերաբերում ցոյց տուաւ արուեստներուն հանդէպ, 1962-ի վերջաւորութեան, որ իր անկումին հետ կարելի եղաւ միացնել նման մտածողութեանց, նման ըմբռումներու անկումը: Անդամի մը համար զէթ, արուեստի կաշկանդող այդ ըմբռումները կարելի էր նոյնացնել կորսնցնող կողմի մտայնութեան հետ:

Աւելի վերջերք, 1966-ի զարնան, մէկ երկու նշաններ կային, թէ պարտիան իրօք մտահոգ էր մշակութային ազատութեան խնդիրներով, եւ կամ ժող

դավաճողի անդրադարձումով թէ կը պահտի մշակութային ազատութիւնը, Յիշեմ ձեռն փոփոխութիւններ չեղան, կը թուի թէ պիտոքը յիմար միջամտութիւնները նուազեցան այդ շրջանին:

Գլխաւոր փաստը ասոր, Փրատայի մէկ յօդուածն էր, իր նոր, յետ Խրուչչիւնան խմբագրին կողմէ ստորագրուած (Մէլքոնց Ռուսիան) որ 1965 Փետրուար 21-ի թիւին մէջ կ'առաջնափոխէր «Պարտիան եւ ինտէլիկենցիան» վերնագրով յօդուածին մէջ ա'յն պայմանները, որոնք կրնային ջախջախել, կամ արգելադրուի արուեստի եւ գիտութեան ինքնուրույն ստեղծագործութեանը:

Այդ յօդուածով, Ռուսիան կը յարձուկէր մէկ հասիկ առաջադրի զարգացման վրայ (կրնայ ան ըլլալ Սասնիքը, կամ Խրուչչիւն) եւ կ'ազդարարէր պարտիայի պաշտօնատարներու կողմէ, անհնական, եւ նմանական գեղարվեստական զտաւաններ գործածելու դէմ: Կը խօսէր, ներկայ սիտեմին մէջ դոմիլիան ունեցող փոստիկէն՝ շտաբան հարկանաւորութիւն եւ ստանդարտութիւն ստալտ անոնց, որոնք շատ կ'ազդէին:

Անորի դրականորէն, բերնին մարտի ամիսը մը վճարելով հանդերձ զՄոսկովիտական իրազարուցեանն Հին, Մոսկովիտան կարգաթօսին, կ'երթար աւելի ետ, դէպի Պարտիայի 1920-ին ունեցած կեցուածքը դրականութեան եւ արուեստի հանդէպ, երբ Պուխարին կը յայտարարէր, թէ ինք կողմնակից էր «ազատ, անիշխանական քրտակցութեան» դրականութեան մարզին մէջ, եւ երբ Փոլիսկովիտան, 1924 Յուլիս 1-ին կը վճարէր, թէ անախճակար Յնադաստութիւնը պիտի է խառնակէր հրամայելէ» արտած մը, որ Ռուսիաններ յարաւոր կ'ընդգծէր, եւ կ'ընէր, թէ «խրական ստեղծագործական աշխատանք կարելի է կատարել, միայն փնտելով, փորձելով, սղտաորէն արտայայտելով», եւ անսակեմներու բարեւոյնով:

Ա զիջ անդին՝ «Պարտիան» արժեք է արմատախիլ

րնէ ամէն սեսալի միջամտութիւն գրական գործերու մէջ, որ կու գայ անկարող պաշտօնաններէ, կամ անարտօրններու կողմէ:

Այս պատուական սկզբունքները, սակայն, դարձեալ սահմանուած էին ճիշտութեամբ մասնաբաշխման, ընդհանրապէս իրապաշտութեամբ ե հակառակ պէտք է ըլլան «Պարտու զարգացման» հակառակ այս սահմանափակումներուն, նորէն բաւականին կը մտնային այդ սահմանումները սովետական սկզբնական շրջանի պահանջներուն, թէեւ դեռ չէին հասնէր կեդրոնական Եւրոպայի կարգ մը յարգութեանը մտածողութեան, ինչպէս օրինակ Արեւելեան գերմանացի փրֆիտէօր Ռուզէր Հալմանի մտածողութիւնը, որ կը զանթէ թէ 1930-ական թուականներուն հաստատուած ճիշտագրական Եւրոպայարտութիւնը մեղսած սովետ մըն է Խոստայնովար արուեստագէտներուն մեծ մտքին նախը, եւ կը պահանջէ որ պարտիան ստեղծուի Նրաւարի միջամտելէ դեղարտական եւ անպարտական հարցերուն մէջ, եւ բոցէ ի բաց կու կ'ազդէ զարգացման դրականութեան մը համար, ինչ որ սովետական պաշտօնական սկզբնակներու եւ ակցերու համար, սակայն ընդունելի բան մը չէ:

Հակառակ այս իրողութեան, Ռուսիաններէ արտայայտութիւնը նշան էր, թէ երկուքէ վարագոյրի նախ անկէ կայունութիւն կար եւ անիլ ստող մը ստածողութիւն, զան անցեալին, զանի որ նման մտածումներ կրնային արտայայտուիլ մամուլով, հրատարակով:

Ռուսիաններ յօդուածը երեսն էր բերէր մտածման հակայական փոփոխութիւն մը: Աւրիջ բան է սակայն մտարտութիւնը, աւրիջ՝ դարձու: Եւ այդ օրերուն իսկ կային բազմաթիւ յուսանաւանքներ երեսնութեան, որոնք միւս ուղղութիւնը կը մտածանշէին: Օրինակի համար, կեդրոնական Պուխարի թիւթին, «Կոմունիստ» 1965 Մարտի թիւին մէջ յօդուած մը կար պարտիայի Մոսկովիտ

ճիւղի քարաւզարին կողմէ, որով կը փառասարկէր, թէ երիտասարդութիւնը կարիք ունի Հերոսական քայլեր նկատարող գիրքերու, եւ թէ «Ճէ ժամ Իփան Տննիւթի շի կեանքէն» գրքին նման գրքեր կրնան միայն շփոթեցնել գիրնից: Միւս կողմէ, Սոյճէնիցիի նոր պատմութեամբը, որ լոյս պիտի տեսնէր «Նովի Միք» մէջ, ինչպէս նաեւ Բաուշէնկոյի մէկ բանաստեղծութիւնը, որ լոյս պիտի տեսնէր «Իննութե» մէջ, լոյս չտեսնան, յետագուեցան առնուազն:

Նոյն ատեն, բանաստեղծ ԺողիՖ Պրոտզին կը մնար աքսորուած, որպէս «փարագիթ» մը:

Հակառակ այս հակասութեանց, գործնալ քաղաքական էր նման մտածումներու արտայայտութիւնը Հրապարակով, որովհետեւ, եթէ պարտիան լը՛օրէն շարունակէր այդ տեսակէտը պաշտպանել, կազմակերպուած Հաստատութիւնները չէին կրնար երկար ժամանակ դիմադրել, աքսիւր ըլլալ ատոր:

Իրական թուլացում մը մշակութային մարզի տոկմաներուն մէջ ո՛չ միայն պիտի առաջնորդէր գարթօնք մը սովետական գրականութեան մէջ, այլ նաեւ ամբողջական փոփոխութեան պիտի ենթարկէր սովետական եւ արեւմտեան ժողովրդականութեանց յարաբերութիւնները, եւ անոնց ներկայ, պարտադիր քաղաքականութեան սահմաններէն դուրս պիտի բերէր առաջնորդելու Համար իրական, թէ՛ եւ թնադատութենէ ոչ զուրկ) փոխադարձ յարգանքի մը գետնին վրայ:

Կասկած չկար, որ 1961-ին սկսած պայքարը դրական ըմբոսաներուն եւ տոկմանքի պահպանողականներուն միջև, կը շարունակուէր նաեւ 1965-ին:

Թումիանձեւէն ետք, Վալէրի Տէմէնթիւ, 23 Մարտ 1965-ին «Լիթէրաթուրնայա Կազէթայի» (Գրական Քերթ) մէջ Հրապարակ կու գար «Կանաչ առնելը կը մերժեն» վերնագրով յօդուածով մը, ուր կը պաշտպանէր այն տեսակէտը, թէ «Երակամ բանաստեղծութիւնը մշտական վերամտորոգում մըն է: Եւ այդ մտորոգումը մէջ ամէն ինչ կախում ունի ո՛չ միայն

բանաստեղծի անձնական ցանկութիւններէն, այլ նախ եւ առաջ ժամանակի անփոփոխելի օրէնքներէն, եւ ընկերային կեանքի օրէնքներէն: Այդ յօդուածով Տէմէնթիւ կը մերժէր տեղաշարժը, միշտ միեւնոյնը կրկնել, կը գտնէր՝ թէ արուեստի ստեղծագործական մղիչ ուժը ճի՛շդ այդ կանգ առնելու մերժումն է մէջ կը գտնուէր:

Իսկ այս տեսակէտը չէր կրնար ընդունելի ըլլալ տոկմանքի պահպանողականներուն կողմէ, որոնք, իրենց կարգին, իրենց մտածողութիւնը առաջ կը քշէին Ռուսական Սոցիալիստական Հանրապետութեան Գրողներու երկրորդ Համագործակցութեան (Մարտ 1965): Գրողներու Միութեան նախագահ Լ. Սոսոլովիւ, Համագործակցութեան իր ճառին մէջ յիշատակեց բազմաթիւ գրողներու անուններ, սակայն մեծ գլուխութեամբ խուսափեցաւ տայէ անունները Փոսթմոդէրնիզմի, Սոյճէնիցիի, Աքսիւրի, Պոպովի, Եւսուշէնկոյի, Նեկրասովի, Վոզնեսնայի, Թէնտիբաքովի, Սոյճիի, Ախմատովի, Սլուսկիի եւ բազմաթիւ այլ գրողներուն, որոնք ամէնէն աւելի փնտրուած ու գնահատուած Հեղինակներն են գրասէր Հասարակութեան կողմէ: Այդ Հեղինակներու անունները շարուեցան իր կողմէ, մինչև անգամ երբ կը յիշատակուէին պարտիայի ուղղութենէն չեղում ունեցող Հեղինակները:

Ընդհանուր առումով երիտասարդ գրողներու մասին խօսած ժամանակ, Լ. Սոսոլովիւ հեռեւեալ արտայայտութիւնը ունեցաւ.

«Իրենց յայտարարութիւնները անկապակից են, դժուար է անոնց մէջ գտնել ուրիշ բան, քան հասարակ տեղիք արտայայտութիւններ, զոյննութիւններ, նշանակելի զանցառումներ, եւ սկիստիկ հեղուակ մը: Այս ալ ամէնէն կարեւորը չէ: Անհատ մը, որ չի փափաքիր անիտ պարզ ակառք մը ըլլալ եւ ինքզինք իր տէրը կր համարէ, տուած չլըլար իր անկախութեամբ փտտը: Կեանքի մէջ դիւ բան մըն ալ ըրած չէ ամ, շատ շատ

պետութեան իրեն կերցուցած հացին համար աշխատած է»:

Այսպէս, հակամարտութիւնը շարունակուեցաւ ամբողջ 1965-ի ընթացքին: Սովետական կեանքին, յատուկ վերիվայրումներով:

Երբեք պէտք չէ մտածել, թէ անոնք որոնք գրական պատուիւններ կը պահանջեն քաղաքական ընդդիմադիրներ են պարտիային ու կը պայքարին գոյութիւն ունեցող կարգերուն դէմ. ո՛չ: Ընդհակառակն, բոլորն ալ պարտիայի պաշտպաններ են, պարտիայի գոյքը բնկու պատրաստ. սակայն կ'ուզեն ՄԱՐԻԿԱ-ՅԻՆ ՄՕՏԵՏՈՒՄՈՎ մտնեալ կեանքի խնդիրներուն, եւ ոչ թէ «անխիճ» մը պարզ ակուսիճն մտեցումովը:

Այս պահանջն է որ կը հակադրէ գիրենք պարտիայի պաշտօնատարներուն, որոնց համար գրագէտը պէտք չէ անցնի պարտիայի հրահանգով գրող պաշտօնեայի մը սահմաններէն այն կողմ, քանի որ այդ ձեւով անհատական ազատութեանց հարցը կը դրուի, ինքնաբերա-

բար, եւ պարտիայի ամբողջատիրութեան հիմերն իսկ կրնան խախտիլ:

Գրաչէտներէն ոմանք, հակառակ պաշտօնական շրջանակներու արտայայտած տեսակէտներուն, կը շարունակեն պաշտպանել իրենց իրաւունքը, պատկերելու կեանքը առարկայականօրէն, խօսելու՝ ազատօրէն եւ ամէն ձեւի երկուայթ, քլա՛յ սովետական իրականութենէն ներս, քլա՛յ արտօրէն աշխարհին մէջ, արժէքաւորեալ անհատապէս, անփական ապրումներուն ու մտածումներուն բերած արժէքորումով մը:

Անոնցմէ է Եւտուչէնկօն, որուն գրականութիւնը 1965-ին վերածուած էր արդէն չափածոյ յղուածագրութեան հրապարակագրութեան, ինչպէ՛ս կը պատկերանայ վարի բանաստեղծութենէն, որ լոյս տեսաւ «Նովի Միր» գրական թերթի 1965-ի թիւ 1-ին մէջ: Այդ բանաստեղծութեան մէջ, Եւտուչէնկօ խօսքը ուղղելով ձկնորսական արտելի մը նախադասին, կ'ըսէ՝

«Միքէ անձանօ՞ք եմ ձեզ օրէճֆները ուղղամիտ ձկնորսութեան .  
 Ենզցուցած է՛ք շատ. ցանցերուն հիւսքը: Այօրինի եմ ձեր այս ցանցերը:  
 Եւ եքէ իրօք անկարելի է այս աշխարհին մէջ ապրիլ առանց ցանցերու,  
 Գէք ամէն զնով ըրէ՛ք դուք այնպէս, որ անցնէ քլա՛յն օրինական ցանցեր:  
 Հիմ ձուկերը բռնուած են, ազտուով չուցին:  
 Նարերը սակայն... Նարերը եւս բռնուած են հոն. ի՞նչ կ'ուզէ՛ք դուք  
 ձագուկներէն:  
 Լայնցուցէ՛ք բացուածքները ցանցերուն. անընդունելի չափերով  
 անցուած են անոնք:  
 Տուէ՛ք առիթը երիտասարդներուն, դուրս փախչելու անկէ, բռնուելի առաջ:  
 Փախչելու դուրս այդ սատանայական ցանցերէն. պապական ազատութեան:  
 Նայն է, պիտի անցնին անոնք ծակերէն. պատուելով գիրեմք բանտոյ  
 ծագերը, իրենց ճարտու Վրայ:  
 Մնալէ ետք սակայն այդ ցանցերուն մէջ, երիտասարդները այլեւս  
 երիտասարդ չեն կրնար մնալ:  
 Եւ իրենց վերջին ռստիւմին մէջ պիտի լսէ՛ք յուսահատական մեռելութիւն մը:  
 Լաւ լսեցէ՛ք, պարոն Նախագահ. դուք ձեր վերջը պիտի գտնէ՛ք ցնխաւ  
 ճոհիճի մը մէջ:  
 Ինչքան անզնան ցանցին անցները, այնքան վտտ պիտի քլա՛յ ձեզի համար»:

(«Նովի Միր», թիւ՝ 1, էջ՝ 95)

Մատուցելույի իսկ գրական ճակատադիրը, եթէ նկատի առնուի ու ջննուի, բաւարար պիտի ըլլայ երեսան բերելու այն նախասական մղումներուն ու որոշումներուն ընթացքը, որ սովետական ղեկավարութեան տասանութները կը յատկանշէ, անցնող սասնամանակի ընթացքին: Երկար ժամանակ Հայաստան տոկմաթիքներուն կողմէ, այս պահուստուն՝ արտեհատի ըմբռնողութիւնն ու պահանջը ունեցող բոլոր գրապէսներուն ու ջննարտաներուն կողմէ, Կոմսոմոլէն Հեռացուած, վերջնական, ջննագտուած, վճարուած, արտասահման համարքէլը արտօնուած, այս այնպիսի Հրատարակած իր ինքնակենսագրութեան համար ջննագտուած, մեղադրուած, 1963-ի աշնան, Ռուսաստան իր վերագործէն ետք ինքնաջննդատութիւն մը կը դրէր ու կը Հրատարակէր, գոհացնելու համար պարտադիր պահանջներու այդ ինքնաջննդատութիւնը անբաւարար համարուեցաւ. արմէ հաջ Հրատարակէց թանաստեղծութիւն մը՝ «Փառք Սովետական Ռուսաստանին» վերնու-

դրով, որը մեր սխալները արագորոշաբար տակմաթիքներուն. այս 1966-ի մէջ, Հրատարակեց վերի թանաստեղծութիւն-յուզուածը, ընդի Միքոյ մէջ, Հետադային ուրիշ թանաստեղծութիւն մը ընամակ Եսէնինի» վերնագրով ուր կը մեղադրէր Կոմսոմոլի նախագահ մը, Քանաստեղծներում հոգիս քա պատկերով կ'ուզես կազապարիչ մեղադրուելով, որուն համար Պարտադիր կենդանական կամիտէն եւ Կոմսոմոլներու կենդանական կամիտէն բուռն կերպով մեղադրուցին, ջննագտուեցին զինք ի վերջոյ, 1965 Նոյեմբեր ամսուն 32 տարեկան Մատուցելու, արտեհատի այս ուսական թանակէն մէջ, զէնքի տակ կանչուեցաւ. «Ձիւնաբախեան կատարելագործման շրջան մը անցրանու. հետք, մէկ անուպ թանակին մէջ: Թէեւ լատիներ եղան, թէ այս Վիարապուտիւնն ձեռք բերելու ստիպեց կող շուռէր պարտադիր գեղարտութեանը հաս:

(Շար. 4 եւ վերը յարորդով)

Բ. ՓԱՓԱԶՅԱՆ



## Թ Ի Ի Ր Ն Ո Ւ Թ Ե Ր Ի Ն

կան, որ կը գրեն տողազարձի ատեն. «համալ-սրան» կամ «համա-լրտարան»: Երկուքն ալ սխալ են իմ կարծիքով, աւելի ճիշդ՝ սխալ են ըստ նայ լիզոսի կամտեսագրքին: Համալրտարան աստանց քառ մըն է, կազմուած՝ համ նուբ-րուզատ ժամերկէն եւ լազաւն քառէն: Համ՝ տեղին համեմատ կը նշանակէ ընդհանուր, ամբողջ, եւ յն, միասին: Թ-րիտակ՝ համաաւրած, համալրտարանին, համակարծիք, համազգեստ, համակեցտեղին, համախմբում, եւ այլն:

Եթէ գրենք համալ-սրան, այս պարտադրին՝ ատանլին քառը պէտք է եղած ըլլայ համալ: Մենք այսպիսի քառ չտանինք (թուգեթէնի մէջ համալ՝ կը նշանակէ բռնահիբ):

Եթէ գրենք համա-լրտարան, այս պարտադրին՝ երկրորդ քառը պէտք է եղած ըլլայ համալ: Մենք այսպիսի քառ չտանինք (թուգեթէնի մէջ համալ՝ կայ լրտարան (թիով) քառ չկայ. կայ լրտարան (ատանց ըթի):

Ի՞նչպէս պէտք է գրենք ուրիմն: Ահա այսպէս. համա-լրտարան կամ համալրտարան, քննչպէս պիտի գրէինք իւրաքան, իւրաքան, իւրաքան, իւրաքան, տողազարձի ատեն: Կրնանք գրել համազգեստ, համաաւրած, համակարծիք: Ո՛չ, չենք կրնար: Ինչո՞ւ պիտի գրենք ուրիմն համալ-սրան:

Նոյն ձևի սխալ մըն է գրել զարծնիլ, վազցնել, երկարացնել: Կա՞մ պէտք է գրել զարծնել եւ կամ զարծընել, երկարացնել կամ երկարացընել:

Գա՛րձեալ, սխալ է գրել ժամանակա-լրտարան: Երջան-ը ատանին քառ մըն է եւ կը գրուի ատանց ըթի (չըլան), տողազարձի ատեն վիբը մնայ թէ վարը զայ. . . լրտարանակ, որտա-լրտարան: Ըր կը գրուի այն ատեն, երբ շըլան քառը

կրնի պէտք ըլլայ. . . լրտ-լան: Ըստ այս կանոնին՝ չենք կրնար գրել լրտարանա-լրտար, ինչո՞ւ պիտի գրենք ուրիմն զարա-լրտարան, ժամանակա-լրտարան կամ լրտարանակ, ըթով:

Տեղ մը կարդացի. «...ատանակ մը ճարտարարուեստի քանուորներ»: Այստեղ տասնհալը ո՛չ թէ ճարտարարուեստին կը վերաբերի, այլ՝ բանտարկութուն: Ըսել կ'ուզուի ճարտարարուեստի տասնհալ մը քանուորներ: Նոյն կանոնին համաձայն, սխալ է գրել ճարտարարուեստի նախագա՛րը. ուղիղ ձևն է «Ճարտարարուեստի նախակին նախագա՛րը»: Նախակին-ը Ճարտարարուեստն է, նախագահն է: Կարելի՞ է ըսել՝ կամ գրել գրուր Բագրին ընթերցողները: Ո՛չ, կարելի չէ. պէտք է ըսել ճագրին գրուր ընթերցողները, ինչպէս ներելի չէ ըսել կամ գրել «Պէլլոթի շամաղալիի վարչութիւնը» (ճըլըլ՝ «Համազգայինի Պէլլոթի վարչութիւնը», շատ-շատ կրնաք... պատ. մը զնի վարչութեան առջեւ՝ պատուարժան կամ պատուական իմաստով):

Հանգիպած եմ այս կարգի ուրիշ բարբարոսութիւններու. օրինակ՝ նախակին նուպարեան վարժարանի տնօրէնը: Նախակին-ը նուպարեան վարժարանը չէ, տնօրէնն է: Պէտք է ըսել ուրիմն նուպարեան վարժարանի նախակին տնօրէնը:

Շատ անգամ կը գրեն, ժանտանգ հանդէս մը նկարագրող թղթակցները կամ յարեհները «...երգից Գամա-Գաթիպայի ՎՄԱԸ Արաքսիմն»: Նախ՝ երգին հեղինակը Գամա-Գաթիպա չէ, Գամա-Գաթիպա է: Երկրորդ՝ զուրա կու զայ, որ մեր մայր գետը ո՛չ թէ Արաքս է, այլ... Արաքսի է: Արաքսն եւս պիտեմ, մենք Արաքսի անունով գետ չունինք, ունինք Արաքս, Երասի կամ Ա-

բազմ գեղանկ Երբորդ՝ Գամառ-Քաթիկոսի շքերթումն խորագիրը «Մայր Արաքս» չէ, «Մայր Արաքսի» ընտել չէ, Յիշեցէք եւ ուրիշներուն ալ յիշեցուցէք, որ Գ. Ք. Իր այս ոտանաւորը խորագրած է «Արաքսի արտասուէքը», ո՛չ «Մայր Արաքս», ո՛չ ալ մանաւանդ «Մայր Արաքսի»:

Յանախ իրարու տեղ կը գործածուին ընթերցանութիւն եւ ընթերցում բառերը: Ընթերցանութիւնը տարբեր բան է, ընթերցումը՝ տարբեր: Կ'ըսենք ընթերցանութեան դասագիրք, շինք ըսեր ընթերցումի դասագիրք: Նոյնպէս, կ'ըսենք ընթերցումը կէս ժամ տեւեց, շինք ըսեր՝ կոնդակին ընթերցանութիւնը: Գրքին ընթերցանութիւնը աւարտեցի (սխալ): Կրքին ընթերցումը աւարտեցի (ճիշդ):

Տեղ մը կարդացի. «...Գտած արդիւնքը եւ դիմագրաւած յաջողութիւնները: Արդիւնքը չին գտնել, կը ստանան: Ձեռք ըսեր «Ի՞նչ արդիւնք գտաք», այլ կ'ըսենք «Ի՞նչ արդիւնք ստացաք»: Նոյնպէս, սխալ է ըսել յաջողութիւններ դիմագրաւել, ճիշդը՝ յաջողութիւններ ձեռք բերել: Կը դիմագրաւուին դժուարութիւնները, բայց ո՛չ յաջողութիւնները: Պէտք էր ըսել «...ստացած արդիւնքը եւ ձեռք բերած յաջողութիւնները»: Գիմագրաւել՝ կը նշանակէ գէտ դնել. յաջողութիւններուն գէտ չեն գնել, ընդառաջ կ'երթան անոնց: Գէտ կը քննն միայն... յիմարները:

Առընչութիւն բառ մը կայ, զոր շտապեր, նոյնիսկ շատ շատեր կը գրեն առնչութիւն, ստանց ըթի: Այս բառին կազմութիւնն է առ-ինչ-ութիւն: Ինչ-ինչ ին ի՞նչ կողաւ, ո՞րք զնաց. կորսուեցա՞ւ... ո՛չ, այլ փոխուեցաւ ըթի: Կը հետեւի, որ պէտք է գրել առընչութիւն եւ ո՛չ թէ առնչութիւն: Կան կարգ մը բառեր, ինչին... դերդաստանէն, որոնց սկիզբի ին կը փոխուի ըթի. օրինակ՝ ինձ-ընձուղտ-ընձառիւծ: Ինչ-էն կը կազմուին ընչ-դ-ընչաքաղց-ընչասէր կամ անընչասէր: Կրնա՞նք գրել աննչասէր. ո՛չ: Ուստի՝ մի՛ գրէք առնչութիւն, այլ գրե-

ցէք առընչութիւն, ինչին ին ըթի փոխուելով:

Կարելի՞ է ըսել «յիտուն տեսուկ ձեւերու կերպարանափոխել»: Տեսակ, ձեւ, կերպարանք կամ կերպ մտաւարապէս նոյն իմաստը ունին. տեսակը գիշ մը ան է, ձեւն ալ գիշ մը կերպարանք կամ կերպ է: Նախընտրելի է գրել «յիտուն ձեւերու փոխել»:

Ընդհանրացած սխալ մըն է փայտի բայը: Մենք փայտիլ բառ չունինք, ունինք փայտիլ, շայտիլ: Նոյն ընտանիքին կը պատկանին դաշիլ, կառիլ, հանգիլ, հաւյն: Եթէ ուզենք փայտիլ գրողներուն չետեւիլ եւ գրել դաշիլ, կառիլ, հանգիլ, Սուրբ Մեսրոպը կ'անիծէ մեզ:

Ունինք գէն բառ մը, որ կը նշանակէ միաս: Ունինք նոյնանշին ուրիշ բառ մըն ալ՝ գեն, որ գենուլ բային արմատն է եւ կը նշանակէ գտն: Կ'ըսենք գէն ու շահ, շինք ըսեր գեն ու շահ: Այստեղ գենը (եղով) ծիծաղելի է: Նոյնքան է աւելի ծիծաղելի է գրել «ուխար մը գենուլ»: ճիշդը՝ գենուլ (գտնել, մասաղ ընել):

Ուրիշ երեւելի սխալ մըն է գրել «պատիժի արժանացաւ»: Պատիժը... պատիւ մը չէ, որուն մարդ կրնայ արժանի դառնալ: Արժանի ըլլալ կարելի է լաւ բանի մը, յարգանքի, պատիւի, շքանշանի, պարգեւատրութեան եւ ազանի... անուշապուր բաներու: Բայց արժանի ըլլալ պատիժի, անհեթեթութիւն է: Կարելի է այս բացատրութիւնը գործածել հեղեանքի համար կամ անիծելու համար մէկը՝ «օխ ըլլայ» իմաստով: Ձեռք կրնար ըսել նոյնպէս. «Այս դժբախտ վախճանին արժանի էք կամ չէք: Արժանի-ն պէտք է փոխել եւ ըսել, օրինակ, ենթակայ ըլլալ, ենթարկուիլ, առարկայ դառնալ կամ ասոնց պէս բան մը:

Ուրիշ պատկերազարդ սխալներ կան, որոնց պիտի անդրադառնանք ըստ կարգի (շատեր կը գրեն գիտութեամբ կամ անգիտութեամբ. «...որոնց մասին պիտի անդրադառնանք»: Հարկ կայ ըսելու, որ մասինը տեղորդ է եւ սխալ):

Բ. Թ.



**«ԲԱԳԻՆԻ ԳՐԱԿԱՆ ԶՐՈՅՑՆԵՐԸ**

Ա.

**ՎԻԳԵՆ ԽԵՉՈՒՄԵԱՆԻ «ԳԻՐՔ ԼԻՆԵԼՈՒԹԵԱՆ»Ը**

Զեկուցարար՝ Յ. ԻՍԿԵՆՏԵՐԵԱՆ

Յ. Իսկենտէրեան ներկայացուց գիրքը: Ապա հետեւեալ մասնումնհրը արտայայտուեցան.

– Գիրքը Լինելութեանը վէպ մը չէ, չունի այդ ձևի կառոյց, եւ հերոսներու յարակցում: Հիմնական հերոսներ ալ չկան, որ քանդակուին մեր մտքին մէջ. Աւետիքը կը ծառայէ որպէս հայելի, եւ միջոց՝ պատշենելու համար մեզ ամբողջ Հայաստանը, սիրցնելու համար զայն, իր ցաւերուն մէջ:

Կը նկարագրուին, ճիշդ է, դուրսի թշնամիներ, և ներքին թշնամիներ՝ յանձինս եկեղեցականներու, իշխաններու. կը նկարագրուի հայուն անընկճելի կամօքը՝ միացած տեսելու իր հողերը, եւ կը վերջնաւոյ ազուր թոնով մը, սակայն յատկապէս, ծրագրուած ձեւով դրուած գրքի մը սպաւորութիւնը կը մնայ:

– Եթէ անհատական տիպարներ, հերոսներ չկան, չկան որովհետեւ հեղինակը աշխատած է ներկայացնել հաւաքական հերոսներ, ամբողջ ազգը: Եւ յետոյ, գիրքը դեռ ամբողջական չէ, առաջին մասն է այս մէկը:

– Ծիւղ է որ պատմում մըն է աւելի, քան վէպ մը, սակայն խղճմտանքի ձայն մըն է այս գիրքը, որ կը բերէ մեզի հին օրերու տաղանայ մը, որ կը գոհացնէ, կը կշտացնէ նոր օրերու հայ մարդը, նոր օրերու տաղանային դիմաց կանգնած:

– Հարց է սակայն, թէ ի՞նչ չափով այդ ազգային տաղանայը անհատականացած է, որովհետեւ այդ գնով միայն դրականութիւն պիտի ըլլար, եւ այդ պարագային միայն մեզ պիտի հետաքրքրէր: Ի՞նչ չափով արուեստի գործ է, այս է բուն հարցը:

– Արուեստի գործ մը անհրաժեշտ է որ ունենայ լեզու, ոճ: Թեչումեանի գիրքը լիովին ունի այս երկուքը. լեզուէն ետք, պէտք է ըսելիք մըն ալ ունենայ՝ այս եւս կայ: Կայ տաք ապրում մը, որ վարակիչ է. արուեստ է ասով իսկ:

– Թեչումեան ներկայ հայերէնին մէջ բերած է միջնադարեան լեզուի բոլոր հարստութիւնները: Առաջին մեծ ու խոր տպաւորութիւնը, որ կը բերէն՝ այդ լեզուի անուշ համն է, օսմանականէն տարբեր կերպարներու սեղան մը կը բացուի մեր դիմաց, համեզ բաներ, բարոյականի բաներ կը հրամցուին մեզի:

– Համաձայն չեմ որ Գիրքը Լինելութեանը վէպ չէ. վէպը գանազան

ձեւերով կարելի է գրել, նամակագրութեամբ, հեռագրային ոճով նոյնիսկ կարելի է վէպ գրել: Գիրք լինելութեանը խորքին մէջ վէպ է: Ըսուեցաւ տրդէն, թէ միջնադարեան լեզուով համեմատած չրջանի աղուոր լեզուն կայ, կան նաեւ տասնեակ մը անձնաւորութիւններ: Կասկած չկայ որ մեծագոյն հերոսը գրքին՝ Հայ ժողովուրդն է:

— Գրքին խութեւրը այլ տեղ կը գտնուին, Դժուար է մեզի համար գիտնալ թէ այդ օրերուն ժողովուրդը ինչպէս կը մտածէր, ի՞նչ էր մտայնութիւնը: Որպէս արուեստի գործ՝ քարձր արուեստի գործ է: Տալնապ մը կայ, հաւաքականութեան մը տաղնապն է, որ մեզի կը փոխանցուի անձնաւորութիւններու միջոցով: Եւ այդ տալնապով այսօր ալ մենք կրնանք տառապել: Հարուստ է լեզուն, գիւտերով առատ: Իբր ակաբ կողմը վկայութեան կողմն է:

— Վիպէն Յեշումեան նախ քաւական զօրաւոր տուրք տուած է իր անմիջական չրջապատին եւ կարգերուն՝ սովետականին: Գրքին մէջ առասպելներ կան, որոնք կու գան ժամ ժառ Ռուսոյէն, մարքսիզմէն՝ թէ շինականը միշտ բարի է, թէ բեռը միշտ իր ուսերուն է, թէ իշխանը միշտ եղած է կեղեքող, կողոպտիչ: Թէ եկեղեցականները ասելի արարածներ եղած են, բոլորն ալ բացասական տիպեր են Յեշումեանի գրչին տակ: Այս մարքին մէջ է որ գիրքը կը տուժէ՝ ծայրայեղութեամբ, անիրազանի հասնող չափազանցութիւններով:

Յրդեօք գոյութիւն շունչ՝ մէկ հասիկ իսկ վանք, ուր Աստուած պաշտել կարելի ըլլար, չկա՞ր որեւէ վանք, ուր մատեան գրուած ըլլար: Իր յիշատակած Աւետիքի մատեանները ո՞ր գրուած են իրականութեան մէջ, եթէ բոլոր վանքերն ալ մատեան կը վանաւէին, ինչպէս կ'ուզէ ներկայցնել Յեշումեան:

Նոյն հարցումները կարելի է տալ իր իշխաններուն վերաբերմամբ: Մի՞թէ բոլոր Հայ իշխաններն ալ անպատասխանատու մարդիկ էին, չկոյն տարբեր հոգեբանութեան տէր իշխաններ: Ահա հաս, վկայութեան մարգին մէջ է որ կը կաղտայ գիրքը:



Բ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐՈՒ 5-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

Ձեկուցարեք՝ Գ. ՍԵԱԳՆԱՆ

Ձեկուցարեք Սորճաչին երկրներուն մէջ գրական համագումարներ հաստատելու սկզբնական ու կուսակցական սրտանունըք թուոց նախ եւ ապա ընդհանուր ակնարկով ժը ներկայացուց Հայաստանի գրողներու նախորդ համագումարները, իրենց ժամանակով, առաջադրութիւններով եւ միջոցորտով: Այս ընդհանուր պատկերէն հոգ՝ կանչ առաւ ու նանդացաւ Հինգերորդ համագումարին վրայ:

Հաստատուած զեկուցումին, գրական այդ համագումարներէն եւ ոչ մէկը գրականորէն անդրադարձած է գրականութեան վրայ, եւ Հայաստանի գրողներուն նուանումները անհատական շնորհի եւ տարանդի արդիւնք են եւ ոչ թէ այս կամ այն համագումարին մէջ առնաւոր սրտանուններուն սկզբով մտքը բերուած արուեստի գործեր: Միայն որ, համագումարի համագումար մարդիկ հետեւողական չեն մտայ տրուած սրտանուններուն, երկրորդը առաջինին հանած բանաձեւներուն կիրարկութեան նախանձարիւղիք ցոյց չի տար ինքզինք, կը նետեի ընդհանրապէս գրողներու ստեղծարարութեան: Այս իրողութեան դիմաց, համագումարը ըստ ինքեան նշանակութիւն ժը ունենալէ կը գտարի եւ կը դառնայ աւելի ըստ պրական հանդիպում մը: Եւ արդէն, Հայաստանի գրողներու համագումարները արք առհասանէն գուրս չեն ելած: Համագումարը կրնայ շատ շատ ստեղծուածը արժեւարեւ, բայց ստեղծարարութեան թափ չի կրնար տալ:

Յարաբերաբար միւսներուն, — ըսաւ զեկուցարեքը, — վերջին համագումարին միջոցորտը աւելի առողջ էր եւ թէն զարգացական եւ արդարային հարցերը առաջնակարգ տեղ մը կը գրաւէին, բայց գրողներէն ոմանք, ի մեն ուրախութիւն շահագրգիռներուն, յալոցիցան գրական հարցեր հոս արժարձեղ եւ վորճեր եղան գրականութիւնը աղախիկի դերէն գուրս բերելու: Այս կապակցութեամբ միտիթարական է յիշել Գ. Սեւակի «Անտառի Օրէնքը»:

Գ. Սեւակեանի զեկուցումէն հոգ, հետեւեալ կարծիքները արտայայտուեցան:

— միշտ չէ զգրականութիւնը ազատ չէ՞ նախադասութիւնը, երբ կը գործածուի սովետական կարգերու տակ գոյութիւն ունեցող գրականութեան համար: Համայնավար կուսակցութիւնը գրադէտը կը համարէ ընկերային աշխատաւոր մը, համանման բանուորին, զիւղացիին, որուն աշխատանքը կը կոչանայ սպազայ մարդը կատուցելուն մէջ, ըստ մարքսիզմի պատկերին: Որով՝ գրականութեան ազատ ըլլալու, կամ ազատութիւն-

ները արգելուած ըլլալու հարց չէ, որ գոյութիւն ունի ազիւսական տարածքին վրայ, այլ այն, որ պրագմալ պարտաւոր է ծառայել պետութեան, որպէս անոր ամենէն հատու գործիքը, համրային կարծիքը առաջացնելու համար, եւ մտղը հաւանաւարութեան հաւատարիմ պահելու համար:

- Վերջին համագումարին արժարժուած հարցերէն մեծ մասը պահանջն աւելի ազդային մտահոգութիւններ ներկայացնող հարցեր եղան: Այս համագումարին մէջ նորութիւնը պրագմալներու որոշ արժանապատուութեան պահանջներն է, կամ զայն ձեռք բերած ըլլալու փաստը: Գրագէտի արժանապատուութեան յայտնութիւններն են որ լաւագոյն արձագանգը ունեցան հայ ժողովուրդի սրտին մէջ: (Հայաստանի եւ Սփիւռքի մէջ): Ռմանք կը պահանջեն, ինչորելու ձեռով, ոճանք կը խնդրեն, առանց պահանջելու, ոճանք կը յիշեցնեն անհրաժեշտութիւնները: Հող չէ թէ վերջին բանաձեւումը բարբոսի տարբեր բան դուրս եկաւ, հող չէ թէ Հայաստանի լոյս ընծայած թերթերուն մէջ, շուտփիլի եւ կարեւոր մաս մը համագումարին մէջ արտայայտուած մտքերէն՝ ԶԵՆՁՈՒՆՅԱՒ: Իրողութիւնը կը մնայ այն, որ գրագէտը այս անգամ թիչ մը աւելի ճակատը բարձր կըցաւ ներկայանալ արուեստի իր պահանջներով, եւ իր ժողովուրդի ապուստաներուն արտայայտութիւններով:

- Ինչպէս մատնանշեց զհիւսիսները, գրական համագումարներուն ուղղութիւն տուողները, անոր բանաձեւերուն ներշնչում տուողները ո՛չ մէկ կապ ունին գրականութեան եւ արուեստներուն հետ՝ ժտանովներն են, ճիշտագոյնն ու Մայիսեանները, եւ ոչ թէ Մարտի կորցիւններն ու Նաուշինկաները, Փասթէրնաքները: Գրագէտը աղատ փնտրութիւն, ազատ արտայայտութեան կարելիութեան զրկուած է, որով՝ համագումարները դարձած են մէյ մէկ թատերական ներկայացումներ, կանխօրոջ պատրաստուած, եւ արդէն իսկ բեմադրուած անգամ մը զէթ այն ուղղութիւններուն մէջ, որոնք յստակ կերպով կ'երեւին նաեւ Ծրդ համագումարին պրագմալներու արտայայտութեանց մէջ:

- Հարց արուեստը Սփիւռքի մէջ պրական համագումար ընելու հարցին մասին:

- Սփիւռքի պայմաններուն մէջ զժուար է գրական համագումարներ ունենալ: Գրականութիւն ունենալու համար սեփական միջավայրին մէջ, սեփական միջավայրէն զրդիւններ պէտք է առնել, որքան մենք մեր գրողները կարենք առբերային, այնքան անոնք պիտի գրեն արուեստական բաներ, արուեստէ հեռու գործեր պիտի արտադրեն: Հայաստանի գրողները, գեղարուեստական ընդլզումի ազատութիւնը չունին, Սփիւռքի գրողներէն շատ փոքր թիւ մը հասած է պեղարուեստական ընդլզումին: Որով հայ գրականութիւնը կը կաղայ, պէտք է ձեռքազատել գրողը այս բոլոր բարդոյթներէն եւ մղել որ ստեղծագործէ իր իրաւ իրականութիւնը:

- Գրականութիւնը համագումարներու մէջ չի կրնար ձեւաւորուիլ: Կեանքէն պէտք է զայն ան, կեանքի բովին մէջ պէտք է ձեւաւորուի ժամանակաշրջանի մը գրականութիւնը:

Գ.

**ԵՂՈՒԱՐԴ ՊՅՅԱՃԵԱՆԻ  
ԹՈՒՂԹ ԶԱՒԱԿՆԵՐՈՒՍՈՐ**

Ջեկուցարար՝ Բ. ՓԱՓԱՉՆԱՆ

Շարաթ, 19 Մայիս 1967-ի Բաղինի գրական զբոյցի նիւթն էր Ե. Պոյաճեանի «Թուղթ Զատիկներուս» գիրքը: Զեկուցարարն էր Բժ. Բ. Փափազեան, որ ներկայացնելէ ետք գիրքը, իր դանազան հատուածներով, ու շօշափած նիւթերով, ընդգծեց թէ գանդալ էւ ուշագիւր ընթերցում մը անհրաժեշտ էր կարենալ ըմբռնելու համար Ե. Պոյաճեանի գրականութիւնը, ուր հեղինակը զղացումներէն աւելի՝ մտքին է որ կը դիմէ. մակերեսային զգայնութեանց փոխարէն՝ ներքին արձագանդներն է որ լոյս աշխարհ կը բերէ:

Պոյաճեանի այս գիրքը խորհրդածութեանց գիրք մըն է, ներքին ճիւղ մը. խորերէն եկող, խորունկ տառապանքի մը, խոր ցաւի մը ճիւղ, սակայն լոյսով շաղախուած:

Կ'արժէ Պոյաճեանը ճանչնալու ճիւղը ընել. երբեմն դժգոհիլ, երբեմն ընդմիջել, վիճիլ հեղինակին հետ: Երբեմն ալ դիմիլ, ընդունիլ որ ճիւղէ կ'ըսէ, մանաւանդ որ՝ աղուոր կ'ըսէ:

Ճիւղէ է, որ Պոյաճեանի գիրքը վկայութիւն մըն է լեզի բաներու մասին, սակայն իրաւ գրադէս մը կրնա՞յ խուսափիլ ստիպել, ներկայ դարուն մէջ:

Երկար ժամանակ մեր գրականութեան մէջ առատութեամբ տեղ զբտան աժան խանդավառութիւններ առաջացնող, ընթերցողի ինքնախաբէութեան պահանջները գոհացնող կեղծ գրականութեան մը արտայայտութիւնները: Երբ սակայն աշխարհը մտած է քսուերու արժէքադրկման շրջանի մը մէջ, երբ նախորդ դարուն հիմնական համարուող գրքից բոլոր արժէքները, ըմբռնումները զարձած են մէյ մէկ հարցականներ, կամ անոնց շարաշար գործածութեան պատճառով, կամ անոնց պարունակած կեղծիքին երեւան գալովը, ինչպէ՞ս կրնայ, իր ժողովուրդին եւ մտքովութեան տաղնապը ապրող գրագէտը գրել աղուոր բաներու մասին միայն, քաղցր բաներու մասին:

Պոյաճեանի այս գործին մէջ ներկայ են երեք տեսակի տաղնապներ, իր անձնական տաղնապը, հայ մարդու տաղնապը, եւ ընդհանրապէս՝ Մարդու տաղնապը: Կը պակսի գրքին թերեւս աշխատուած կառուցում մը, որ աւելի ազդու պիտի դարձնէր զայն:

Զեկուցարարը կարգաց Պոյաճեանի նամակներէն հատուածներ, ուր ան կը պաշտպանէր «Թուղթ» մը իր «ժանր»ին մէջ քննելու անհրաժեշտու-

մեան մասնումը, եւ այդ ժանրին արտօնած որոշ շարժով անկապակից գրեթե ձեւը:

Այս ձայն առին ներկայ գրասէրները եւ արտայայտեցին հետեւեալ կարծիքները.

- Պոյանեան շարժէն աւելի սեւ կը տեսնէ սմէն ինչ, բնաւ ազուար եւ լաւ բաներու մասին չի գրեր:

- Այս տեսակէտը կապ չունի գրականութեան հետ: Գրագէտը լաւն ու վատը սուցանանոց մը չէ, բարոյախոս մը չէ. գրագէտ է ու այդքան միայն:

- Տիրութիւն, սիրախաթիւն, մտան ու լաւը, լիդի բաները շատ ընդհանրական ձեւին տակ է միայն որ կու գան իր գրչին տակ. չեն մասնաւորաւ, չեն անհատականացած:

- Պոյանեանի գրչին տակ տեւարար կը խուժին մասնումներն ու բառերը, պատկերները, որոնց զտումի աշխատանքն է, որ չի կատարեր Պոյանեան:

- Քուպր Զոտակնիրոս գիրքը հոգեկան եւ մտանձան տարժանքի մը արդիւնք է: Իմաստասիրական պոսթիւմ մըն է, որ չի կարուիր անհատականացման: Եսնիակ կրկնութիւնները մասնումն ու տարժանքը աւելի կը պահանջեն եւ ընթերցողը կը պահանջ տարտալիչ:

- Պոյանեան արժէքաւոր գրագէտ մըն է, որ իր ժամանակին եւ տարժանքներուն մասին ազուար վերաբերիւնները տեսած է, եւ ներկայիս այդ ապագային աւ ընթերցողը հանրաբով պիտի գիտէ այդ գիրքին:



## ՀՍԳ ՄԻՈՒԹԵԱՆ

### ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹԻՒՆՈՒՄ

Մեր առջի քիւիմ մէջ, գրախօսականով եւ նշմարով մը անդրադարձած էինք Գ. Մահարիի «Ճյրաւոյ Այգեստաններ» անուն գործին, խոստանալով նոյն տանն շարունակել նշմարները: Տեղի անկուրթեան պատճառով դարձեալ կը վերադառնանք այդ բաժինը եւ կու տանք Հայաստանի գրող-նկարա քարտուղարութեան «Ելծարը», որուն տարբի պատիկ բաժինը գեղելի էր: Եւրոպայի մէջ կը ներդաշնակուի ընդգրկուած ժամանակաշրջանին կազմած մեր փաստերուն, տրամաբանութեան ու ռզիին հետ: Յակասէ անտանէ կատարած մեղադրանքը ըմբռնելի է, գեղեցիկը առանց պաշտպանեալներու անունները տալու բաւած արդար յօսքն է. Մահարիի ժողովրդի բարեկամներուն ղէմ որդեգրուած արու կեցուածքը:

Հայաստանի Սովետական Գրողներու Միութեան քարտուղարութիւնը, «Գրական Թերթ»ի եւ «Սովետական Գրականութիւն» ամսագրի խմբագրութիւնները բարձրաճիւղի մտակներ, յոգնածներ ու գրախօսականներ են ատցել Գ. Մահարու «Ճյրաւոյ Այգեստաններ» վէպի մասին:

Քննարկելով եւ անկուրթելով ընթերցողների դիտարկութիւնները, քարտուղարութիւնը նպատակաշարժար գտաւ հրատարակել իր կարծիքը: Գ. Մահարին, անդրադառնալով մեր պատմութեան բախտաբաշ շրջաններից մէկի գեղարուեստական պատկերմանը, մոռացութեան է մատնել պատմական այն իրադարձութիւնը, որ հայ ժողովրդի արեւմտեան հատուածը բուրձնախան բանակալութեան պայմաններում միշտ էլ հնքակայ է եղել ազգային եւ սոցիալական ճնշման, հալածանքների ու կոտորածների, տեղափոխութեան ու քնազնջման: Հետեւաբար սխալ է այն ըմբռնումը, թէ իբր վանը դրախտ էր. «եղեմս եւ իբր այդ «եղեմի» անգործը խախտուեց զըրսից եկող արեւելեան գործիչների պատճառով: Անտարակոյս իր ժամանակի բուրձնական եւ մանր-բուրձնական կուսակցութիւններն աւ քաղաքական հասանքները՝ ճիշդ չըմբռնելով հայ ժողովրդի կացութիւնը եւ տրեւալ ժամանակաշրջանի իրադրութիւնը, ի վիճակի չէին ուղղութիւն տալ, իմաստաստներն ու գլխատրեւի ազգային ազատագրական արդարացի պայքարը, ժողովրդական գանգուածների ցատումն ու ընդվզումը ճնշման ու բռնութեան ղէմ: Այդ պայքարի ընթացքին վնասեց յատկապէս Դաշնակցութեան արկածախնդրային գործունէութիւնը:

Սակայն հեղինակը, չհասկանալով պատմական իրադրութիւնների իմաստն ու ժողովրդի ինքնուրոյն պայքարի ճշմանակութիւնը, յանգել է անընդունելի, եակապատմական ընդհանրացումների, որ իբր հայ ժողո-

վերդի մեծ ոգրերգութեան պատճառը «Բզէզների բունը անտեղի կերպով խառնելն է»։ մինչդեռ անցեալ դարի կէսերից թարթական բռնակալութիւնը պետականօրէն ծրագրել էր իր կայսրութեան մէջ բնակուող այլազգիների բնացնումն ու սուլումը, մահաւանդ Բալկանեան երկրների ագատագրումից յետոյ :

Այս հակամարդկային ծրագրի դէմ ծառայում էին յայնքան ու արարները, հայերն ու պուլխարները, եւ այդ ծառայումը օրինակաբար կրում էր համաժողովրդական բնույթ : Այս պատմական իրազուրկեանն այլ մեկնարանութիւն տալը հակամարտութեան է, հակագիտական :

Այնուհետեւ Գ. Մահարին, տարուելով կենցաղային մանրութիւններով, չի կարողացել տեսնել հայ ժողովրդի քնատրութեան վեհութիւնն ու մարդկայնութիւնը եւ բացասական, ոչ բնորոշ բարոյական յատկութիւններով է օժտել վէպի կերպարներին, դրանով իսկ վիրաւորելով հայ ժողովրդի արժանապատուութիւնը : Այսպիսի կերպարները, ի հարկէ, չէին կարող կազմակերպել վանի հերոսամարտը, մի հերոսամարտ, որ հայ ժողովրդի պատմութեան լուսաւոր էջերից մէկն է եւ ըստ էութեան դուրս է մնացել վէպից :

Վէպը լեցում է բազմաթիւ անճանարութիւններով, որոնք կերպարներ չեն դարձել. աւելին, պատմական բազում դէպքեր ենթարկուել են կամայական, անբարեխիղճ մեկնարանութիւնների : Վէպում ատատ տեղ են գտել անհաշիւ բամբասանքներ ու երակներ, անպատշաճ սրամտութիւններ, չարդարացուող գաւառ :

Վէպի յաջողուած էջերը բնականաբար կորչում են գաղափարական գեղարուեստական վերայիշեալ արատների մէջ եւ զրկում ճանաչողական, դաստիարակչական նշանակութիւնից :

Քարտուղարութիւնը բարձր է գնահատում ամուսնի գրողի տաղանդն ու վաստակը եւ վստահ է, որ նա լրջօրէն կը վերանայի իր գրական այս անյաջողութիւնը եւ ճիշդ եզրակացութիւններ կը հանի իր հետագայ ստեղծագործական աշխատանքի համար :

(«Գրական Թերթ», 1967, թիւ 21)



**ԻՌՃՐՈՆ ԵՒ ԲԵՄԱՆԱՅԻՆ ՈՐՈՒԵՍՏ**

**ՇԷՅՔՍՓԻՐԻ ԱՄԱՌՆԱՅԻՆ ԳԻՇԵՐՈՒԱՅ  
ԵՐԱԶՅԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ**



Վանքաժ ֆաֆաղան Քասերախուսքը, Գրե. Գ. Յաղչեանի բեմադրութեամբ, Ապրիլ 28-ին Գէլլուսի Կրկնական Քասերախուսքին մէջ ներկայացուց Շէյքսպիրի «Ամառնային Գիշեր»-ան Երազը, Թարգմանութեամբ Լ. Քոլոսեանի:

Շէյքսպիր ներկայացնելու ամէն փորձ ճիշդ մը կ'արտայայտէ, ասով իսկ դաստանի է՝ չի բուսի սակայն:

Գծուածքի ու մէկ խառն անիւնը բեմայարգարութիւն կամար, որ տրուածի զորք մըն էր, կամապատասխան Շէյքսպիրի արտայայտելու արժանի անասանդակն ինքնաբերական էր, որպէս երազային. Յաղչեան զոչը դաստանը արժանի է բեմայարգարութիւն կամար:

Կայ սակայն Շէյքսպիրը, որ չկար ներկայացան մէջ (կամ շատ քիչ)՝ սրտմտեալ բանաստեղծութիւն է «Ամառնային Գիշերուայ» Երազը եւ զերակատարներու խաղարկութիւնն աւ ժանտանը Հայերէն արտադրութիւնը, անտիկ լեյտուարութեամբ (բացառութեամբ մը՝ Օր. Առաջիկ Գառնական պարիկներու թաղանթի գերով) ո՛չ մէկ նպատակ չի կարգիցի պատկերացումին, պատրաստ էր իրականութեան զարմեղիւն, իրականութեանը պատրաստի գերանելու բանաստեղծական Հայակապ կարգիւթեանց: Խաղարկութեանը. Օր. Առաջիկ Գառնական պարի կարծեալ խաղարկութեամբ յաջող կուտ Հո-

մարուի, եթէ աշխատանք ըլլար Հայերէնը, լեյտուարութեամբ, արտադրութիւնը:

Ընդհանրապէս պէտք է արձանագրենք, թէ ի՞նչ արժէք է ամէն բանէ առաջ գործածուած լեզուով, աշուար, մաքուր, լաւ հնչուած լեզու մը պէտք է Հոսի բեմէն սրտ, այլապէս արձանի բերելու չի կրնար արտադրուի:

Թարգմանութիւնը եթէ կրցած էր արժանի Շէյքսպիրը, ժամանակ չա՛րիւ, եթէ շատ քիչ քանիք անկէ որոնք ճշգրիտ չէին, չէր կրցած սակայն Շէյքսպիրեան բանաստեղծութիւնը արտայայտել. որպէս մեղադրանք չենք ըսեր, Շէյքսպիր Թարգմանիւնը չէր թէ անկարելի բան մըն է, Մասնական կան մը աստով ցոյց պիտի աքրարի, զիւ երկար զարեք Հայ զրականութեան մէջ:

Գառնական անկարգիւն զերտաններու բանին մէջ կարելի էր գտնել անգոն լաւ խաղարկութիւն, սակայն անկարգաշարժութիւնը մընայ, եւ լեյտուար Թասերակի այլ մասի արժեքաւորման:

Դերասանի, բեմադրիչի կամադրուած ճիշտի, խորանկ ըմբանդութիւն, Կարք արտայայտութիւն, կրակներու լեյտուարութեամբ խաղարկութեան, եւ աշուար Հայերէն մը պէտք էր, այն փառաւոր սէրերներուն մէջ, որոնք կրան Շէյքսպիրի Քասերակին մթնոլորտի լաւագոյն արտայայտելիքը:

**ՓՇԱԾԱՂԻԿԸ**

Համազգային Մակու-Քային Ընկերակցութեան Գառնական Իգիտական Քասերախուսքը, 19, 20, 21 Մայիս 1987-ին, Գէլլուսի Կրկնական Քասերախուսքին մէջ ներկայացուց «Փշուած լեզու»-ան Քասերակի մը, Քրանսերէնի Թարգման-

ութեամբ եւ բեմադրութեամբ Գր. Յարժ Սարգիսեանի:

Թասերակի կանչել կրկու անգամ ժանտան պայութիւն ստեղծել է մէջաւոր Թասերակի կը կամարն ժամանիկ եւ զուարեութեան վառ

ժը ժխան - Փարիզի պուլիտիկոսները - ուրիշներ թատրոնը կը կամարան Վոստոզալ-բիւնը գրգռող, խզի յուշարար մը, ընկերային վարձակալները պարզաբանող մը, զբան մը յուսանառութեամբ եւ խուսարին զԷմ, տանար մը՝ մարդկայրեան վերջինն (ձ. Պ. ՇՕ)։ Գաւազնի Բոֆիլիանի Հիման թատերախումբը, որ իր սեռերը կը կրէ այսօր, այս վերջին ըմբռնու-տով Հիմնում թատերախումբ մըն էր, որ եր-կայ մամանակ, ըլլա՛յ Բոֆիլիանի զեկամարու-թեան տակ, ըլլա՛յ Յ. Մարգրիտեանի՝ ծառայած է այդ նորաստեղծն։

Զինք կարծեր, թէ խումբը կարէք ունէր Վիլամալիկին նման, Փարիզեան պուլիտիկո-սու կատարակութեան սխրեականները զսեպնայ թատերակ մը ընծարդելու։ Համապայսին Մշա-կաթիան ընկերակցութեան նպատակներուն խո-տար կամեմտող այս թատերակի ընթացութիւնը մէ մէկ նպատակ կը բերէ հոյ բմբնու։ Հայ բնժը շուրջ մեծ թիւ մը թատերախումբերու, թատե-րաբարձներու, որպէսզի կարելի ըլլայ մտածել, թէ սարսուտի ու մշակութի պահպանման, պր-նկարարեան թատերախումբերը իրենց պարտա-կանութիւնը կը կատարեն սրբին, թող շահի մը թուժեր ոչ, ժողովրդական հասարակ զուար-ճութեան պահանջներուն զսեպում տանք։ Եւ-ման պահանջներուն առում սուսնը կը մատու-կարարէ սրգին ՅԻՆՇՄԸ, պէտք է որ թա-րոնը մնայ իր բարձրութեան վրայ։

Նիւթին մասին այս փորձադասութիւնները արժանապարծ կտայ, սակայն բնագրութեան ու խաղաղութեան։ Իս Բոֆիլիան խումբն ու իր զեկամարը՝ Պր. Ժ. Մարգրիտեան, բաւարար փոր-ձասութեան ու կարողութեան ունին խումբին շնորհաւոր խաղաղութիւնը ըստ սահմաններու մնայ պահելու կամար։ Թող թող սրտի մեղի ընել սակայն, թէ պուլիտիկոսներակ մը ընտ-րելէ ետք, ստերատիկա էր այդ թատերակի հա-մապատասխան ԱՐԱՅ ԿԱԶԱՐԿՈՒԹԻՒՆԸ բերել։ զանդայ էր ընթացքը խաղաղութեան, շահին տակի, ինչ որ միտքեակութիւն բերաւ թատե-րախումբին։

Գանդալութեան եւ նախադասութիւնները է-ցարք եւ սխալ տեղեր կորստեղու ընդհանուր թե-

րութիւնը եթէ մեկ կողմ թողուցք (որմէ զերծ մնային Տիկ. Եանթ եւ Տիկ. Գալմա Գաղազա-եան ժխան) կարելի է ըսել՝ թէ խումբը իր խա-ղաղութեամբ պահեց փորձառու խումբ իր բարձրութիւնը, ներգաշնակութիւնը։ Բոլոր զե-րակատարներն ու կրկան որդ թեմեմաութիւն շե-րել իրենց խաղաղութեան մէջ։ Եւրապայիւրին կամար կարելի է մտածանել այս կամ այն տե-սարանին յանդիմալ յանդ խաղաղութիւնը, եւ շերած նպատակ որդ բարձրութեան մը պահ-պանութիւն։ Պէտք է մամաւոր յիշատակութիւն մը կատարել Օր. Յրիկ Խաչատուրեանի կամար, որ տեսակ մը յայտնութիւն կղաւ իր խաղա-ղութեամբ, սակայն, թատերակի մը մէջ, որ կարելիութիւն չի տար որդ կարողութեանց տակի լրիւ արտայայտութեան։ Պրոֆ Բոֆիլիան զինք տեսնել տակի Նիւթ ու թատերութիւն պա-րունակող թատերախումբու մէջ։

Տիկ. Գալմա Գաղազալեան՝ Ալյուսի զե-րակ, Տիկ. Զ. Եանթ՝ Տիկ. Պենելու, Պր. Մա-գիկ Լիպարիանան՝ առամաւոր Անման, Պր. Գաղազա մանուկեան՝ Եկար, Պր. Դանիլ Գա-լմանան՝ Ռոզի, Պր. Յարութեան Գարիկ-եան՝ Բուէ, Օր. Նալիկ Խաչատուան՝ Միկի փամբողջացնին խումբը, որուն պարտն էր սփռամտորիկը կենդանացնել, որուն վարակի։ ձիւրը չէ որ պարտեցաւ, ինչպէս ալ պարտա շեղու սեղուչս՝ սերտեղան ու շարժադանցաւ կայտնութեանց է տես, կամ թեթեւաբար սե-կարիտութեանց որդու սրբինք։ Իր թուր ու-տիկա սրտին յան մը փորձանցելու համար. ա-մեն բանն առաջ փորձանցելն՝ սրբեղանք պէտք է ըլլար յետոյ կու զայ խաղաղութեանը, որ ցցան ու վարակի պիտի գարնիկ թատերակի ներքին սրբեղք։ Անբարձեղա է նաև սեղանս լիզան, եւ սետր աչխը գործածութիւնը, տեղին շեղատարումը, գրեկողողումը կամ արդա-ցումը. յան մը որ յանտն պակեցաւ այս ներ-կայացման ընթացքին։ Թարգմանութեան մէջ իսկ շոշափելի թիւ մը կը կաղմէին սերտեղան, հայրենին խորթ գարնուանքեր, բառեր։

Յուս յանդ էին անկասկած տեղորմերը՝ նկարիլ Փուլ կիրակոսեանի իրազորմամբ։

Ք. Փ.

ՏԱՐԵՎԱՆ ԲԱԺՆԵԳԻՆ

ԼԻՔԱՆԱՆ 20 Է. ՈՍԿԻ  
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ 7 ՏՈՂԱՐ  
ՀԱՏԱՎԱՅՄԻ 2 Է. ՈՍԿԻ



Վարչութեան հասցէ՝

**G. SASSIONI**

Rue Sélim Boustani, Beyrouth-Liban

digitised by A.R.A.R.@